

Բազմը

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ճ.Ձ. ԵԱԲԲ. ԹԻՐ 11 Ն Ո Յ Ս Մ Բ Ս Մ 1978 Գ Է Կ Բ Ի Ի Բ

Կ. Փ Օ Լ Ա Տ Ե Ա Ն

Կ Ա Պ Ո Յ Տ Թ Ռ Չ Ո Ւ Ն Ը

— թոյլ կու տա՞ս, որ մտնեմ թեւզ...

Քաղցր էր ձայնը, որ խզած էր յանկարծ լուսթիւնը ու վաճան քարացած կանգ առած, անկարող բայլ մը աւելի տանելու:

Ո՞վ կրնար ըլլալ արդեօք, ա՛յդ ժամուն, ա՛յդտեղ...

Անօրինակ վախ մը պրկած էր իր շիզերը, հակառակ այդ ձայնին քաղցրութեան: Ձէր նշմարած նոյնիսկ, թէ ի՛նչպէս մօտեցած էր իրեն: Կ՛ուզէր հարցնել, թէ ո՞վ էր: Ձէր համարձակեր: Ձէր համարձակեր նոյնիսկ նայել անոր: Վաճանի շրթները կը դողային ու քրտինքի տաք կաթիլներ կը խառնուէին հիմա դէմքին փակած ձիւնի փաթիլներուն:

Տարօրինակը ա՛յն էր, որ բոլորովին անծանօթ չէր իրեն այդ ձայնը: Ո՞ւր լսած էր զայն, ե՞րբ...: Անկարելի էր ճշդել: Նո՞ր ըլլալու չէր: Հնարոյը շեշտ մը ունէր որովհետեւ. եւ իրեն հասած էր հետաւոր արձագանդի մը նման: Մանօթ սակայն, յուզի՛չ: Յուզականոթեամբ բոլոր այն ձայններուն, որոնք չկան այլեւս, լսած են ընդմիջ:

Վաճան կը սպասէր, որ ան շարունակէ իրօսակցութիւնը, անոր մտին աւելին իմանալու համար: Կը սպասէր, ճիշդ է, խոր անձկութեամբ, բայց նաև հետզհետէ անոյ հետաքրքրութեամբ մը: Ան կը շարունակէր լռել սուկայն, շուքի մը պէս անձայն ու աներեք իր կողքին:

Պահ մը վաճանին այնպէս թուէցաւ, որ ա՛ն, իր միակ նախադասութիւնը արտասանելէ հոգ մեկնած էր... Բայց կա՞ր անոր ձեռքը, որ միշտ ամուր կը սեղմէր իր թիւը:

Ի՞նչ անեղծուած էր այս: Եւ առջի դիշերունէ ի վեր, այս է՛նչ ար-

տասովոր օր: Իրակա՞ն էին այդ բոլորը, թէ՛ իր անգիտակից վիճակին արդիւնք: Ո՞ւր կը գտնուէր ինք եւ ի՞նչ կ'ընէր գիշերային այս ամայութեան մէջ: Ու ժա՛նաւանդ ո՞վ էր ան, ի՞նչ կ'ուզէր իրմէ:

Գլխուն ու կուրծքին ցաւը, որ անհետանալու վրայ էր գրեթէ, սկսած էր դարձնալ սաստկանալ, անտանելի դառնալու աստիճան: Այդ սուր ցաւը սկսած էր արագօրէն տարածուիլ ամբողջ մարմինին մէջ, կուրծքին, ստամոքսին, աղիքներուն: Պիտի պայթէ՛ր սիրտը, եթէ քիչ մըն ալ շարունակուէր այս անձկազին սպասուածը: Վահան ուզեց շարժիլ, յառաջանալ: Ուղեց խօսիլ, դառնալ անոր կողմը: Ձկրցա՛ւ... Մարմինը ցիցի մը պէս դաժմած կը մնար սառած ձիւնին վրայ: Վիզը չէր կրնար շարժիլ այլեւս, ո՛չ աջ, ո՛չ ձախ: Կապարի ծանրութեամբ հսկայ սաւան մը իջած էր ու հետզհետէ աւելի կը ճնշէր կուրծքը:

Ուղեց նստիլ: Կեցած ակզր նստիլ:

— Հանդա՛րտ, հանդա՛րտ...

Ո՞վ էր խօսողը, ի՞նք թէ ան: Ու իր մթնանած ուղեղին մէջ միշտ նոյն հարցումը: Ո՞վ էր ան, ի՞նչ կ'ուզէր իրմէ: Ինչո՞ւ այս անսպասելի միջամտութիւնը՝ իր կեանքին ամէնէն նտկատագրական մէկ պահուն:

Լաւ չէր որովհետեւ Վահան: Բնա՛ւ:

Ու գիտէ՛ր, գիտէր, թէ վերջն էր: Այս անիմաստ, այս յիմար վաղբին վախճանը:

Ժամերէ ի վեր կը թափառէր ձիւնապատ քաղաքին մէջ, խելակորոյս, ինքն իր վրայ ծալուած, մէկ ձեռքը կուրծքին:

Սուր ցաւ մը յայտնուած էր հոն յանկարծ եւ ինք, խենթի մը պէս, գլխարկն ու վերարկուն առած՝ դուրս նետուած: Դուրս նետուած ծխախոտ սրահէն, ուր ժամերէ ի վեր բաժակ բաժակի վրայ կը պարպէին ինք ու իր ընկերները, խեղդելու համար հրակէզ ցաւերը կեանքին, որոնք չունէին չափ, չունէին սահման:

Ու ահա՛, այդպէս, յուսարեկ, խորտակուած՝ անցած էր քաղաքին տմայի փողոցներէն, ամենամթին նախաղլացու մեքերու անձնատուր:

Կէս գիշերը շատոնց անցած պէտք է ըլլար եւ Վահան՝ հեռացած քաղաքէն: Որովհետեւ ա՛լ չէին հասներ իրեն մարդկային ձայներ, գլխովնէրու ծիծաղներն ու պոռչտուքը:

Ձիւնը դադարած էր: Անոր սպիտակ սաւանը անհունօրէն կը փռուէր ամայի տարածութեան վրայ: Ո՛չ մէկ կենդանի շունչ, ո՛չ մէկ մարդկային հետք:

Ծովը սակայն հեռու ըլլալու չէր: Կը լսէր արվէն ալիքներուն հեշտօրօր մեղեդին:

Կրկին հնչեց անոր ձայնը, միշտ քաղցր, աւելի մտերմիկ.

— Կը հանի՞ս ձախ թիւք ինծի տալ, կը տեսնե՞մ, որ աջք գրազած է:

— Ո՛չ, — պոռաց Վահան, — ո՛չ, կ'ուզեմ վերադառնալ...

— Վերադառնա՛լ, ո՞ւր... .

— Ընկերներուս մօտ...

— Փը՛Փք... այդ խեղճ ու կրակ ծերունիներո՞ւն...

— Ընկերներուս ու նաեւ...

— Փը՛Փք...

— Պէտք է հեռադրեմ...

— Որո՞ւ:

— Քեզի չի խառնուիր:

- Փը՛ֆթ... ո՛վ որ ալ ըլլայ տն :
- Ինչո՞ւ յանկարծ այս շեշտը, ինչո՞ւ այս արհամարհանքը :
- Ո՞ւշ է... ո՞ւշ... Հիմա կը հանձնու տալ ձախ թիւդ :
- Երբ ան իր ուզածը ըրաւ, աւելցուց սառնունք քաղցր ձայնով .
- Ի սրտէ՛ր կը շնորհաւորեմ... :
- Սրբուհի՛, — գոչեց Վահան, յուզումէն դողաւար, — ինչո՞ւ շեշտե՛ր, թէ դուն ես... ինչե՛ր անցան միտքէս :
- Եւ անոր լռութենէն քաջալերուած, բայց միշտ տխուր, ընկճուած .
- Ըսիր, թէ կը շնորհաւորես, ի՞նչն է որ կը շնորհաւորես :
- Պատասխան չկար աւ Վահան, ա՛լ կորսնցուցած ինքզինք, Հեծկըլ-տաղին .
- Վե՛րջն է, Սրբուհի, վե՛րջը... Ա՞յս է որ կը շնորհաւորես :
- Այո՛ եւ... ո՛չ :
- Այո՞ թէ ո՛չ :
- Ինչո՞ւ մտահոգուիլ, ինչո՞ւ սրտմտիլ... պիտի վերջանայ՝ ի՞նչ որ սկսած է, ամէն վաղը, ամէն խոյանք :
- Գիտե՛մ, գիտե՛մ... ամէն երազ, ամէն տառապանք :
- Ամէն ցնորք :
- Այո՛, ամէն ցնորք... աւելի՛ լաւ... Այս յիծար, այս պարտազ կեանքը, պարտապ... Ծո՛ւր այս բեռը, դո՛ր կը կրենք կորաքամակ, առանց Հանոյթի, առանց յաղթանակի... :
- Համաձայն... վերջապէս հասկցար : Կուզեմ սակայն ճշդիլ կէտ մը : Ինչո՞ւ կը յամառիս զիս Սրբուհի կոչել : Ի՞նչ լաւ գիտես, որ ես Սըրբուհիին չեմ :
- Ուրիշ տե՛ն ալ գործած եմ այդ սխալը . չեմ յիշեր : Ինձի այնպէս կը թուի, թէ առաջին անգամն է, որ կը հանդիպինք իրարու, այսպէս, զէ՛մ գիծաց :
- Դա՛րձեալ սխալ . դուն լաւ գիտես, որ Սրբուհիին չկայ այլեւս :
- Գիտե՛մ, գիտե՛մ, աւա՛ղ, կարծեցի սակայն... Ինձի այնպէս թըլ-ւեցաւ, որ անոր ձայնն էր, անոր ձայնին մտերիմ շեշտը, անոր շո՛ւնչը... Բայց քանի որ կը պնդես... ռուսի, եթէ Սրբուհիին չես, ո՛վ ես հապա :
- Իրա՞ւ, չե՞ս գիտեր, թէ ո՛վ եմ :
- Ո՛չ :
- Սիրուհի՛դ :
- Սիրուհի՞ս... ո՞ր մէկը... :
- Բալո՛րը... :
- Ինչպէ՞ս թէ բալորը... չե՛մ հասկնար : Սիրուհիներ ունեցեր եմ, մտոցեր անոնցմէ շատերը . անոնք ալ զիս, շատ հաւանաբար :
- Բալոր անոնք, որոնք չկա՛ն այլեւս :
- Չե՛մ հասկնար, դա՛րձեալ չեմ հասկնար : Պզտոր են աչքերս, ոչըլ-տոր՝ ուղեղս... Ինչո՞ւ կը չարչարես զիս, ազդու՛քս, ի՞նչ կուզես ինձ-մէ... Ի՞՞մ ցաւս ինձի կը բառէ, մի՛ քաշուիք, բացէ ի բաց ըսէ, ի՞նչ կուզես ինձմէ... :
- Շնորհաւորել նախ տարեդարձը, ինչպէս ըսի :
- Ի՞նչ տարեդարձ, զիս ծաղրելու օ՞րը զատար, ես արդէ՛ն... :
- Կեցի՛ր, գո՛ւն... այո՛, գո՛ւն, քիչ մը ետք, առաւօտեան ժամը Հինգին, այսինքն՝ ճիշտ մէկ ժամէն, եօթնամասն տարեդ կը լրացնես :
- Վստա՞հ ես :

— Աւելի քան վառահար: Մեր այս ամենի դարը վեց տարուան եւ վեց օրուան կեանք ունէր, երբ դուն արձակեցիր առաջին ճիւղ: Յունուար վեցի գիշերն էր... Յիսուսի նման, նոյն օրը, նոյն ժամուն...
— Այո՛, գիտէ՛ր, բայց տարիներէ ի վեր ա՛յլ այդ մասին չէի մտածեր: Այդ մանուկին եւ իմ ժիջեւ տարբերութիւնը ա՛յն է, որ ես միայն Ալէկ անգամ չիտաւուեցա՛յ...

— Եստ ճիւղ... ու նաեւ դուն չծնար ազգատիկ մասերի մը մէջ: Լուսազարդուած, շքեղ սրահի մը մէջ կը գտնուէինք: Բոլորին աչքերը ջու վըրադ սեւեռուած էին: Այն արիւնոտ մակոյտին վրայ, որ դուն էիր: Կարեւորը սակայն այդ չէր, այլ՝ ջու սեռը... Հսկայ դերզաստանի մը առջիննէ՛ր, կ'երեւակայե՞ս... մա՞նչ թէ ազնիկ: Եւ այդ խեղճ մտակոյտը մանչ մըն էր, ի մեծ գոհունակութիւն բոլոր ներկաներուն:

— Բայց դո՞ւն... դուն ինչպէ՞ս դիտես այդ մանրամասնութիւնները: Տարիներէ ի վեր ես տարեցարձ չեմ տօնած. ո՞վ պիտի տօնէր, որո՞ւ համար... Մոռցեր եմ նոյնիսկ, որ ապրծր եմ այդքան տարի:

— Երեք քառորդ դար գրեթէ:
— Չարմանալի՛ր, ո՞վ կրնաս ըլլալ արդեօք: Քիչ մը ստալ կարծեմ ըսիր, թէ ժամը շորսն էր: Քանի՞ ժամ է ուրեմն, որ ես կը թափառիմ այս ցուրտ գիշերին մէջ, խելակորոյս:

— Երեք-չորս ժամէ ի վեր, մինչեւ հասար այս ծովափին...
— Եւ դուն կը հետեւէ՞ր ինծի, այդ սրահը ձգելէս ի վեր:
— Եստ աւելի երկար ատենէ ի վեր:
— Ինչպէ՞ս:
— Մնած օրէդ:
— Ինչպէ՞ս թէ ծնած օրէս... ուրիմն դո՞ւն, դո՞ւն...

Վահան, յախուռն շարժումով մը՝ ինքն իր վրայ դարձած էր, ազատած թեւը անոր ձեռքին սեղմումէն ու ցոլուած զիմացը: Երկու թեւերը մեկնած էին ու ամուր սեղմած անոր ուսերը: Տարօրինա՛կ... Դիշերային խաւարին ծոցէն կը ճառագայթէր անոր շանկուցիչ դէմքը: Սեւ, բարակ շղարէ մը կը կրէր միայն մարմինին վրայ իբրեւ հագուստ, առեղծուածային ժպիտ մը իր շրթներուն: Մի՞թիւն աչքերուն մէջ երկու բոցեր կը պարէին:

Մնացին այդպէս անշարժ, երկար պահ մը: Վահան կը գգտր, որ այդ բոցերուն մազնիսական ուժը զինաթափ ընելու վրայ էր դիմք: Մասներուն սեղմուած հետզհետէ սկսած էր վերածուիլ քաղցր շրջանքի մը: Վերածուիլ հեշտազրդիտ սարսուռներու՝ անոր տաք, միտաքայտին մորթին վրայ: Անոր շրթները, հիւթեղ պտուղի մը նման բացուած, զգլխիչ բառեր կը շնչէին իր ականջին: Բայց այդ պահուն, Վահան միայն աչք էր ու գրեթէ չէր լսեր անոր ըսածները: Այդ ձայնը կը թափանցէր իր մարմինէն ներս, խորունկ եւ րաժշտութեան մը նման, կը տարածուէր մինչեւ անոր ամենահեռուոր սահմանները՝ հեշտաբուր ալիքներով:

Ու անոնց մարմինները հետզհետէ կը մօտենային իրարու:
Աւելի յորդ սարսուռ մը ցնցեց Վահանին մարմինը, երբ զարձեռալ լեզու ելաւ այդ առեղծուածային ժպիտը.

— Կը նկատեմ, որ զլխուդ եւ կուրծքիդ ցաւը անհետանալու վրայ է:
— Այո՛, այո՛, կ'ուզեմ մեկնիլ հիմա:
— Ծիգլքական ցաւերը յաճախ խարուսիկ են, ամէնէն կարեւորը անոնք չեն:
— Իմ մեկնիլս կարեւոր է սակայն:

- Հանդա՛րտ, Հանդա՛րտ...
- Պէտք է տեսնեմ ընկերներս, ըսելիքներ ունիմ, կարելոր կարգազրուեցիւններ...
- Ի՞նչ կարգազրուեցիւն: Ա՛լ ի՞նչ կը սպասես այդ կենդանի մեռեալներէն... ասրափելի նաւարկութենէ մը ծովափ նետուած խեղճ ու կրակ խլեակներ:
- Այո՛, մեր սերունդը, ջարդերու մեր զԺբախտ սերունդը...
- Կը բաւէ՞ որքան ծամեցիք այդ բառերը: Անստամ ծերունիներու այդ խղճալի...
- Թոյլ չեմ տար, որ անարդէս իմ ընկերներս, վատեր չենք մենք:
- Աւելի գէշ, կենդանի մեռեալներ, ըսի արդէն...
- Անոնց ըսելիքներ ունիմ, ըսելիքներ...
- Զի՞ բաւեր... Վաթսուն տարի է կը ծամէք ձեր անզօրութիւնը, կը ծամէք ու կը ծամէք ձեր յուսահատութիւնը: Ա՛լ ըսելիք մնաց...
- Այո՛, եւ կարեւո՛ր...
- Փը՛ֆթ...
- Ինչո՞ւ դարձեալ այդ ազեղ բառը:
- Տգե՞ղ, ինչո՞ւ... Ի՛նչեւիցէ, անցնինք...
- Հիմա ինծի ըսէ, թէ ո՛վ ես դու: Ամէն բանի մասին կը խօսինք, բացի կարեւորէն:
- Ամէն ինչ, սիրելի՛ս, ամէն ի՛նչ... քու վերջին խօսքդ, քու վերջին մտածումդ... Ալֆա՞ն եւ Օմեկան...
- Ի՞նչ կը նշանակէ այդ, չեմ հասկնար. պարզ բառերով ըսէ, թէ ո՛վ ես:
- Ըսի, չէ՞, սիրուհիդ, միայն սիրուհիդ, ամէնէն Հաւատարիմը: Հետք եմ եղած միշտ, ամբողջ կեանքիդ ընթացքին: Հետք՝ երբ չես ուղած նոյնիսկ նշմարել զիս, արհամարհած, անգիտացած զոյութիւնս: Հե՛տք՝ առանձնատենակիդ մէջ, սնարիդ վրայ: Ամէն սեղ, ամէն ատեն, ամէն քայլափոխիդ: Երկիւս՝ հիւսած բոլոր երազներուդ մէջ, ու նաեւ՝ անոնց վրալուզումին: Կողքի՛դ՝ յուսահատութեան պահերուդ, խոսվքներուդ, դառանջանքներուդ... Զորս տարի մտնաւանդ, անտպարին մէջ, գլխուդ վերեւ, տիւ ու զիւեր:
- Այն ատեն, ինչպէ՞ս կ'ըլլայ, որ...
- Հասկցա՛յ... դուն քեզի կը հարցնես, թէ ի՛նչպէս կ'ըլլայ այն ատեն, որ աւելի մտնէ չես ճանչնար զիս: Այս էր միտքդ, չէ՞:
- Այո՛, դո՞ւն:
- Մեզի սահմանուած ժամանակին շրջադի՛ր թէ եւ կը սեղմուի, կը նեղնա՛յ... բայց, վերջին հաճոյք մը պատճառելու համար քեզի՛ բացատրեմ: Այս տարօրինակ կացութիւնը պարզաբանող բացատրութիւններ չեն պակսիր: Ընդհակառակն: Անոնց մեծամասնութիւնը կապ ունի նկարագրիդ հետ: Բացառիկ նկարագիր մը, քուկդ: Զօրուոր, անչեղ: Լուսկեայ, յամառ, խորհրդաւոր: Պարզ ու բարդ միանգամայն: Ատակ՝ խանդավառութեան, անսակարհ ու նաեւ անխորհուրդ՝ զոհողութեանց: Այս կացութեան պատճառը, ուրեմն, ամէնէն աւելի հողեկան կատայցդ է: Ու նաեւ պողպատեայ կաղձրւածքդ: Գոնէ մինչեւ այս վերջին օրերը: Այսպէս թէ այնպէս՝ ճիշդ է ուրեմն, որ աւելի մտրմօրէն չենք ճանչցած զիրար: Երբեւիցէ չենք եղած մէկ... Այսօ՛ր է, որ սեղի պիտի ունենայ այդ մեծ խորհուրդը:
- Ի՞նչը:

— Մարդկային կեանքին մեծազոյն խորհուրդը: Անսպարենք սակայն, ժամը կը մօտենայ, ո՞ւր կ'ուզես, որ...

— Ինչե՞ր կ'ըսես, ի՞նչ խորհուրդ, ի՞նչ ժամ... Ի վերջոյ, ի՞նչ կ'ուզես ինձմէ...: Տակաւին չեմ գիտեր, թէ ո՛վ ես՝ կեցած դիմացս, գեղեցիկ՝ զիցուհիի մը պէս, խելացի՞...

— Գնահատանքի խօսք մը, վերջապէս: Ժամը հինգին պէտք է բաժնուրիմ քեզմէ:

— Միանալու մասին կը խօսէիր հասցա:

— Այո՛, եթէ կ'ուզես:

— Հասկցա՞յ... կամաց-կամաց կը սկսիմ հասկնալ... ըսել կ'ուզես, որ ժամը հինգին ուրիշ դործ ունիս: Կասկածած էի արդէն, մեր հանդիպումի առաջին վայրկեանին: Ինչեւիցէ, կարեւորութիւն չունի, թերեւս աւելի լաւ է այսպէս: Յառաջանանք ուրեմն՝ ձկնորսի այդ միայնակ տնակը, հո՞ր, ծովափին, կրնայ մեզ պատսպարել պահ մը: Պարզ է, ինձի համար ա՛յլ ամէն ինչ պարզ...:

— Տեղէզ ինչո՞ւ չես շարժիր այն ատեն:

— Ինչպէ՞տ, հա՞... լաւ չե՞մ... կը տեսնեմ արդէն, որ լաւ չեմ: Ոտքերս առաջ չեն երթար, ու խելքս միտքս անոնց հետ է...

— Մտքիդ, մտքիդ, ա՛յլ մի շարշարեր խեղճ ուղեղդ:

— Գիտեմ, բայց չեմ կրնար... ընկերներս... դաւակն, զաւակն մանաւանդ:

— Սկսա՞ր նորէն:

— Այս պահուս կ'ուզէի ըլլալ ծովերէն անդին, ծովուն վրայ:

— Ի՞նչ կայ ծովուն վրայ:

— Ա՛հ, ծովը, ուրիշ բան է ծովը: Բուրբուրի անգիտակցարար չէր, որ քայլերս դիւ հոս առաջնորդեցին: Անբնական դարձած է այս մեր Երկիր կոչած աղբանոցը: Մովը, ծովը, յարաշարժ, մշտանորդ... Իսկ հո՞ս, անշարժութիւն, կե՛ղտ, մա՛հ:

— Բարի չես ինձի հանդէպ: Ի՞մ ներկայութիւնս է այդ մթին մտածումները քեզի ներշնչողը: Մի՛ վախնար, մի՛ մտահոգութիւն: Թեւեղտաւ մէջ պիտի մոռնաս դասնութիւններդ, ցաւերդ: Պիտի բժշկեմ քեզ համբարներու ջերմութեամբ:

— Օ՛, ա՛յդ...: Ներէ՛ ինձի, ազու՞րս, ներէ՛ ո՛վ ալ ըլլաս: Ա՛յ չեմ հաւատար ո՛չ մէկ բանի: Այդ բոլորը կեղծ, այդ բոլորը սուս: Եւ հոս, թոյլ տուր ըսեմ իմ կարգիս... Վը՛՞՞ր...

— Ուրախ եմ, որ կը պահես մտքիդ թարմութիւնը մինչեւ վերջ: Սըխայի մէջ ես սակայն ինձի հանդէպ: Կայ բան մը, որ պէտք է լաւ դիտանաս, ամուր դրոշմես ուղեղիդ մէջ. ձեմ մէկ համբարս ամբողջ կեանք մը կ'արժէ:

— Ամբողջ կեանք մը:

— Երևոյ՞ վերահասու կ'ըլլաս. հիմա քալենք, փիլիսոփայելու ժամը անցած է արդէն շատոնց:

Սկսան յառաջանալ. ա՛ն՝ աշխոյժ, ուրախ. Վահան՝ զլիւրիկոր, մտահոգ: Միշտ մտահոգ՝ կանգ առաւ ձկնորսի տնակին առջեւ, մինչ կ'ընէ ներսն էր արդէն եւ զինք կը կանչէր իր կախարդական ձայնով.

— Եկո՞ւր...

Վահանի ականջը այդ կնոջ ձայնին էր, ոչ մէքը՝ ծովուն: Պզտիկ լոյս մը սկսած էր պլպլալ հոն: Ուշացած ձկնորս մը, հաւանաբար: Ծովը սկզբ...

սած էր արևկոծիլ: Բարձրադիր արեքները կը շաչէին՝ մթին խարակներուն զէմ փըրուելով: Կրակներու մէջ էր սակայն իր մարմինը: Մէկը միւսէն զօրաւոր, իրարու հակադիր բազմաթիւ մտածումներ, կայծակի արագութեամբ կը խաչածուէին իր ուղեղը: Ահաւոր երկընտրանքի մը մէջ էր - խոյանալ դէպի ծո՞ւլ, թէ նեաուիլ զինք կանչող այդ գեղանի կնոջ դիրկը:

Ա՛լ գիտէր, թէ իր առնելիք որոշումը, ա՛յս կամ ա՛յն պարագային, ճակատագրական պիտի ըլլար իրեն հոմար: Ինչո՞ւ, չէր կրնար որեւէ բացատրութիւն տալ: Վստահ էր սակայն, թէ այդ այդպէս էր:

Դէպի տնակը քայլ մը առնելու վրայ էր, երբ ծովէն յառաջացող լոյսը, յանկա՛րծ, աւելի պայծառացաւ: Լուսաւոր նշաններ կ'արձակէր անիկա, կ'ուզէր հաւանաբար իրեն բաներ մը հասկցնել: Բայց Վահան անկարող էր հասկնալ այդ լեզուն: Մէկ բան բացայայտ էր: Այդ լոյսը զինք կը փնտռէր:

Վերջին անգամ լսեց ներսէն հասնող ա՛լ քիչ մը նուաղած, թախանձազին հրուէրը.

— Ինչո՞ւ կը տնտնաս, աղուո՞րս, անպարէ՛...

Նաւակէն դուրս նետուելն ու իրեն մտնեալը մէկ եղաւ: Տարօրինակ լրացուր մը կար ձեռքը: Զայն բռնած էր իր դէմքին բարձրութեան, ուստի ինք չէր տեսներ անոր դէմքը: Շնչահատ ըսյց դո՛ւ՛՛ ան արտասանեց -

— Քանի մը վայրկեան ետ, ամէն ինչ վերջացած էր. առաքելութիւնս ըսրը ինկած:

Երիտասարդ ձայն մըն էր, առողջ, ինքնավստահ:

— Ո՞վ ես, — կրցաւ շնջել Վահան:

Իրբև պատասխան՝ ան բաւականացաւ իր ըլլացուցիչ լրացուցիչ հետացընկել իր դէմքէն:

Ձեր սխալած, զանգրահեր պատանի մըն էր, նիհարակազմ բայց ջըղուտ: Աղուոր աչքեր ունէր: Քանի՞ տարեկան կրնար ըլլալ: Դժուար էր ճշդել: Բուրիկ էր եւ մարմինին վրայ՝ նաւաստիի կապոյտ երիզուտը հաղուտ մը: Ամէնէն հետաքրքրականը ձեռքի լրացուցիչն էր: Թռչնածեւ, անծանօթ մեկուղի մը ձուլում, զօրաւոր շողարձակումներով: Վահան իր կեանքին մէջ այդպիսի լրացուցիչ չէր տեսած:

— Ո՞վ ես, — կրկնեց, նայումաճք լրացուցիչն:

— Զճանչցա՞ր:

Եւ անուշ փայտ մը լուսաւորեց անոր զրուիլի դէմքը:

— Ո՛ւ, — տատամտումէ մը ետք զրուիւր շարժեց Վահան, — իսկ այդ ձեռքի՞նդ...

— Մեր գինանչանն է, շխալոյտ քաչուերս:

— Զե՞ր...

— Ահապարենք հիմա, յետոյ կը բացատրեմ: Այդ անպիտանը կրնայ անդրադառնալ միջամտութեանս ու թերեւս փորձէ...

— Ո՞վ է ան, ինծի կրնա՞ս ըսել, թէ ա՛վ է այդ կինը:

— Այդ հարցումիդ պատասխանել՝ ինծի չ'իյնար: Կ'ենթադրեմ ուսկայն, որ վտանգաւոր մէկն է, թշնամի մեղի: Քանի որ հրամայում էր ինծի անպայման ապառիկ քեզ անոր ճիրաններէն ու ապահով անց հասցնել:

Այդ տղեկը, հաւանաբար, Վահանի կարծածէն աւելի տարիք ունէր: Կը խօսէր ծանրախո՛հ, փորձառու անձի մը պէս, ինքնավստահ: Անոր հանդէպ անկեղծ հիացում մը ծնած էր Վահանին մէջ, առաջին վայրկեանէն: Ու անկէ ի վեր ուշի ուշով կը գիտէր մանաւանդ անոր դէմքը:

- Ան իր աղուոր աչքերը վեր առաւ, ու խոհուն.
- Արհոււ Հոգի տմէնէն աւելի պիտի ցաւէին, եթէ ձախողէի տաաքելու թեանս մէջ:
- Արո՞նք են այդ երկու Հոգիները:
- Նախ Ասպետը: Ինծի կը թուի, թէ վերին աստիճանի կարեւոր առաքելութիւն մըն էր անոր ինծի վստահածը: Իրուունը շունչի չյաջողելու:
- Ո՞վ է Ասպետը:
- Քեցի կ'ըսէ ինք, եթէ յարմար տեսնէ:
- Իսկ երկրորդ անձը:
- Չհասկցա՞ր տակաւին... Այդ երկրորդ անձը, ինչպէս կ'ըսես, կ'ա եմ...

Այդ վայրկեանին տարրինով բան մը տեղի ունեցաւ. Վահանի մէջ: Յորդ սարսուռ մը ցնցեց իր մարմինին բոլոր մասերը միաժամանակ. ջրիցքը պրկուեցան, աչքերը լայնցան, շրթները սկսան զողալ: Ուղեց պոռաւ. ուղեց նետուիլ անոր վրայ, դայն սեղմել իր կուրծքին. ու արտասուել, արտասուել, երկա՛ր, ուրախութեան: Պարսպուիլ՝ իր մէջ կուտակուած բոլոր խեղճութեան: Այս բաներէն ո՛չ մէկը կրցաւ ընել: Աչքերը սեւեռուած կը մնային անոր յուզուած դէմքին, շրթներուն, աչքերո՛ւն...

Իրեն անծանօթ չէր անոնցմէ ոչ մէկը: Վահան ա՛լ վստահ էր, թէ կը ճանչնար այն բոլոր գիծերը, տրտայախութիւններն ու շունչը, որոնք անոր անձը կը կաղմէին: Տեսած էր դայն յաճախ, բայց ո՛ւր, բայց ե՛րբ...

- Դո՛ւն, — կ'մկմաց Վահան, — դո՛ւն...
- Ուրիշ բան չկրցաւ ըսել: Ան կեցած էր հանդարտ իր դիմաց, շարժման ժպիտ մը աչքերուն, ըսելիքներ հաւանաբար՝ շեղուին տակ:
- Մէկ բան յոտակ էր այլևս Վահանի համար. ան զինք կը ճանչնա՛ր:
- Իր աչքերը սկսած էին պղտորիլ ու կը զգար, որ կը թրջուէին անոնք Հեռզհետէ: Անոր սրտայայտ դէմքը կը դողդողար հիմա՝ դիտուած արցունքներուն ընդմէջէն: Կը դողդողար շարժապատկերի արողունքաց նկարներուն նման, դրսւ ձեռք մը կը ջանար անշարժացնել պատուաբն վրայ, բայց չէր յաջողեր: Այո՛, ա՛յդ ըլլալու էր: Տեսած էր այդ դէմքը Ակարճնու վրայ եւ ո՛չ ուրիշ ձեռով: Չանագան շրջաններու քաշուած՝ շատ մը նկարներու վրայ: Վահան ուղեց իր գիւտին տեղեակ պահել դայն: Բայց ճիշդ այդ վայրկեանին՝ ան ընդոտ վեր ցատկեց, ակնարկ մը նետեց դէպի ձկնորսին տնակը եւ ամենայն ուժով քաշեց իր թեւէն: Սկսան վազել:

- Արա՛դ, աւելի՛ արագ...
- Հեռասպառ հասան ծովագի: Ան միշտ ամուր բռնած էր իր թեւէն ու մերթ ընդ մերթ կը դառնար, կը նայէր ետին:
- Յառաջանանք, — ըսաւ, — մանենք նուակ: Կը հանդուսանաւ երբ հոն բարձրանանք:
- Հեռու չէին արդէն: Ի հարկէ ո՛չ մէկ ընդդիմութիւն Վահանի կողմէ: Ընդհակառակն, ա՛լ ամբողջական վստահութիւն ունէր իր առաջնորդին, իր ազատարարին հանդէպ: Ու քովնոր, մտխոհ կը գնէր դարձեալ անոր դէմքը, մինչ ան, վերագտած իր քաղցր ժպիտը՝ շնջեց իր ակնիկին.
- Ի զուր մի՛ շարշարեր միտքդ, մի՛ վախնար, մե՛նք երկուքս...
- Կանգ առաւ, առանց լրացնելու իր նախադասութիւնը:
- Մե՛նք, — պոռաց Վահան:
- Հին ծանօթներ ենք, նո՛յն...
- Նո՞յն...

— Կը կրենք նո՛յն հոգին, նո՛յն արիւնը...

— Ուրեմն, դո՛ւն...

Վահան, իր կարգին, չկրցաւ վերջացնել իր նախադասութիւնը: Որովհետեւ ճիշդ այդ պահուն, ահաւրի ճիշ մը լսուեցաւ ձկնորսին տան կողմէն: Առաջնորդը իր «Վնգալիսն լսպտերը» անմիջապէս ուղղեց անոր կողմը: Այն ատեն, Վահան յստահօրէ՛ն տեսաւ քիչ մը առաջուան կիներ, ամբողջովին կերպարանափոխուած:

Ան կեցած էր դրան առջեւ՝ եւ իր մերկ թեւերը սպառնադին կը ճօճէր ամէն ուղղութեամբ: Փրփրոտ բերնէն ահաւոր հայհոյանքներ կը ժայթքէին. Սարսափելի էր մա՛նաւանդ անոր դէմքը, աչքերը փոսը ինկած, ախտաները՝ դուրս: Վհուկ մը, կատարեալ վճուկ մը:

Վահանի առաջնորդը ծռեցաւ անոր ախանջին.

— Հասկցա՞ր հիմա... անապարե՛նք, բարձրանա՛նք նաւակ, անտեսուա՛լու ատենը չէ՛:

Մեծ խաղաղութիւն մը իջաւ վրան, երբ նստաւ իր առաջնորդին ջոյց տուած նստարանին, եւ երբ ուժեղ թափով մը ճամբայ ելաւ նաւակը, ճեղքելով յուզուած այրքները:

Յաւի ո՛չ մէկ հետք: Ընդհակառակն, լաւ կը զղար ինքզինք: Թևթև՛, հետզհետէ աւելի թևթև: Յօգնա՛ծ, ի հարկէ: Բայց քաղցր էր այդ յոդնութիւնը: Փայտ մը կը խաղար լըթներուն վրայ, մինչ անզգայարար կը զոցուէին աչքերը:

Կ՛ուզէր երկննայ փափուկ անկողնի մը մէջ ու քնանալ, երկա՛ր, ապահով:

Ու հանդարտած ծովը կ'օրօրէր զինք մօր մը նման:

Քանի կը յառաջանային՝ այդ քաղցրութիւնը կը սարածուէր մարմինին մէջ: Կը տարածուէ՛ր, ա՛յ բնականոն ընթացք առած իր արևան մէջ:

Ու բոլորովին անծանօթ զգայնութիւն մըն էր այդ: Կը ծաղկէր, կը խայտար կուրծքին տակ:

4. ՓՈՒԱՏԵԱՆ

Ա. Գ Ա Ր Ա Լ Է Ք Ե Ա Ն

ՅՈՅՍԻ ԵՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԱՐՑՈՒՆՔ

Փախչող պատկերներու ի՞նչ կրկնակի կրկներեւոյթ,
Ուր կը ծփան կարօտներու հրախաղութիւնները բոլոր,
Գազտնակուռ լուսփեամբ բուրվառելով յոյսի կնդրակը վերջին՝
Ամէնօրեայ սիրոյ եւ անշքունք կարեկցանքի խորաններում աներգ...

Կամբընկէց գետերու ափերուն շարուած՝
Կեսգիշերային անշքունք սէրեր
Եւ պղնձաձայն ճիչեր մանուկներու,
Ուր ես՝ յուզարկաւոր,
Յայսի եւ ճշմարտութեան աչքերով արցունքաբեր:

Անարցունք օրերու ցոլքը անհանգրուան
Խորաններէն աներգ բարձրացաւ կրկին
Ցաւով աստղերու. աստղերու լոյսին,
Ուր կարծես մարդիկ կը շնչեն մեղմիւ,
Կը խշխշան սէր,
Եւ կարծես մարդիկ կ'երգեն շնչահեղձ
Փրկութեան շարականներ անկշռոյթ,
Կը խշխշան սէր,
Եւ կարծես մարդիկ կը տեսնեն արցունք
Ճշմարտութեան ճաթած ու չոր աչքերուն,
Եւ կ'որոնեն սէր,
Եւ կը փնտռեն սէր,
Եւ կ'աղերսեն սէր,
Իսկ սէրերը՝ կախուած անդունդներու ծայրերուն՝
Ամէն օր,
Կը պսակուին կարօտներու անհուն ձայներուն...

ԽՈՒՆԿ ՈՒ ԱՐՑՈՒՆՔ

Ես ապրեցայ օրեր գեհեմ,
Տատանուելով իբրև մառառդ,
Եւ մահուան չափ սխտր էի:
Գեղեցկութիւնն կը մահամար աստուածներու տանարին մէջ,
Եւ մումերը հրակարմիր, Աստուածամօր նկարին մօտ՝
Հառաչալիք թաց բիրբրով կը տանջուէին՝
գիրար կրկնող ցաւերու պէս:



ՍԻԱՄԱՆԹՈՅԻ ՍԷՐԵՐԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՍԻԱՄԱՆԹՈՅԻ Հ Ե Տ

ՎԱՐԳՊԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆ

1906ին մենք ամբողջ ընտանիքով Զուլիցերիա էինք: Գարնան վերջն էր: Մի քանի շաբաթ ժրնեւում անցնելուց յետոյ, ամբան սկիզբը մեկնեցինք լեռները, Վօ Կանտոնի Բալէզ գիւղը, իսայլօ զուլիցերիական սահմանին մօտ:

Զմայլելի մի տեղ էր այդ Բալէզը, — ասենք Զուլիցերիայի ո՞ր անկիւնն է, որ զեղեցիկ չէ, — մայրի անտառներով ծածկուած բարձրաբերձ լեռների լանջին, անլնդախոր ձորեր իր ոտքերի տակ, օձապտոյտ, զեղեցիկ ճամբաներով, կոկիկ, մաքուր շէնքերով եւ խաղաղ, հանդարտաբարոյ, քրտնաջան բընակիչներով:

Ամբան ընթացքում ժրնեւից եւ Լօզանից մի շաբթ բարեկամներ մէկ-երկու օ-

րով այցելութեան եկան մեզ Բալէզ: Ամարանոցային կեանքի միօրինակութեան մէջ միշտ էլ հաճոյք է հիւրեր ընդունելը: Հանելի, ամսական օրեր էին մեզ համար Բալէզում այն օրերը, երբ ժրնեւից կամ Լօզանից բարեկամներ էին գալիս:

Մի օր, ժրնեւից մեզ հիւր եկաւ օրինորդ Սաթենիկ Զ-նը: Օրինորդի ընտանիքին ծանօթ էինք Քիֆլիսից, ուր իր հայրը բարեկեցիկ եւ անուանի հայ առեւտրական էր: Ինքը՝ օրինորդ Սաթենիկը, ինչպէս տաւած են, տիպար հայ աղջիկ էր: Երկարաւուն, ձուածնա դէմքով, հայկական խորունկ, սեւ աչքերով, ալիքածնա, գրեթէ դանդուր, զեղեցիկ մաղբերով, պարզ եւ անեթեւեթ բնաւորութիւնով եւ զուսպ ու զբաւել կանացիու-

թիւնով: Իր թերութիւնը՝ եթէ կարելի է այդ թերութիւն նկատել՝ երիտասարդ եւ զեղեցիկ աղջկայ համար չափից մի քիչ աւելի լըջութիւնն ու ծանրախոհութիւնն էր:

Օրինորդ Սաթենիկի այցելութիւնն ուրախացրեց բոլորիս, մանաւանդ մօրս, որ մեծ քրոջ հարազատութեամբ ու ջերմութեամբ ընդունեց Սաթենիկին: Բալէզում մենք ո՛չ միայն միակ հայ, այլեւ միակ օտարական ընտանիքն էինք:

Օրիոր Սաթենիկի Բալէզ հասնելու յաջորդ օրը մենք երկու ուրիշ հիւրեր էլ ունեցանք: Դրանցից մէկին ես ճանաչում էի Քիֆլիսից — զա բանաստեղծ Դերենիկ Դեմիրճեանն էր:

Միւսը անծանօթ էր ինձ:

Բարձրահասակ, նիւրս, մաքուր անձրուած զէմքով, անուշ եւ արտում ալիւրով 25-30 տարեկան մի երիտասարդ էր նա:

Հայրս ջերմութեամբ ընդունեց նորակիներին, մանաւանդ ինձ անծանօթ պարտին:

— Ինչ լաւ արիք, որ եկաք, Սիւմանթօ, — ասաց հայրս՝ թօթուելով անծանօթի ձեռքը:

Սիւմանթօ՝

Այդ անունը ինձ ծանօթ էր Վերոլալից, որի մէջ, սուտնց շատ ըմբռնելու, կարողում էի նրա տարօրինակ բանաստեղծութիւնները:

Ու անոնք, հսկայածե բանվորները մարմարեղէն Յոյսին, Ղարտատացումներու ժայռերէն իրենց ցափառներն արիւնտծ

Տճգունութեամբ հետ երես երեսի, ինծի ըտին...

Մի ամբողջ օր մեր նոր հիւրերը մընացին մեզ մօտ:

Ճաշից յետոյ, բոլորս միասին սլաքային զայինք զէլի մայրիկ անտառը: Նստակցինք ծառերի տակ, կանաչ խոտերի վրայ եւ մէկ-երկու ժամ անցըրինք հա-

ճելի գրոյցով ու կատակներով: Խօսողները հայրս, մայրս եւ Դ. Դեմիրճեանն էին: Լուռ էին Սիւմանթօն եւ օրինորդ Սաթենիկը: Սաթենիկը, որ ուշադրութեամբ լսում էր, երբեմն մասնակցում էր ընդհանուր գրոյցին: Աւելի լուռ եւ մոռլ էր Սիւմանթօն, որ ամբողջ օրը հաղիւ թէ մի քանի բառ արտասանեց:

Դրան հակառակ իր ընկերակիցը՝ Դ. Դեմիրճեանը, որին Քիֆլիսում իբրեւ շատախօս չէի ճանաչել, այդ օրը, ինչպէս ասում են, արլու էր կտրել: Իր մի քիչ կակազ լեզուով անմեղ խօսում, շարակրատում եւ աշխատում էր զուարճալի պատմութիւններով ուշադրութիւն գրուել: Ձէր կարելի չնկատել, որ երբ Դ. Դեմիրճեանին յաջողում էր իր պատմութիւններիով ժպիտ կամ ծիծաղ կերպով իր ունկնդիրներին եւ, մասնաւորապէս, օրինորդ Սաթենիկից, իր խօսելու նոսնոցը կրկնապատկում էր: Դրա փոխարէն Սիւմանթօն աւելի մոռլում եւ շրթունքները իրար էր սեղում:

Վերջ ի վերջոյ կարելի է ասել, որ այդ օրուան «հերոսը» եղաւ Դ. Դեմիրճեանը: Բայց Սիւմանթօնի արամագրութիւնը աննկատելի կերպով ազդել էր բոլորիս վրայ: Այդ օրուան երկրորդ կէսն անցաւ ոչ այնքան զուարթ եւ հաճելի մթնոլորտի մէջ, որքան առաջին կէսը: Երեկոյեան, Սիւմանթօն եւ Դ. Դեմիրճեանը մեկնեցին:

Սիւմանթօնից իմ ստացած տպաւորութիւնն այն էր, որ նա իր բանաստեղծութիւններէ նման մօռլ եւ ստեղծաւածային է:

Յաջորդ օրը մեկնեց նաեւ օրինորդ Սաթենիկը:

— Ինչո՞ւ էին եկել, — հարցրեց մայրս հօրս, ակնարկելով Սիւմանթօնին եւ Դեմիրճեանին:

— Ինչո՞ւ պիտի գային որ, եկել էին մեզ այցելութեան, — պատասխանեց հայրս:

— Սիւմանթօն եւ, եկել էին Սաթենիկի համար, — թեթեւ քմծիծաղով վրայ բերեց մայրս:

Երբ աշունը, Կովկաս վերադառնա-

լուց առաջ, մի քանի օրով ժընեւ գնացինք, Միամանթոն այնտեղ չէր, մեկնել էր Փարիզ: Այնտեղ էին Գ. Դեմիրճեանն ու օրերով Սաթենիկը: Գ. Դեմիրճեանին չտեսանք, բայց օրերով Սաթենիկը եկաւ «բարեւ երթ» մաղթելու եւ մեր միջոցով էր ծնողներին լուր ուղարկելու:

Մինչեւ 1913ը այլևս առիթ չունեցայ հանդիպելու Միամանթոյին: Այդ ամառը մենք կրկին ընտանիքով Չուիցմորիա էինք, բայց Միամանթոն այնտեղ չէր: Օսմանեան Սահմանադրութեան շրջանն էր, եւ Միամանթոն, մեր մտաւորական ընտրանիի հետ՝ Պոլիս էր:

Օրերով Սաթենիկը վերադարձել էր Թիֆլիս եւ ամուսնացել Թիֆլիսի Համակրելի հայ մտաւորականներից մէկի հետ:

Թիֆլիս էր վերադարձել եւ նոյնպէս ամուսնացել Գ. Դեմիրճեանը, որ Սաթենիկի ամուսնու հետ պաշտօնավարում էր Հայ Օրերագաց Յովհաննեան դպրոցում, միւս կողմից՝ զբաղւում էր դրականութեամբ: Այն հետաքրքրութիւնը, ղէպի Սաթենիկը, որ տարիներ առաջ Գ. Դեմիրճեանին ժընեւից մինչեւ Բալէզ էր ընկել, ըստ երեւոյթի, մարել էր: Այդ տարին, Պոլսում վախճանուած Ս. Չաւարեանի աճիւնը, նոյեմբերի վերջը փոխադրուեց Թիֆլիս՝ Քաղուելու Համար. Ս. Չաւարեանի աճիւնի հետ, իբրեւ պատույ յուղարկ, Պոլսից Թիֆլիս եկաւ Միամանթոն:

1910ից մինչեւ 1918 Թիֆլիսի հայ դպրոցների աւագ սերնդի շուրջը եւ թեւէ տակ հաւաքուած էր երիտասարդ զբաղէտների եւ զբասէրների մի ստուար խումբ: Այդ խմբի մէջ էին երիտասարդ

բանաստեղծ Գառնիկ Քեալաշեանը, բանաստեղծուհիներ Արմենուհի Տիգրանեանը, Լէյլին, Վարսենիկ Աղասեանը, թատերագիր Վ. Վալադեանը, հրատարակողներ Ա. Ջամաշեանը, Վահան Խորէնին, Ղ. Աղայեանի որդին՝ երգիչ եւ երաժիշտ Մուշեղ Աղայեանը եւ իր փոքր զոյրը, օրերով Լուսին, Յովհ. Թումանեանի աւագ որդին՝ Մուշեղ Թումանեանը եւ իր զոյրերից երկուսը՝ Այսինն ու Նուարդը, այս տղերիս հեղինակը եւ տակաւին ուրիշներ՝ երիտասարդ աղջիկներ ու աղաներ, որոնք աւելի կամ պակաս չափով կապուած էին այս խմբին: Այս երիտասարդների հանդիպումների տեղերն էին, բացի զբաղան երկրորդների սրահներից եւ զբոսայգիներից՝ Յովհ. Թումանեանի, երբեմն Աղայեանի եւ մեր տները:

Յովհ. Թումանեանի եւ Ղ. Աղայեանի աղջիկների հետ բարեկամութեան հետեւանքով այդ խմբի հետ կապուած էր նաեւ նախկին օրերով Սաթենիկ Ջնի կրտսեր զոյրը՝ Մաշան: Մաշան իր մեծ քրոջ հակապոտիկերն էր: Մաշան չուներ Սաթենիկի ո՛չ լրջխառնութիւնը, ո՛չ ըզզաստութիւնը, ո՛չ էլ անսթեւեթ կանայիութիւնն ու անկեղծ պարզութիւնը: Գեղեցիկ էր Մաշան, քմայքստ, պէսասէր, ինքն իր գեղեցկութեան վրայ սիրահարուած եւ տղաների ու շաղկապութեանով շփացած: Ամերիկեան flapperի տիպարներից: Մեր մէջ կանայք ազգային նուաստութեան զգացումով աւելի են տարապսուտ քան այրերը: Թիֆլիսի աղջիկանց ոտն գիծնադիրներէն մէկուս կրթուած եւ առօրեան ազդեցութեան ենթարկուած Մաշան աւելի պակաս հայուն էր, քան Սաթենիկը:

Երես առած եւ ինքնազուլտ աղջիկ էր Մաշան: Ինքն էր պատմում, թէ մի անգամ կպել է հօր դուխը, թէ՛

— Հայրի՛կ, մի քիչ փող (չբրամ) տուր, դնամ արտասահման, աշխարհ տեսնեմ:

— Էդ ինչե՛ր ես խօսում, աղջի՛կս, ի՞նչ արտասահման, ի՞նչ բան. դու, հօ՛,

արդէն բոլոր սահմաններն անցել ես, —
պատասխանել է Հայրը:

Այսպէս էր Մաշան

Թիֆլիսում Սիամանթոնին շրջապատեց երիտասարդներէ այս խումբը, որք մէջ էր եւ Մաշան: Սիամանթոն, միւսներէ կարդին ծանօթացաւ նաեւ Մաշանի հետ եւ զիտցաւ, որ Մաշան Սաթեանիկի թոյրն է:

Սիամանթոնի Թիֆլիս հասնելուց շատ չանցած՝ նկատելի եղաւ նրա հետաքրքրութիւնը դէպի Մաշան: Սխալում չեմ լինի, եթէ ասեմ, որ Սիամանթոնի հետաքրքրութեան մէջ դէպի Մաշան դէր կատարեց ո՛չ միայն Մաշանի գրաւութիւնը, այլև՝ ա՛յն հանգամանքը, որ նա Սաթեանիկի թոյրն էր: Այսպէս թէ այնպէս, ակնհերեւ էր Սիամանթոնի ուշադրութիւնը դէպի այդ աղջիկը: Եւ, Թիֆլիսում իր անցրած մի քանի ամիսներէ ընթացքում, Սիամանթոնին շատ յուճախ տեսնեց Մաշանի հետ, լինէր զս երիտասարդներէ այդ խմբակի հաւաքոյթիւնը ընթացքում, թէ երկսով առանձին:

Դժուար է, սակայն, երեւակայել ուրիշ մի զոյգ, որ կազմուած լինի իրարու այնքան անհամապատասխան նկարագրերներով, որքան Սիամանթոն եւ Մաշան:

Սիամանթոն ոտքից գլուխ հայ, ըզգայուն հոգիով բանաստեղծ, արուեստի երկրպագու, իր հայրենիքի տառապանքով ապրող, հայութեան ըմբոստ ոգին մտաբանող, ապագայի տեսիլներով խանդավառ մի քուրմ, մինչ Մաշան ուռուական ազգագրախոհող ազդեցութեան ենթարկուած, հայկական արժէքները օտարներին ստորադասելու հակամէտ, պճնասէր, քմայքոտ եւ ընթացիկ վայրենիանով ապրող մէկ ծագիկ միւսը թրուշող Թիֆլիսիկի նման: Երեւի անիմաստ չէ Փրանսիական այն առածը, թէ զծայրայեղութիւններն են, որ իրար են գալիս, մանաւանդ սեռերի փոխարարութիւններէ մէջ:

Մաշան, ըստ երեւոյթի, երբեք լըրջորէն չտարուեց Սիամանթոնով, բայց եւ երբեք չմերժեց Սիամանթոնի ուշա-

դրութիւնը: Եւ արդէն ո՞ր կինն է, որ մերժում է սեւէ այր մարդու ուշադրութիւնը: Կնոջ համար միշտ էլ հաճելի է այր մարդու ուշադրութեան առարկայ լինել, ո՛վ ուզում է լինի այդ այրը: Խընդիրը միայն հաճոյքի աստիճանի մէջ է, — մէկի ուշադրութիւնից զգացած հաճոյքը կարող է աւելի կամ պակաս լինել, քան ուրիշ մէկի ուշադրութիւնից: Անուանի եւ սիրուած բանաստեղծ, շրջապատի գուրգուրանքին առարկայ Սիամանթոնի նման մէկի ուշադրութիւնը չէր կարող չզգուել Մաշանի նման աղջկայ ունայնատրութիւնը: Եւ առանց լրջութիւն գնելու իր վերարեմուծքի մէջ դէպի Սիամանթոն, Մաշան շարունակեց նրան կապուած պահել իրեն: Նա այդ անուժ էր աղջկական խաղ ու նազով, ոչնչանքով եւ հմայքով:

Թիֆլիսի հայ գրողներէ ընտանիքներից մեր ընտանիքն էր, որ տարիներ առաջ ծանօթ էր եղել Սիամանթոնին: Եւ թէեւ հայրս այդ տարի բացակայ էր Կովկասից եւ գտնուժ էր Եւրոպայում, Սիամանթոն այնուամենայնիւ ամէնից աւելի յաճախ մեր տունն էր այցելում: Մեզ մօտ էր հաւաքուած նաեւ վերը յիշատակածս երիտասարդներէ խումբը:

Յովհ. Թումանյանի տունը մեր տունից հարկու 5-6 բուլէի հեռաւորութեան վրայ էր: Մի անգամ Սիամանթոնի հետ պայմանաւորուեցինք մի օր, մի քանի հոգով այցելութեան գնալու Թումանյանին: Պիտի հաւաքուէինք նախ մեր տունը: Որոշուած ժամին եկան բոլորը, բացի Սիամանթոնից: Շատ չանցած՝ եկաւ նաեւ Սիամանթոն, Մաշանի հետ: Քիչ ետք, երբ պատրաստուած էինք մեկնելու, Մաշան յայտարարեց, որ ինքը տրամադրեւ չէ դալու մեզ հետ: Մաշան, անտարակոյս, դիտէր, թէ ինչո՞ւ էինք հաւաքուել եւ ո՞ւր պիտի գնայինք: Եւ եթէ ինքը տրամադրեւ չէր միանալու մեզ, պէտք չունէր մինչեւ մեր տունը դալու եւ վերադառնալու: Պարզ էր, որ իր մտադրութիւնը փոխած էր մեր տունը հասնելուց յետոյ:

Սիամանթոն փորձեց համոզել, խոս-

աանալով երկար չմնալ թուժանեանք մօտ, եւայն, բայց ի դուր, Մաշան մընաց անդրդուելի:

— Դուք զնացէք, ես չեմ գայ, ես տուն կը դնամ:

Ասաց եւ պատրաստուեց մեկնելու: Միամանթոն էլ ոտքի ելաւ:

— Ներեցէք, բայց ես ալ պիտի չկրնամ այսօր մեզի հետ գալ. ուրիշ առիթով մը կու գամ:

Եւ, գլուխը կախ, մեկնեց Մաշայի ետեւից:

Մեր ծրագրած այցելութիւնը թումանեանին ջուրն ընկաւ:

Պարզ էր, որ Մաշայի արածը չըմայք էր: Նա ուզեց մեր ներկայութեամբ փորձել իր ուժը Միամանթոյի վրայ եւ իր մտքում անուշտ գոհ էր, որ յաջողեց իր խօսքն առաջ տանել:



Մայիսեան մի օր էր, երբ կրկին մեր տունը հաւաքուել էր երիտասարդաների խումբը: Այդ օրն էլ եկաւ Միամանթոն անխուսափելի Մաշայի հետ: Միամանթոն իրեն հետ բերել էր նոր լոյս տեսած «Աւարք Մեքրապոյից կրկու օրինակ՝ մէկը մեզ, միւրը՝ Յովհ. Թումանեանի համար:

Միամանթոն շատ չուզեց մնալ մեզ մօտ եւ հագիւ տասնեւհինգ-քսան րոպէ էր անցել, երբ առաջարկեց, որ իրեն ուղեկցենք թումանեանի տունը:

— Այստեղ լաւ է, էլ ի՛նչ ենք գընում թումանեանի տունը, — առարկեց Մաշան:

— Համաձայն եմ, որ հոս աղէկ է, օրինորդ Մաշա, սակայն ես կ'ուզեմ «Աւարք Մեքրապոյ» կարդալ թումանեանին, — ասաց Միամանթո:

— Այսօր պիտի յկարդաք այդ դիրքը, — չմայքոտ եւ վճռական յայտարարեց Մաշան:

— Բայց, օրինորդ Մաշա, — սկսել ուզեց Միամանթո:

— Բայց-մայց չկայ, ես չեմ ուզում, որ կարդաք, — Միամանթոյի խօսքը կարեւոր վրայ բերեց Մաշան եւ, տեղից վեր կենալով՝ ձօռեցաւ Միամանթոյին, — տեսնեմ ձեր այդ դիրքը:

Միամանթոյի ձեռքը մնացել էր թումանեանին յատկացուած «Աւարք Մեքրապոյ» օրինակը: Մաշան առաւ «Աւարք Մեքրապոյ» Միամանթոյի ձեռքէն, վերադարձաւ իր տեղը, գրքոյկը գրեց աթոսին եւ ինքն էլ նստեց վրան:

— Չպիտի՛ կարդաք:

Չեմ կարծում, որ ուրիշ ոեւէ մէկին Միամանթոն ներէր այդպիսի անփափկանկատ վերաբերմանը դէպի իր գիրքը: Բայց այդ փափկանկատութիւնն աւնողը սիրուն, չմայքոտ աղջիկ էր եւ Միամանթո միայն ժպտաց անյգէս՝ ինչպէս կը ժպտայ յանցանք դորձած եւ ներողամտութիւն հայցող երեխան: Կարծես թէ յանցաւորն ինքը՝ Միամանթոն լինէր եւ ոչ թէ այդ երես տուած աղջիկը:

Պահ մը տիրեց մի անխորժ լուծութիւն: Ծատ չանցած՝ Մաշան ոտքի ելաւ մեկնելու: Միամանթոն հետեւեց նրան:

Մաշան շարունակում էր իր խաղերը Միամանթոյի հետ:



Յունիսի երկրորդ կէսին էր, որ Միամանթո թիֆլիսից Պոլիս մեկնեց: Երտխուր առաջելութիւնը՝ Ս. Չաւարեանի յուզարկաւորութիւնը վաղուց կատարուած էր, Կոմիտան էլ բաւական տեսել էր եւ այնեւ կարեւոր պատճառ չունէր աւելի երկար մնալու:

Միամանթոյի հետ ամէնից աւելի մօտ եղողներինցս եւ նրա հետ յաճախ հանդիպումներ ուղղուներից եւ ոչ մէկի մտքով անցել էր հետաքրքրուել նրա եւ Մաշայի բարեկամութեան աստիճանով: Բայց զրոյից դիտելով իսկ չէր կարելի չնկատել, որ Միամանթոն հնամուտ էր

յուսարեկուած ասեմ, թէ հիտոթափու-
լած Մաշայից (*):

Պոլիս հասնելուց յետոյ Սիամանթոն
մէկ բաց նամակ եւ իր քննադատական
գործոյ հատորն էր ուղարկել ինձ: Սա-
էր վերջին լուրք Սիամանթոյից: Սիա-
մանթոն Հազիւ Պոլիս Հասած, սկսուեց
Ատաշին Համաշխարհային պատերազմը
եւ Կովկասը կտրուեց Պոլսից: Դեռ սա-

րին չբուրած՝ Հայկական ցասումի եր-
գիչը Հայ բնաբանի հետ ընկաւ բորե-
նի թուրքի եաթաղանի տակ:

Եթէ Սիամանթոյի եւ Մաշայի բա-
րեկամութիւնը աւելի լուրջ լինէր, դրե-
թէ անկասկած է, որ Սիամանթո աւելի
երկար կը մնար Կովկասում: Եթէ Յու-
նիսին մեկնելու փոխարէն Սիամանթո
գէթ 4-5 շաբաթ աւելի երկար մնար Կով-
կասում, պատերազմը արդէն սկսուած
կը լինէր, եւ նա անշուշտ այլեւ չէր
շարժուի իր տեղից: Ու թերեւս մինչեւ
այսօր ողջ լինէր Հայկական դարձուբան-
քի եւ վրէժի ցասկոտ երգիչը:

ՎԱՐԴԳԷՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

(*) Հակասուի իր բնութագրեան եւ տարի-
քին, Մաշան շատ եաշուով դատարարից իր Են-
տագայ կիտմբը: Անտոնոսցու եաշուով՝ ամուս
եւ դրամ աննցող, բայց իրենից տարիքով շատ
մեծ մեկի հետ: Մի քանի տարի է, ինչ ճարտիկ
օրտոյ Մաշան այրի է:

67 2002



Պ. Հ Ե Ր Ե Ա Ն

Դ Ո Ղ Ն Ա Ր Ա Ր Մ Ա Ն

Դազն արաքման
 — յանցաւորի պէս —
 Շարժման կը մզէ
 Ոչնչագործ մասներըս յոգնած,
 Որոնք ծուլօրէն կը հաին դէմքս՝
 Թարթիչներուս կուտակուած աւօրեական փռչիները սրբելու:

Ջուարճալի գուրգուրանքն այս,
 Որ թնաստով կատուններս
 Թռչլու մանկերով կ'արտայայտուի,
 Ինչպէ՞ս կրնայ մոռցնել, թէ
 Մենք գաւակներն ենք արիւնտ դարուն,
 Ամօթի՛ դարուն,
 Որ երկաթէ բեւեցներով մեր կանչերը կը շոյէ,
 Եւ հակառակ իր կամքին,
 Եւ հակառակ մեր կամքին,
 Մեր մտքին մէջ դեռ կը քացուի այն պաստառը սրտայայզ,
 Ուր սպանակից
 Կորիզային սուտքի կողքին՝
 Հրքիւններն ու թիթեռները
 Տագնապահար կը նակատին...

Ճ Ի Զ Ն Ա Ր Ա Ր Մ Ա Ն

Պատեհապաշտ յոյզերէն
 Եւ սատրանալիք նաւաւներէն
 Գիտակցութիւնս յոգնեցաւ հորէն:

Այսուհետեւ
 Կը մերժեմ կիսել
 Եւ բերկրանքը ձեր,
 Որուն ետին
 Հաւանական տանջանքներ կան աւերիչ:

Ազմկայոյց համերգներու
 Ձեմ մասնակցիք ես արդէն,
 Որովհետեւ՝
 Հագիւ մօտեցած
 Խրախնամքի ձեր լիառատ սեղաններում՝
 Սպասներէն ու ճայներէն
 Ողբերգական առաջայր ճիւղեր կը լսեմ...

Տ Ե Ն Դ Ն Ա Ր Ա Ր Մ Ա Ն

Անպատսպար
 Եւ անորոշ սահմաններով
 Էութեանս տարածքին՝
 Սիւներ փուլ կու գան,
 Կ'աւերուին հողեր,
 Քաղաքներ կ'այրին,
 Կը խամրին մէկ-մէկ
 Տեղերն արարման...

Հոս՝ ե՛ւ անցեալն է,
 Ե՛ւ ներկան, ու գալիքը շուարած,
 Որոնց միացման կէտին ալեկած՝
 Հաւաճուեր են աշխարհի
 Շնչաւորներն անասուն,
 Մարդերը ամէն,
 Աստուածները խռտներամ,
 Եւ վերացած՝ կ'ըմբռնեն
 Անկումներու
 Ամէնօրեայ փառատօնը քարքարոս:

Իսկ ես,
 Փռխանակ միջատելու,
 — Էութիւնս ըլլար կարծես ինձմէ անկախ գոյութիւն —
 Հանդիսատես ամբողջին մէջ
 Ջուր կը ջանամ զետեղել անձս անընտել...

ՊԵՏՐՈՍ ՀԵՐԵԱՆ

Բ Ք Է Պ Ա Պ Ճ Ե Ա Ն

Վ Ե Ր Ո Ն Ա

«Այս ուղեցոյցին դերմաներէնը ունի՞ք», հարցուց Գազիկ, աւելի շիտակի՛ր՝ հարցնել ուղեց: Իտալերէն չգիտնալուն՝ բերնէն միայն «Լինկուա թետեսքա» բառերը ելան եւ նոյն ատեն մատնունէց կայարանին այս փոքր զբաղմունքներէն ուղեցոյցը: Գազիկ շատ ալ հանդիստ չէր զգար ինքզինք: Առաջին անգամն էր, որ համարձակած էր երկիր մը ճամբարդել, որուն լեզուին չէր տեսնուիր: Գրայմանուր, որ քառասունի մօտ իտալացի մըն էր, «Լինկուա թետեսքա» իմանալով՝ այնպիսի՛ հայեացք մը ուղեց Գազիկին, որ կարծես ան ձախ ձեռքը պրտք՝ Վուրսք մը եւ ալ ձեռքը դարձնուրի հոկայ բաժակ մը բունած ըլլար: Երեսը նշմարելով՝ շուտով հասկըցաւ, որ ան չէր պատկաներ թոյթոնական ցեղին: «Սի, սի», ըսելով սուաւ ու զածր:

Աստուծոյ կանուխ ելած եւ, շողակառքով իրեն ծանօթ վայրերէն հեռանալով՝ եկած էր այս քաղաքը, անցնելով հիւսիսէն հարաւ եւ կամ հարաւէն հիւսիս երկիրը ճեղքող ճորերէն: Կանուխ արթըննալու սովորութիւն չունէր, անանկ որ՝ արտնջալով ճամբայ ելած էր: Ոչ ոք եւ ոչ մէկ բան ստիպած էր իրեն, եթէ մէկդի դնենք իր անորոշ հետաքրքրութիւնը, անորոշ, որովհետեւ ճշգրիտ չէր դիտեր հոս գալուն պատճառը:

Կայարանէն դուրս ելլելէ առաջ թերթեց ուղեցոյցը՝ տեսակ մը յայտադիր կազմելու համար: Յետոյ դուրս ելաւ եւ կեցաւ հրապարակին սկիզբը: Յատուկ բան մը չտեսաւ հոն: Յաճախորդ սպասող թաքսիները կարելի էր տեսնել առէն

կողմ. հոս ալ, ըստ սովորութեան՝ կար հերոսի մը արձանը: Քառուր անունով մէկը: Քաղաքին կեդրոնը, ուր երթալ կ'ուզէր, քաջիով բաւական հեռու էր: Որոշեց հանրակառք մը նստիլ: «Փիացցա...» ըսելով՝ վերջապէս դուռ յարմար դիժը:

Երեսները շարժուն էին. այս եզրակացութեան եկաւ Գազիկ: Իր դիմացը նստող մարդը այնպիսի՛ արտայայտութիւն մը ունէր, որ զինք կը վախցնէր: Անքերը մեծ էին, շափէն աւելի մեծ, քեթր սուր էր, շափէն աւելի մեծ եւ սուր: Կարծես մօտալուտ յեղափոխութեան մը մասին կը խօսէր իր երկու կողմերը նըստող տարիքոտ մեղսակիցներուն հետ: Ընթացքով կողմի, մերթ մայս կողմի մեղսակիցին կը մօտենար եւ փոփոխում, աչքերու վայրենի թաւալումներով վերջին հրահանգները կու տար: Գազիկ վայրկեանի մը համար վախցաւ այս մարդէն, անոր աչքերէն ու քիթէն, անվերջ եւ անհասկնալի հնչիւններու հեղեղէն: Մարդուն քովիները թմրեցուած դաճակներու նման կը նստէին տեղերին անմայն: Երբեմն ճիգ մը կ'ընէին ինքզինքնին բառերու անվերջ հեղեղէն, աչքերէն եւ սուր քիթէն ազատելու համար, որ անհնազանդութեան պարագային կրնար դործի անցնել եւ ոտուածով մը մխրճուիլ տպատամբին կողք, դաշտնի մը նման: Գազիկ կատչեցաւ ուղեցոյցին: Քաղաքը ձեռքերուն մէջն էր, ամէն ինչ հասկնալի էր շնորհիւ «Լինկուա թետեսքային»: Այս կերպով դուռ ան իր փոստահարութիւնը օտար այս միջավայրին մէջ:

Ամենասակնանոն պատուար նոյնիսկ

աւելի սկզբնակէտ մը: Եւ Գաղիկ իր սկզբնակէտին, Փիտցցա Տէլլ էրպէին վըրայ կանգնած՝ շուրջը գիտեց: Նեղ ու երկար հրապարակ մըն էր ստիկա, հին, պատմական նշանակութիւն ունեցող շէնքերով շրջապատուած, որոնց մասին Գաղիկ իր ուղեցոյցին մէջ կարգադրած էր, որ անոնք շատ դեղեցիկ են: Այդ մէկը յնձարեց, ան աւելի տեսաւ մրտա, կէս լքուածի ասպարտութիւն ձգող շէնքեր եւ հրապարակին ճակատը Մ. Մարկոսի առերժ, որ մէկ թաթովը Վենետիկի կանոնադրերուն: Բայց համբերատար վերոնայցիները, ակախից ունենալով Մայր Բնութիւնը՝ քերած էին այդ կանոնները եւ կ'ապրէին անկանոն: Վենետիկի վերոնայցիները, մրմնջեց Գաղիկ ժպտով մը եւ մտաւ հովանոցներուն տակ:

Հրապարակը ծածկուած էր հովանոցներով, որոնց տակը վաճառականներ զանազան իրեր կը ծախէին: Գաղիկ բան մը դնելու նպատակով եկած չէր: Ոչինչ նմարելով՝ պտտեցաւ, երկինքը նոյնիսկ չտեսաւ, զրեթէ ամբողջ հրապարակը ծածկող ամպհոտներինընտան ասիէն դուրս ելաւ եւ, առանց մեծ ողբերութեան՝ լուսանկարեց այս ու այն, — Մարկոսի առերժը, զգնդեցիկ շէնքերուն քանի մը հոտը, եւ այն: Նստած դեռ գուռները յրացած սրճարանի մը դուրսի աթոռներէն մէկուն վրայ՝ այսպէս աւելի աւտան էր: Որոշեց, թէ ո՛ր կրնայ երթալ առանց շատ յոգնելու: Չիչզ մտք կար Փիտցցա տէի Սինյորի մը: Նեղ անցքէ մը անցաւ եւ կեցաւ Ահաւասիկ առջեւն էր հրապարակը: Պոլիկ, ճշգրիտ քառակուսի եւ մտերիմ հրապարակ մըն էր, չարս կողմէն բարձր եւ հին շէնքերով շրջապատուած: Աւելի մեծ սենեակի մը ասպարտութիւնը կը թողուր, առանց աստատուելու Այդ մտերիմ մթնոլորտը եւ իկամ հրապարակին բարձր գուլաշափութիւն էր, որ զինք հրապարակը առաջին անգամ: Ի՛նչ հիանալի բան էր կանոնաւորութիւնը, ճշգրտութիւնը: Սկսեալ կտրուած կտրուած շրջիլ հրապարակը: Նշմարեց զանազան շրջաններու պատկանող

չինութիւններ, շրջեցաւ եւ նշմարեց անոնցմէ մէկուն որմանկարները, շրջեցաւ եւ տեսաւ միտին պատուհանի զարդերը, շրջեցաւ եւ տեսաւ հրապարակին կեղծները: Գանձուղ արձանը՝ Տանթէին արձանը: Եւ յետոյ սկսաւ լուսանկարել եւ իւրաքանչիւր շինութեան հատուածներ լուսանկարած ատենը ուշադրութիւն ըրաւ, որ միայն գուլաշափ մասեր արձանագրէ մէջտեղը կամար մը, երկու կողմերը կեղծունէն զրեթէ նոյն հեռաւորութեան վրայ գտնուող երկու կիւտնդերներ, մէջտեղը դեղեակներէն մէկուն մուտքը, աջը եւ ձախը երկու սիւներ նոյնպէս կեղծունէն գուլաշափ, եւ այլն: Այս զրեթէն զինք թիչ մը կ'անհանգստացնէր, աւելի լաւ պիտի ըլլար, եթէ ամէն ինչ ըլլար ճշգրիտ, պահուէր գուլաշափութիւնը, բայց...: Բաւական ատեն մը եւ անդով լուսանկարեց: Իրեն նայող անգամ չկար: Փիտցարիայի եւ Գաֆէ Տանթէի սպասեակները վարժուած էին մրջինը անգամ լուսանկարող դրօսալըրջիկին, իսկ իր գործընկերները՝ միւս դրօսալըրջիկները, նոյնպէս զբաղած: Ուղեց Տանթէն լուսանկարել իր ուղած ձեւովը, այսինքն՝ ամբողջովին: Բայց ի՛նչ որ ալ ըրաւ, չյաջողեցաւ: Փորձեց հրապարակին զանազան անկիւններէն: Չեղաւ: Այս ինչ մեծ մարդ է Տանթէն, լուսաւ:

Բաւական աշխատած էր արդէն, ճաշ կրնար ուտել: Ապսպրեց սիւնցա մը եւ սպասած ատենը նշմարեց, որ պատուանդանին վրայ մեծ տառերով Վոթա դեմեդրադիա քրիսթիանոս եւ տակը, նոյնպէս մեծատառ՝ Վոթա դոմենիսթաոս գրուած էր: Վատիւր չեմ ունեցած Տանթէն ճանչնալու, բայց ամէն պարագայի ան ո՛չ համայնավարներուն, ոչ ալ միւսներուն համակիրն է, խորհեցաւ Գաղիկ: Իսկապէս, Տանթէն, ալ ձեռքը կզակին, ձախ թեւը մարմինին ալ կողմը տարած՝ կը մտածէր անորաչ: Եւ զինք քաղաքական այս բարդ մտածումներէն ազատելու յաջող քաղաքի վարչութիւնը պարտաճանաչօրէն ուղարկած էր աշխատաւոր մը, որ սպանդով եւ այլեւայլ հեղուկներով

զինուած՝ կ'անհետացնէր իրեն ուղղուած հոշորը: Հաւանաբար աշխատաւորը, որ պարզ պաշտօնեայ մը պէտք է ըլլար, չէր կրահեր այս հակասական խնդրանքներուն մէծ բանաստեղծին համար ներկայացուցած մտանգը, որովհետեւ ան կը մաքրէր շատ զանդաջ շարժումներով, իւրաքանչիւր շարժումէն ետք երկարութեան հանգչելով, անցնող-դարձողին հետ խօսելով: Ետեւ սահած գլխարկովը, որ մտկերուն մեծ մասը դուրս կը ձգէր, կարմիր եւ մոտ զիջովը եւ, մա'նաւանդ՝ մեծ պէտքով ան շափլիկեան շարժանկարներու հերոսներէն մէկուն կը նըմանէր: «Այո, — ըսու Գաղիկ, որ դեռ փիցցային զաւուն կը սպասէր, — այս, ճիշդ շափլիկեան հերոս մը»: Պէտք, որ փակցուածի էրևոյթ ունէր, երթալ էւ գայն քննելու աստիճան հետաքրքրութիւնը դրձուած էր: Գաղիկ, որ զուսայ ե բուրովին լուրջ մէկն էր, այս մտածումով սարսուռաց:

Փիցցան լաւ չէր: Աշխատաւորը դաջած էր: Տանթէն մաս-մաքուր դեռ կանգնած՝ կը մտածէր նոյն կեցուածքով: «Այս անգամ կոչըրուն մասին պիտի խորհի անշուշտ», ըսաւ Գաղիկ սրամիտ ժպիտով մը: Իր երեւակալութեան այս փայլուն վայրկեաններուն սրամիտ ժպիտը միշտ երեսին վրայ էր: Թերեւս ան, հին աքսորաւոր, կը խորհի, որ ինչպէ՞ս կրնայ փախուստ տալ բարձր պատերով շրջապատուած քաղաքովայրէն, կամ աւելի լաւը. Հաւանաբար կը խորհի իր զրեղաբայներուն մասին, որոնք նոյնպէս աքսորեալ, չկրցան դրի առնել իրենց Աստուածային արքերգութիւնը: Այս վերջին ենթադրութիւնը իր արդէն նուազած արտօնակը — կէս շոր փիցցան կարելի չէր արտօնակ զրգող կերակուր նկատել — բոլորովին գոցեց:

Ճաշը շատոնց վերջացած էր, բայց Գաղիկ դեռ կը շարունակէր իր խորհրդածութիւնները, այս անգամ Քաթիկ Տանթէի աթոռներէն մէկուն վրայ նըստած: Մթնոլորտը, սեղանները, հայելիները, լուսակալները վաղ վերածնունդի իրերը չէին, այլ 19րդ դարուն կը պատ-

կանէին: Եւ սպասեակը, որ իր շքեղ ամբիւնով քաղաքակիրթ դարաշրջանի մը ներկայացուցիչը ըլլալ կը թուէր, դարապարտ թէյը: Գաղիկ նշմարեց ուշիմ աշակերտներու, ամերիկացի տարեց ըզբօսալիկներու խումբեր, որոնք եկան եւ անցան Տանթէին առջեւէն. նշմարեց երիտասարդ կին մը եւ իր զաւակը եւ քանի մը բոսլիկ համար նայեցաւ աւելի կնոջ, քան Տանթէին: Տեսակ մը պարսպութիւն կը զգար Գաղիկ իր մէջ, անորոշութիւն մը: Ան՝ որ միշտ նպատակի մը պէտք ունէր բան մը ընելու համար, աննպատակ նստած էր Հոս եւ զարժանալին այն է, որ կարճ ժամանակի մը համար զգացած էր տեսակ մը դճուհուհուութիւն:

Անցաւ նեղ փողոցներէ, որոնք իր նախկին տան նրբանցքին մտերմութիւնը ունէին: Բայց դուռները սենեակներու դուռներ չէին, այլ՝ տուններու: Հոս, դարերը, իրարու ուս տուած՝ կը դիմադրէին ասորեային: Տեսաւ իրենց ուղեցոյցները ուսումնասիրող զբօսալիկներով լի վանքեր, միջնադարեան կամուրջներու վրայէն ինքնաշարժներով անցնող ասպետներ, քանդակներու եւ իւրաքանչիւր կարներու կողմէ դրաւուած Հզօր բերդեր եւ տեսարժան վայր դարձած հին եւ կեղծեցիներ: Վերջը, ոտքերը ուսած, կարկաղատի կիսանդրիին առջեւ նստեցաւ եւ մտածեց այս երկար պտոյտին հունձքին մասին, որ քանի մը լուսանկարներէ կը բաղկանար: Գոհ չէր: Երթայէն աւելի յայտնի կը դառնար իրեն, որ բուն մը կը փնտրէր, բայց ի՞նչ եւ ո՞ւր:

Բարեկամը տուփը երկարած էր իրեն վառ աչքերով: Ընդհանրապէս գոհարար-մանաւնեւոր դորձածած տեսակէն տուփ մըն էր: Գաղիկ բարեկամէն դճարեղէն յսպանելուն, զարմացած-կեցած էր վայրկեանի մը համար, յետոյ շուտով բացած էր զայն, մէջէն թուղթէ սրբիչի մը պըլլումը քարի կտոր մը երեւան հանելով: «Քեզի համար բերի», ըսած էր բարեկամը, որ դերմանացի մըն էր, «քեզի համար բերի», որ տեսնես: Այս բոստ պահուն երե-

սը լուսաւորուած էր Ժպիտով մը եւ ուշիժօրէն նայած էր Գաղիկին: Ենորհակալութիւն յայնան էր, բայց տեսնելով, որ Լրեւի անորոշ արտայայտութիւնը դժնայում չէր տուած Բիւտիկերին — այս էր անունը բարեկամին — անսպասուած էր խորատէս սպաւորուած մէկը տեսած էր շարժանկար մը այդ նոյն վայրէն, որ յայնի էր իր բազմաթիւ եկեղեցիներով եւ բերդերով, քաշուած ճարդոց կողմէ, որոնք զար ժողովելու կարելիութիւնը շունչէն եւ ուստի հզօր դիտակներու իրենց հազարկած տեսիլներով կը դաճանային: Գաղիկ հիացած էր արդի օֆթիշային դարձիքներուն, որոնց շնորհիւ իրադրութեամբ էր շարժանկարը: Հոս էր ուրեմն, որ առաջին անգամ իրարու հանդիպած էին եւ սիրահարուած, այս պատուհանին առջեւն էր, որ Բ. խոստովանած էր Ժ.ին իր սէրը: Գաղիկ վերջին յոյսով մը եկած էր հոս, երկվայրկիւսներ մը համար զգալով, որ ամէն ինչ հոս պիտի հասկնայ կամ ոչինչ: Այս անգամ պէտք չէր ըլլար այնպէս՝ ինչպէս եղած էր: «Ես կը տեսնեմ կղերը եւ արքունիքը՝ երկուքն ալ զմայլապէս տարազներով, կը վայելեմ սրբատուր խոնկին բուրմունքը, կ'ապրիմ աստուածային ծիսակատարութեան հրամայով», ըսած էր իրեն Բիւտիկեր: Գաղիկ տեսած էր միայն խորտակուած եւ դատարկ կեկեղեցին եւ անոր մէջ թռչող թռչունները, հստուրտացած էր ամէն կողմ զիջուած սղբը, յուսախաբ եղած էր Ս. Փրկիչի Փոնթոքրաթոր կեկեղեցին դայէն: Այս անգամ ամէն ինչ տարբեր պիտի ըլլար: Հին Գաղիկը չէր, որ Բ. եւ Ժ.ին պատմութիւնը դիզէր նոյնպէս հանրապետարանի մէջ կարդացած Մօրսի ալքաբենին, Էտիսոնի գիւտին, հիւլէական ուսմբին եւ արեւի արբանեակներուն վրայ:

Ո՞ր սենեակին մէջ Բ.ն եւ Ժ.ն իբր վերջին անգամ տեսած էին, արդեօք ամէնէն վերե՞, թէ երկրորդ յարկի սենեակներէն մէկուն մէջ: Ե՞րբ եւ ո՞ւր պարտադրած էր հայրը Ժ.ին Փարիզին հետ ամուսնանալ, տան ո՞ր կողմը Հայր Լաբենցոն իրեն թելադրած էր համաձայնած ձեւացնել եւ քնարեր դեղը առնել եւ, վերջապէս, Ե՞րբ եւ ո՞ւր կ'լլած էր Ժ.ն թմբեցուցիչը: Այս եւ սուր նման հարցումներ սաստկացող արագութեամբ կը շրջէին իր գլխուն մէջ, երբ ան սենեակէ սենեակ, յարկէ յարկ կ'անցնէր, մոտնալով ժամանակին հոսքը: Գլուխը կը կոտտար: Իրեն հետ միասին շրջող երիտասարդ աղջիկներէն ո՞ր մէկն էր Ժ.ն, արդեօք մուտքը նստող մա՞րդն էր Ժ.ին հայրը, որ իրեն ուղղուած հարցումներուն կը պատասխանէր քաղաքավարօրէն: Գաղիկ չկրցաւ հաւատալ այս կարեւորութեան: Անիկ խիստ եւ վրէժինդի մէկը ըլլալու էր ան: Երիտասարդներէն ո՞ր մէկն էր Բ.ն, Հայր Լաբենցոն, Փարիզը: Վերջնական որոշումի մը չկրցաւ գալ: Կրնային բոլորն ալ Բ.ն ըլլալ եւ կամ չըլլալ: Այս երիտասարդ աղջիկները կրնային Ժ.ն ըլլալ եւ կամ չըլլալ: Անոնք իրարու կրնային սիրահարուած ըլլալ եւ կամ չըլլալ: Այս տուներ կրնար Ժ.ին տուել եղած ըլլալ եւ կամ չըլլալ: Բ. եւ Ժ.ն կրնային իրարու սիրահարուած ըլլալ եւ կամ չըլլալ: Բ. եւ Ժ. կրնային գոյութիւն ունեցած ըլլալ եւ կամ չունեցած: Քարը միայն զար էր, այդքան: Այս եզրակացութեան գալով՝ հանգստացաւ: Եունչ մը քաշեց: Քարը միայն զար էր, այդքան: Տունէն դուրս ելաւ:

Կամուրջին վրայէն անցած ատեն զարը զրպանէն հանեց եւ գետը նետեց: Գրավաճառը այս անգամ երեսը չնայեցաւ:

ՐԱՃՅԻ ԲԷՊԱՊՅԵԱՆ

Շ. Բ Ե Օ Ր Օ Ղ Լ Ե Ա Ն

Շ Ն Զ Ո Ղ, Դ Ի Մ Ա Կ

Մենք մենեկ ենք, աշխարհ եկել
 Ո՛չ թէ թուալ-երեսալու խորհուրթածրու,
 Այլ լինելու՛ն,
 Ա՛յն լինելու, ինչ կու՛նք իրօք:

Պ. ՍԵՆՔԻ

Կեանքդ դո՛ւն բաժնէ, միջին հաշիւով,
 վայրկեաններու,
 ու անոց գումարին ևս չու օրերուդ համաձայն,
 Դիմակներ գնէ դուն քեզի (պահեստի),
 Որ անբաժնէտ պահան,
 Փոխես դիմակդ,
 Կամ դիմակ դնես...

Իսկ եթէ կ'ուզես,
 Մի՛ մասնատեր կեանքդ,
 Մի՛ հաշուեր,
 Դիմակ մի՛ գնել,
 Մտածելով, որ ամէն վայրկեան կրնաս գտնել դիմակ,
 Դիմակներու ազատ-համարձակ առուտուր կայ,
 Եւ՝ դիմակի ճոխութիւն,
 Նար-հին,
 Սուղ-աժան,
 Մաքուր-աղտոտ,
 Մեծ-պզտիկ,

Զեղչ-վաճառքով,
 Խնդացող-լացող,
 Տեսակ-տեսակ ճաշակի ևս քակի համաձայն
 Դիմակներ կան, —
 Այնքան տոնն, որ

Ապրող գիտկներ կան, —
Լիրանան ըլլաւ քէ Խտալիս,

Քոտ տ'իվուար,
Աւտրալիա,
Արժանքին,

Կամ՝ մինչեւ իսկ Լուսին...

Եւ մարդիկ, այսպէս, ամէն վայրկեանի համար
Նորակերպ գիտակ կը գնեն,
Հացէն,
Միսէն,
Ջուրէն,
Լոյսէն,
Շունչէն աւելի,
Անոնցմէ առաջ քէ անոնցմէ վերջ-
Վերջին նորոյթի գիտակներ կ'ուզեն.
Որովհետեւ, ի վերջոյ,

Փիւք-ափը կը մնայ նոյնը,
Սկաւառակը կը փոխուի միշտ,

Որովհետեւ՝

Երգը կը մնայ նոյնը,
Ռեկվեզիտու պստը, ընկույնու ձեր կը փոխուի միշտ,

Որովհետեւ՝

Կեանքը կը մնայ նոյնը,
Ապրելու եղանակը կը փոխուի միշտ,

Որովհետեւ՝

Քամերան կը մնայ նոյնը,
Ֆիլմը կը փոխուի միշտ...

Եւ, հաշտուած այս ձեւակերպութեանց հետ,
Մարդիկ
Գիտակներուն գոյները, ձեւերը, տեսակները
Կը փոխեն ամէն վայրկեան,
Որովհետեւ՝

Կը մախրանալեն գիտակաւորել գիտկը,
Քան շունչ տալ անոր...

Իսկ ես, գիտակավաճառի տեսնով,
Գիտակ կը ծախեմ,
Բայց ի վերջոյ,
Ես կը մնամ անգիտակ,
Հակառակ անոր, որ

Ամենին աւելի ե՛ս պէտք ունիմ դիմակի:
Այժմ ե՛ս պէտք ունիմ դիմակներս՛:

Բայց ի՛նչ, այլևս, շուկան փակ է:
Դիմակներս՝ սպառած:
Եւ դե՛ռ՝ ես իմ ծախած դիմակներս արդէն չե՛մ գործածեր:
Գիտե՛մ՝ անոնց անկարութիւնը.
Դիմակավաճա՛ռ եմ, ի վերջոյ...
Ես՝ որ պէտք էր դիմակ գնէի պահեստի:

.....
.....
.....

Ես ամբողջովին դիմակ պէտք էր դառնայի:
Ես ամբողջովին դիմակ պէտք է դառնամ:
Ես ամբողջովին դիմակ պիտի՛ դառնամ:

.....
.....

Ես, կամաց-կամաց, դիմակ կը դառնա՛մ արդէն:
Դիմակ չմնաց չափս...
Արդէն դիմակ չկա՛ր չափս...
Էութիւն, իսկութիւն, ինքնութիւն մնաց.
Միայն ա՛նց կար արդէն ինձի հաւատարիմ.
Ու ես, հիմա, անվերապահ,
Միայն իրե՛նց կը փոքրիմ: (Փիֆ-ափիս, Էրզիս, կեանքիս, քամերայիս):
Եթէ կ'ուզես
Դու՛ն ալ
Մի՛ մասնատր կեանքդ,
Դիմակ մի՛ գնիր.
Դուն քե՛զ գնէ,
Դուն քեզ գտի՛ր,
Ինքնութեանդ արմատներում՝
Էութեանձ վերադարձիր,
Եթէ կ'ուզես,
Եթէ կրնա՛ս...

ՇԱՀԻ ՓԷՐՈՐԼԻԵՆՆ

Հ Ե Ր Մ Ա Ն Հ Է Ս

Մեր նախորդ թիւով ներկայացուած Աթոնէն Արթուրի սերուադիժէն ետք, սահմանիկ Արթուրի ժամանակակից անիժեալ ուրիշ հանճար մը, այս անգամ գերմանական դրականութենէն, Հերման Հէս, որ դարձեալ զիչ, չբռէաւ համար գրեթէ անժանօթ անժան է մեր ժամուրին ու ընթերցողին համար:

1946ի Նոյեմբերի գափնկիկը Հերման Հէս էր երկրին երկտասարգութիւնը ձգողութեան մէջ պահելէ ետք, երկու անգամ փոթորիկեց աշխարհի երկտասարգութիւնը, չնչ մը 1955ին, Անգլիոյ օգտագրած երկտասարգները իրենց կուսքը հրոշակելին զիժք, իսկ տարւ տարի անց՝ Միտցհալ Նաճանգներու հիփփիները: «Հիփփիներու մէջ սուրբ մը»: Այս հանգամանքը անգրագարճու հանէ Հէսի գործերուն աստղանակին վրայ: Երեք տարուան (1968-1971) մէջ «Ստեփանվալփաէն ծախուեցաւ մէկ միլիոն օրինակ, «ԵՏ-Միան»՝ Նոյնպէս, «Սիտխարրաշն անցաւ երկու միլիոնը, Նոյնպէս եւ «Նարսիս եւ կոլտուսոս»: Երևոյթ մը: Իր գլուխ-գործոցը՝ «Ստեփանվալփ», որուն ստեղծող կերտեցան երաճառական ու թատերական խումբեր, գրական ընթերցողներ, գրախոսութիւններ:

Սուրբէ Հէսի գլուխ-գործոցէն երկու տարբեր հատուածներ, որոնք զստահարք մէն գրականութիւն պիտի պատճառեն ընթերցողին:



Ս Տ Ե Փ Ը Ն Վ Ո Ւ Լ Ֆ Ի Թ Ե Զ Ը

Իր սեփական բժրունումներուն պատճառով՝ Ստեփանվալփ բացարձակօրէն կը գտնուէր քաղցրնիտական աշխարհէն դուրս, բռնի որ ո՛չ ընտանեկան կեանք ունէր եւ ո՛չ ալ ընկերային ձգտումներ: Ան ինքզինք բացարձակօրէն առանձին կը զգար եւ ամուրի, իրրեւ տարօրինակ անձ մը եւ տխուր ճշդ-նաւոր մը, երբեմն ընդհանուրի վազըուղիէն դուրս, առանձնաշնորհալ որոշ կարողութիւններով, որոնք հանճարի զիժ մը ունէին իրենց մէջ: Գիտակցարար վերէն կը նայէր հասարակ մարդոց վրայ եւ հարբա կը զգար ինքզինք, որ անոնցմէ մէկը չէր, իայց եւ այնպէս, շատ մը երեսներով, իր կեանքը ամբողջովին սովորական էր: Ան հաշիւ ունէր զբաժանած մէջ եւ կ'որձէր աղքատ ազգականներուն: ոչ աչքսուս, բայց եւ այնպէս ունէր յարգուիկը հազուաժաճ մը, հակառակ անոր, որ մասնաւոր ուշադրութիւն չէր ընծայէր հազուա-կուպուստին: Գո՛չ էր, որ լաւ յարաբերութեան մէջ էր ստիկանութեան, տուրքերու գանձիչներուն եւ նման ուժերու հետ: Բացի ստիկէ, ան թաքուն եւ յամառ քաղցրականութիւն մը կը զգար զէպի փոքր քաղցրնի աշխարհը, զէպի այդ անդորը եւ յարգուած առեները, որոնք կոկիկ պարտէզներ ունէին, անմեքճնայի սանդուխներ եւ կը պահէին հանդատաւտութեան ու կանոնաւորութեան ամբողջովին համեառ մթնոլորտ մը: Համէլի էր իրեն

Համար մշակել էր փոքրիկ մոլուքիւններն ու քմայքները, դատ ինքզինք իր-
 բեւ տրատկարդ հանճար մը, բայց երբեք չէր ուզեր, բնա՛ւ չուզեց տարբիլ,
 այսպէս բուռած, կեանքի ա՛յն գօտիներուն մէջ, ուր քաղքենի կեանք գոյու-
 թիւն չունէր այլեւս: Հանդիստ չէր զգար մայրադ կամ մտանայտուուկ ան-
 ձերու հետ, ոչ ալ ոճրագործներու եւ աղօթչներու հետ, միշտ ալ իր քնա-
 կավայրը կ'ընտրէր միջին գտակարգին մէջ, որուն սովորութիւններուն,
 արժեւափերուն ու միջնուրտին հետ կայուն յարաբերութեան մէջ էր, հա-
 կատակ անոր, որ այդ յարաբերութիւնը յաճախ ծառայումով կամ հակադ-
 րումով կը զբտեւորուէր: Աւելի՛ն. ան մեծցած էր զաւտական եւ պահպանու-
 զական տուն մը մէջ եւ կը կրէր անկէ մնացած անջնջելի տպաւորութիւն-
 ներ: Սկզբունքով՝ ան ոչ մէկ առարկութիւն օւնէր պոռնկութեան դէմ, սա-
 կայն, գործնականին մէջ, իրմէ վեր էր պերճազիճ մը իրեն հաւասար նկա-
 տել: Ան ատակ էր սիրելու քաղաքական սերտգործը, յեղափոխականը կամ
 մոլորեցնող մտաւորականը, իր եղբայրը նկատելու երկրին կամ ընկերութեան
 օրինազանցը, սակայն ինչ կը վերաբերէր աւազակութեան, կողողուտին, ո-
 ճիրին ու բռնարարութեան, չէր գիտեր, թէ քաղքենի եղանակէ մը անկախ
 ինչպէս պիտի պիտաւորէր զանոնք:

Այս ձեւով, ե՛ւ մտածումով, ե՛ւ գործնականապէս, իր էութեան մէկ
 կէտով կ'ընդունէր ու կը հաստատէր ա՛յն՝ զոր իր միւս կէտով կը ժխտէր եւ
 որուն դէմ կը պայքարէր: Ընկալեալ բարեբեւոյ քաղքենի տան մը մէջ գա-
 տիարակուած՝ ան երբեք իր հոգիէն չվանկը ընդունուած արժէքները, մին-
 չեւ իսկ ա՛յն տանն, երբ այլեւս գտած էր իր անհատականութիւնը եւ ան-
 ցած մտատեսիլներու եւ հաստատութիւններու պարզ շրջագիծէն անդին:

Արդ, ինչ որ «քաղքենի» կը կոչենք, երբ կը դիտուի իրբեւ սարբ մը,
 որ միշտ կը գտնուի մարդկային կեանքին մէջ, ուրիշ բան չէ, էթէ՛ ոչ հա-
 տատարակուութեան մը փնտտուքը: Մարդկային վերաբերումի անհաշուելի
 ծայրայեղութիւններուն ու հակադրութիւններուն միջեւ ներդաշնակութիւն
 մը գտնելու ձգտումը: Եթէ այս հակադրութիւններէն որեւէ մէկը տունենք,
 ինչպէս սրբութիւնն ու անբարոյութիւնը, այլաբանութիւնը անմիջապէս հա-
 կընայի կը դառնայ: Մարդ աղատ է եւ կրնայ ինքզինք ամբողջովին նստիւ
 հոգեկան հնարաւորութիւններու, աստուածային թափանցման, իտէալին եւ
 սրբութեան: Միւս կողմէ՝ ան հաւասարապէս ինքզինք կրնայ յանձնել քաղ-
 ներու աշխարհին ու միտերու տոփանքին եւ, այս ձեւով, իր ամբողջ ուժե-
 ըրը լարել ժամանակաւոր հաճոյքներու իրականացման: Առաջին ճամբան կ'ա-
 տաջնորդէ սրբութեան, ոգիի նահատակութեան եւ Ատուծոյ, միւսը՝ լուր-
 չութեան, միտերու նահատակութեան եւ բարոյագրկութեան: Արդ, այս եր-
 կուքին մէջտեղ քաղքենին կը փնտո՞ղ միջին ճամբան: Ան ինքզինք երբեք պի-
 տի շտանձնէ ո՛չ տոփանքին, ոչ ալ սրբութեան, ո՛չ պիտի ընդունի նահատակ
 ըլլալ, ոչ ալ ինքնաքանդումի երթալ:

...Յստակ է, որ այս տկար ու անձկալի էակը, ի՛նչ թիւով ալ գոյու-
 թիւն օւնենայ, չի կրնար ինքզինք պահել եւ, ազատօրէն շրջող գայլերու մէջ
 արածող ոչխարներու հօտին պէս՝ իր առանձնայատկութիւններով ստանձնել
 տարբեր դեր մը: Ի՞նչպէս եւ անպէս՝ հակառակ անոր, որ որոշ ժամանակներ
 տիրական խառնուածքները հասած են իրենց գազաթնակէտին, քաղքենին թէև
 ճշուած, երբեք բացը չի մնար, եւ երբեմն նոյնիսկ կը թուի, թէ ան
 կ'իջևէ աշխարհին: Ինչպէ՞ս կարելի է ասիկա: Ո՛չ հօտին թուական քանա-
 կը, ո՛չ որեւէ առաքինութիւն եւ ոչ ալ հասարակաց արամաբանութիւնը կըր-
 նան զանոնք փրկել քանդումէ: Ո՛չ մէկ դարման կրնայ շարունակել արեան

տրտիւր, երբ անիկա իր սկզբնական մղումէն իսկ տկար եղած է: Այնուամենայնիւ, քաղցենիութիւնը կը շարունակէ բարգաւաճիլ: Ինչո՞ւ:

Պատասխանը պարզ է. Ստեփընյութերո՛ւ պատճառով: Արդարեւ, քաղցենիութեան կենսական ուժը կը կայանայ ո՛չ թէ իր բնական անդամներուն յատկութեանց մէջ, այլ՝ մեծաթիւ «չբռնեցիներուն», զորս կրնայ իր տարածականութեան եւ ձգտումներու առաձգականութեան պատճառով պարունակել իր մէջ: Հերին, մեր Ստեփընյութը, յատկանշական օրինակ մըն է այս գծով: Ան՝ որ քաղցենի ըլլալու սահմաններէն շատ աւելի զարգացած է, ան՝ որ խոկումներու երանութիւնը նուազ չափով չի ճանչնար, քան ատելութեան եւ ինքնատեղութեան տիրուր հաճոյքները, ան՝ որ դարձանք կը զգայ օրէնքին, առաքինութեան ու սովորական տրամաբանութեան հանդէպ, բայց եւ այնպէս՝ արգելափակելուն է քաղցենիութեան եւ չի կրնար անկէ խոյս տալ: Այսպէս, իսկական քաղցենիութեան ամբողջ փանդումին ծոցը կը դրոներին իրարու մէջ մտած մարդկային բազմաթիւ խաւեր, բաղմահազար կեանքի ու միտքեր, որոնցմէ իւրաքանչիւրը, ճիշդ է, պիտի դերագոյնցէր զայն եւ անսար ոչ սոսիմանական կեանքի կանչին, ուր պիտի չկատուէին անոր իրենց մանկութեան հետ աւրնշուած յարաբերութիւններով եւ պիտի չկարակուէին այսպէս նուազ հետաքրքրական կեանքով մը: Այս մե.ով, անոնք կը շարունակեն գոյատեւել տատանող, հնազանդ եւ այդ ընկերութեան ծուռայլու յանձնառու կապերով: Որովհետեւ քաղցենիութեան կարգախօսք ուժի սահմանումին չըլումը կը կատարէ. — ով որ ինձի դէմ չէ, հետ է:

Այժմ քննենք Սթեփընյութի հոգին: Կը դռնէնք զայն քաղցենիին տարբեր կամ առանձնայատուկ՝ իր անհատականութեան զարգացման աւելի բարձր մակարդակին վրայ, սակայն իր անհատականութեան բոլոր հիւզաւորումները կը դառնան իր եսին շուրջ եւ կը միտին քանդել զայն: Կը տեսնենք, որ ան ունեցած է իր մէջ ուժեղ մղում մը՝ թէ՛ դէպի սուրբը եւ թէ՛ լպիրը, եւ սակայն որոշ տկարութեան մը կամ ներքին մղումի մը պատճառաւ չի կրնար ինքզինք մխրճել անչլպետի ազատ եւ շնուածուած սահմանները: Մնող համատեղութիւնը քաղցենիութեան՝ իր կախարչանքով կը կապէ զինք: Այս է իր տեղը տիեզերքի մէջ եւ այս է իր կապը: Մտաւորականներու եւ արուեստագէտներու մեծ մասը կը պատկանի այս տեսակին: Անոնց ամենաուժեղները միան կը յաջողին դուրս գալ Քաղցենի-Երկրի մրթնորոտէն եւ կը հասնին տիեզերականին: Միւս բոլորը իրենց հրաժարականները կը ներկայացնեն եւ կը յանդին իրաւախոհութեան: Ատելով քաղցենիութիւնը, նոյն ատեն պատկանելով անոր, անոնք կ'աւելցնեն անոր ուժն ու փառքը, որովհետեւ, իրենց վերջին ապաւէնին դիմաց, անոնք պէտք է վերահաստատեն իրենց հաւատալիքները՝ ապրելու համար: Այս անհուճօրէն մեծաթիւ մարդիկը ողբերգականին շնն հասնիր, սակայն կ'ապրին գէշ աստղի մը տակ բաւական նկատաւելի զառնութեամբ: Եւ այս դժոխքին մէջ, մինչեւ իսկ իրենց կարողութիւնները կը հասունանան ու կը պողաւորուին: Իսկ այն քիչերը, որոնք իրենց բաւարարութիւնը կը փնտուեն ուղալմանման մէջ՝ որոշ փայլքով մը վար կ'իջնան: Անոնք կը հազնին փչապսակը եւ իրենց թիւը փոքր է: Միւսները, ամէն պարագայի, որոնք կը մնան հօտին մէջ եւ որոնց ազանդէն քաղցենիութիւնը շատ բան կը քաղէ, իրենց դիմաց քայքայած ունին երբորդ թագաւորութիւն մը, մտացածին, սակայն գերիշխան աշխարհ մը՝ հիւմարը: Առանձին պայլերուն, որոնք խաղաղութիւն չեն ճանչնար, զոհերը չզագորդ ցաւի մը, զլացուած է ողբերգութեան ստիպողականութիւնը: Անոնք չեն կրնար փախուսալ տալ դէպի աստղափայլ երկինքը, եւ

որոնք կը զգան, թէ աւելի խտորէն ազդարարուած են, բայց եւ այնպէս՝ չեն կրնար գոյատեւել այդ մթնոլորտին մէջ: Եթէ տառապանքը բաւարար չափով կարծրացուցած է եւ, միտամանակ, առանձնական դարձուցած իրենց ողին, իրենց համար վերապահուած է սակայն Հաշտութեան ձեւ մը եւ փոխուստ մը հիւմորի աշխարհին մէջ:

Հիւմորը միշտ ալ քաղցրէնի բան մը ունի իր մէջ, սակայն իսկական քաղցրէնին երբեք ալ չի կրնար հասկնալ զայն: Այս երեւակայական շրջադիւժին մէջ է, որ իր իրականացումը կը գտնէ կնճռոտ ու բաղմերես մտապատկերը Սթեփընսօլֆերու: Այստեղ կարելի է ո՛չ միայն սուրբն ու մեղաւորը փաստարանել մէկ շունչով, կարելի դարձնելով երկու բեւեռներու միացումը, այլեւ՝ քաղցրէնին եւս պարփակել միեւնոյն շրջադիւժին մէջ: Այժմ կարելի է Աստուծոյ տիրապետելի եւ նոյն ատեն պաշտպանել մեղաւորը, որուն հակառակը եւս Տիչը է, սակայն չի կրնար ո՛չ սուրբը եւ ոչ ալ մեղաւորը (բայց ոչ ան-զայմանականէն ոեւէ մէկուն համար) այլ հաստատումը կատարել, ինչպէս եւ նոյնը չի կրնար իրականացնել այդ զաղջը՝ քաղցրէնին: Հիւմորը միայն, հրաշալի դիւտը անոնց, որոնք կէս ճամբան մնացած են վերապայ թոյլեցներու իրենց կոչումէն, որոնք չեն հասած ողբերգականին, սակայն հարուստ են կարելիութիւններով եւ դատութիւններով: Միայն հիւմորը, զուր-ցէ մարդկային ուղիին ալքերէն ծնած այդ ամենափայլուն իրազօրծումը կըր-նայ ձեռք ձգել անկարելին եւ իր պրիմալի ճառագայթին տակ բերել զոյու-թեան բոլոր երեսները: Ապրելու աշխարհին մէջ այնպէս մը, որ կարծէք աշխարհը չըլլար, յարգելու օրէնքը՝ սակայն անկէ վեր կենալու, ունենալու սեփականութիւններ այնպէս՝ ճոր ոչինչ ունենայ», հրաժարել այնպէս՝ որ հրաժարում չըլլայ, փաստարանուած աշխարհիկ իմաստութեան մը այս բոլոր նախադասութիւններու եւ յաճախ ձեւաւորուած սուղարկները միմիայն հիւմորի ուժով կարելի է արդիւնաւէտ եւ ազդու դարձնել:

Եւ ենթադրենք, որ Սթեփընսօլֆը յաջողի, եւ ան ընդոծին բաւական կարելիութիւններ ունի մարտելու այս կախարչական գոյրահաւաքը կամ շարժումը, իր դժոխքին հեղձուցիչ շփոթին մէջ: Իր փրկութիւնը ապահով-ւած պիտի ըլլայ: Սակայն շատ բան տակաւին պիտի պահուի իրեն: Կարե-լիութիւնն ու յոյսը միմիայն այնտեղ են: Ով որ կը սիրէ զինք եւ կը բերէ իր մասնակցութիւնը, կրնայ ցանկաւ անոր այս փրկութիւնը: Ծիչը է, որ առիկա միշտ կապուած պիտի պահէ զինք քաղցրէնի աշխարհին, սակայն իր տառապանքը տանելի եւ ստեղծագործական պիտի ըլլայ: Թէ՛ սիրոյ եւ թէ՛ աստիճանական պարագային՝ քաղցրէնի աշխարհին հետ իր յարաբերութիւննե-րը պիտի կրթնեցնեն իրենց զգայնականութիւնը եւ անոր հետ իր կապը պի-տի գաղբի շարունակական շարժարանք եւ խպնանք պատճառել:

Այս բոլորը իրականացնելու համար, եւ գուցէ, փրկապէս, համորձա-կելու համար անձանոթին մէջ ուսում մը կատարելու, Սթեփընսօլֆ մը պէտք է անգամ մը լաւ նայի ինքն իր մէջ: Պէտք է խորապէս նայի իր հո-ղիի քառսին եւ մխրճուի անոր խորերը: Ատկէ ետք, գոյութեան թնճուղի սյուսու պիտի բացայայտուի իր դիմաց, անոր ամբողջ անփոփոխութեամբ, որմէ ետք այլեւս անկարելի պիտի ըլլայ իրեն համար փոխուստ տալ միտ դժոխքէն՝ դէպի գագաթական փիլիսոփայութեան հանդիսաները, եւ այդա ետ զալու գէպի գայութեան կոյր օրնին: Մարդն ու գայլը այլեւս պիտի ստիպ-ին ճանչնալու զիրար՝ առանց սիւսլ ապրումներու գիմակին, եւ սուղի պի-տի նային իրարու աչքին: Ատկէ ետք այլեւս, կամ պիտի պայթին եւ կամ ընդմիջտ պիտի բաժնուի իրարմէ, եւ կամ՝ Սթեփընսօլֆ մը պիտի չըլլայ,

կամ ալ պիտի հաշտուին իրարու հետ՝ հիւմորի արթնցող լոյսին տակ :

Կրնայ ըլլալ, որ օր մը Հնրի տաղանդը ունի այս երկրորդ կարելիութեան : Հաւանական է, որ ան օր մը ստրվի ինքզինք ճանշնալ : Օր մը նոյնիոկ կրնայ ձեռքին մէջ բռնել մեր փոքրիկ հայելիներէն մէկը : Ան կրնայ հանդիպիլ Անժաններուն : Կրնայ մեր կախարդական թատրոններէն մէկուն մէջ գտնել ճիշդ ա՛յն՝ որ անհրաժեշտ է իր լքուած հոգիին ազատագրման համար : Նման հազարաւոր կարելիութիւններ կը սպասեն իրեն : Իր ճակատագիրը կը բերէ զանոնք, առանց որ ընտրութեան առիթ ձգէ իրեն : Անոնք՝ օրոնք դուրս են քաղքենիութենէն, կ'ապրին այս կախարդական կարելիութիւններու մթնոլորտին մէջ : Ստուկ ոչինչ մը բաւարար է, որ կայծակը հարւածէ :

Եւ այս բոլորը քաջ ծնունթ են Սթեփանովֆին, մինչև իսկ եթէ ալ չըրէ չիցան իր ներքին կենսագրութեան այս բաժինին վրայ : Ան կասկած մը ունի աշխարհի մէջ իրեն շնորհուած վայրին մասին, կ'ապրի՝ Անժաններու նկատմամբ, կասկած՝ թէ կրնայ ինքն իրեն հետ դէժ յանդիման գալ : Եւ դիտակից է ա՛յն հայելիին գոյութեան, որուն մէջ նայելու այդքան դառն անհրաժեշտութիւն ունի եւ որմէ կը ցնցուի մահացու վախով :

.. Մարդու եւ գայլի, միտի եւ ոգիի միջեւ բաժանումը, որուն ընդմէջէն Հնրի կը փորձէ իր ճակատագիրը աւելի հասկնալի դարձնել իրեն համար՝ մեծ պարզաբանում մը կամ մակերեսայնացում մըն է : Ընտրութեան մը ստիպումն է, յարժարցնելու զայն ընդունելի, սակայն սխալական բացատրութեան մը՝ իր մէջ գտած ներքին հակասութիւններուն, որոնք կը թուին աղբիւրը իր ոչ մէկ ձեւով վանցառելի տառապանքներուն : Հնրի իր մէջ կը գտնէ «մարդկային էակ» մը, ինչ որ կը նշանակէ՝ աշխարհ մը ապրումներու եւ մտածումներու, մշակուած եւ ընտելացուած ու վսեմացած խառնուածքի, եւ անոր կողքին՝ «գայլ» մը, ինչ որ կը նշանակէ ընազդի, վայրագութեան ու անդթութեան մութ աշխարհ մը, որ վսեմացած չէ եւ անտաշ է տակաւին : Հակառակ երեւութեան բաժնուած այս երկու յստակ շրջաններուն, որոնք թնամարար տրամադրուած են իրարու հանդէպ, ան երբեմն երբեմն ճանչցած է ուրախ պահեր, ա՛յն ատեն, երբ մարդն ու գայլը հաշտուած են իրարու հետ : Ենթադրենք հիմա, որ Հնրի փորձէ ճշդել, թէ իր կենսաքի որեւէ մէկ վայրկեանին, որեւէ արարքի ընթացքին մարդը որքա՞ն բաժին ունեցած է այդ արարքին մէջ, եւ որքա՞ն՝ գայլը՝ ան ինքզինք անմիջապէս երկայնարանութեան մը գիմաց պիտի գտնէ եւ պիտի փշուրի գայլի իր ամբողջական տեսութիւնը : Պատճառը պարզ է՝ որովհետեւ չկայ մարդկային ռեւէ արարած, ո՛չ իսկ նախնական սեւամորթը, ո՛չ իսկ ապուշը, որ այդքան պարզ կարենայ ըլլալ, որ իր էութիւնը բացատրուի իբրեւ գումարը երկու կամ երեք հասարակութեան, իսկ Հնրի նման բարդ էակի մը մէջ գայլի եւ մարդու անարուեստ բաժանումը անյոյս եւ մանկական փորձ մըն է : Հնրի կը բազմանայ ո՛չ թէ երկու ինքնութիւններէ, այլ՝ հարիւր կամ հազար : Ինչպէս բոլորին վարքը, իր կենսաքը եւս կը շարժի ո՛չ թէ երկու բեւեռներու (ինչպէս մարմինն ու ոգին կամ սուրբն ու մեղաւորը), այլ՝ հազարաւոր կամ անհաշուելի բեւեռներու միջեւ :

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԵՍԷՆ ԱՌԱՋ

Մարիայի հետ ծանօթացման ու զիմակահանդէսին միջև երկարող կարճ ժամանակաշրջանին՝ իսկապէս երջանիկ էի: Սակայն երբք այն արտաբերումը շունչի, որ ասիկա փրկութիւնս էր ու երջանկութեան տիրացումը: Անոր փոխարէն, աւելի այն յստակ տպաւորութիւնը ունէի, թէ այս բոլորը նախարան մը եւ պատրաստութիւն մըն էր, թէ՛ ամէն ինչ սեփօնորէն առաջ կը զլուէր, եւ թէ՛ դեռ չէի հասած հարցին կեդրոնը:

Այժմ, այնքան կարող կը զգայի պարելու մէջ, որ ինքզինքս արժանի կը նկատէի ամէնուն կողմէ այդքան խօսուած պարահանդէսին մէջ իմ բաժինս բերելու: Հերմին դադարեց մը ունէր: Ան տառեկազոյն զգուշութիւնը ձեռք կ'առնէր՝ ինձմէ պահելու իր հազնեկէ զգեստը: Զինք բաւական արագ պիտի ճանչնայի, ըսաւ, եւ եթէ ձախողէի, պիտի օգնէր ինձի: Սակայն ատկէ առաջ ոչինչ պիտի գիտնայի: Ան ոչ իսկ նուազազոյն չափով հետաքրքիր էր, թէ ես ինչ պիտի հազնէի զիմակահանդէսին, եւ որոշեցի որեւէ ձեռք տարբեր հազուատ չհազնիլ: Երբ Մարիային առաջարկեցի ընկերակցել ինձի, յայտնեց, որ արդէն ընկերակցից ու տոմս մը ունի: Իրողապէս եւ ի յուսախարութիւն ինձի, տեսայ, որ ցնծատօնին առանձին պիտի երթայի: Գաղաքի ամենակարեւոր զիմակահանդէսն էր, որ ամէն տարի կը կազմակերպուէր Վերապ սենեակներդուսն մէջ, Արուեստագէտներու ընկերակցութեան կողմէ:

Այդ օրերուն շատ քիչ կը տեսնէի Հերմինը, սակայն զիմակահանդէսէն օր մը առաջ, կարճ այցելութիւն մը տուաւ ինձի: Եկած էր տոմար անկու, զոր ապահոված էի իրեն համար եւ, ատեն մը, լուս նստեցաւ սենեակին մէջ: Շուտով միտնուեցանք շատ ուշադրաւ խօսակցութեան մէջ, որ խոր ազդեցութիւն ձգեց վրաս:

— Իսկապէս հրաշալի ես, — ըսաւ տն, — պարը կը վայելէ քեզի: Ու եւէ մէկը, որ տեսած չէ քեզ վերջին շորս շարաթնհրուն, դժուար թէ ճանչնայ:

— Այո, — համաձայնեցայ իրեն հետ, — հարցերը լաւ չեն ընթացած ինձի հետ ամբողջ տարիներ: այս բոլորը, Հերմին, քեզի կը պարտիմ:

— Եւ ո՞չ գեղեցիկ Մարիային:

— Ո՛չ, ան նուէր մըն է քեզմէ, ինչպէս միւս բոլորը: Ան հրաշալի է:

— Մարիան ճիշդ ա'յն աղջիկն է, որուն պէտք ունիս, Սթեփանովուլի՞:

— Գեղեցիկ, երիտասարդ, թեթեւախիտ, մասնազկտ մը սիրոյ մէջ, եւ մէկը, զոր կարելի չէ ունենալ ամէն օր: Եթէ միայն զինք չբաժնէիր ուրիշներուն հետ, եւ եթէ ինք ծփացող այցելու մը չըլլար սոսկ, հարցը ամբողջովին տարբեր պիտի ըլլար:

— Այո, այս մէկը եւս պէտք էր ընդունէի:

— Եւ հիմա, պահանջած բոլոր բաներդ ունի՞ս:

— Ո՛չ, Հերմին, հարցը այսպէս չի դրուիր: Այն՝ որ ունիմ, շատ գեղեցիկ է եւ բերկրալի: Մեծ հանոյք մըն է եւ մեծ մխիթարութիւն մը: Իսկապէս երջանիկ եմ:

— Լաւ, ուրեմն աւելի ի՞նչ կ'ուզես:

— Կուզեմ աւելին: Բաւարարուած չեմ երջանիկ ըլլալով: Ատոր հա-

մար պատրաստուած չէի: Երջանկութիւնը ճակատագիրս չէ: Ճակատագիրս ճիշդ հակառակն է:

— Իրողայէս ապերջանի՞կ ըլլալու: Այդ մէկը ունիիք եւ բաւարար չափով...: Կար ժամանակ, երբ չէիր ուզեր տուն վերադառնալ՝ ամենիին վախէն:

— Ո՛չ, Հերմին, տախտակ տարրեր բան մըն է: Համաձայն եմ, որ այն ատեն իսկապէս դժբախտ էի: Սակայն այդ մէկը տիմար ապերջանկութիւն մըն էր, որ ոչ մէկ տեղ կ'առաջնորդէր:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ մահուան վտիւր պէտք չէ ունենայի, երբ ամբողջութեամբ մահուան կը ձգտէի այդ չըջանին: Ապերջանկութիւնը, որուն պէտք ունիմ եւ որուն կը տենչամ՝ տարրեր է: Անիկա պէտք է ըլլայ այնպէս, որ ինծի պիտի արտօնէ կամովին տառապիլի եւ կիրքով մեռնիլ: Այդ է ապերջանկութիւնը կամ երջանկութիւնը, որուն կը սպասեմ:

— Կը հասկնամ թեղ. այս պնով մենք եղբայր ու քոյր ենք: Սակայն ի՞նչ ունիս Երջանկութիւնն ոգէմ, զոր գտած ես հիմա Մարիային մօտ: Ինչո՞ւ բաւարարուած չես:

— Անոր ոգէմ առարկութիւն չունիմ: Օ՛, ո՛չ, կը սիրեմ Մարիան: Երախտագրտ եմ անոր համար: Ան ազուար է, խոնար ամբան մը մէկ գեղեցիկ օրուան պէս: Սակայն կը կասկածիմ, որ կարենայ տեսլ անիկա: Այս երջանկութիւնը եւս ոչ մէկ տեղ կ'առաջնորդէ: Անիկա բաւարարութիւն կու տայ, սակայն բաւարարութիւնը սնունդ չէ ինծի համար: Անիկա կ'օրօրէ Սթեփանովուֆը՝ քնացնելու համար, եւ կը յաղեցնէ զայն: Սակայն երջանկութիւն մը չէ, որուն համար արժէք մեռնիլ:

— Ուրեմն, անհրաժեշտ է մեռա՞ծ ըլլալ, Ստեփանովուֆ:

— Այդպէս կը կարծեմ: Երջանկութիւնը դիս զոհուանկութեամբ կը լեցնէ, եւ ես կրնամ զայն կրել դեռ երկար ատեն: Բայց, երբեմն, երբ երջանկութիւնը կը ձգէ վայրկեանական հմայքը, չորս կողմ նայելու եւ որոշ բաներ ցանկալու համար... Յանկութիւնը, զոր ունիմ, թոյլ չի տար, որ այս երջանկութիւնը յաւիտեան տեսէ, այլ վերստին կը վերադարձնէ տառապանքին, միայն թէ՛ աւելի գեղեցկօրէն ու նուազ ստորնութեամբ, քան առաջ: Նման պահերու, ես կը ցանկամ վերադառնալ ա՛յն տառապանքներուն, որոնք զիս մեռնելու պատրաստակամ կը դարձնէին:

Հերմին գոռոզօրէն աչքերուս նայեցաւ, իր այն մութ նայուածքով, որ կրնար յանկարծօրէն երեւան զալ ոգէմքին: Սիրուն ու անվախ աչքեր: Մէկ առ մէկ հաւաքելով խօսքերը եւ շարելով զանոնք կողք կողքի, եւ զանդադօրէն ու այնքան ցած խօսելով, որ այլեւս ճիշդ կը պահանջէր զինք լսելու համար, ան ըսաւ.

— Այսօր կ'ուզեմ բան մը ըսել քեզի, բան մը, զոր գիտեմ երկար տաննէ ի վեր, ինչպէս եւ դուն գիտես: Սակայն, թերեւս, երբեք դուն քեզի չես ըսած: Հիմա քեզի պիտի ըսեմ դիտցածս քու եւ իմ եւ մի՛ր ճակատալին զիրին մասին: Դուն, Հերի, արուեստագէտ մը ու մտածող մը եղած ես, զարգ մը՝ հաւատքով եւ ուրախութեամբ լեցուն, աննախնով ու մանրութեան ընդ կրթեք յաւարարուող, միշտ այն ճամբուն վրայ, որ ոգէպի մեծութիւն ընդ երբեք յաւարարուող, միշտ այն ճամբուն վրայ, որ ոգէպի մեծութիւնն է քեզ եւ վերադարձուցած է ինքնութիւնը քեզի, ա՛յնքան աւելի մեծ եղած են պահանջները, ու աւելի խոր՝ տառապանքը, անձկութիւնը ու յուսահարուածութիւնը, եւ անոնք տիրած են վրայ, ա՛յնքան՝ որ այլեւս մինչև կողորդէ միւր

ճըւած եւ անոնց մէջ: Եւ այն բոլորը, որոնք ատեն մը ճանչցած, սիրած եւ ակնածած էիր իբրեւ գեղեցիկ եւ նուիրական, այն ամբողջ հասարակութիւնը, որ ատեն մը ունեցած էիր մարդկութեան եւ մեր բարձր ճակատագրին մասին, այլեւ օգտակար չեն եղած, կորսնցուցած են իրենց արժէքը եւ քայքայուած են: Հասարակութիւնը օգ չգտաւ չնչելու: Իսկ խեղդամահութիւնը դժուար մահ մըն է: Ծիլճէ է, Հերի: Ա՞յդ է ճակատագիրը:

Վերստին ու վերստին գլուխ շարժեցի:

— Կեանքի մէկ պատկերացումը ունի մէջդ: Հասարակութիւնը ունէիր, մարտահրուէր մը, եւ դուն պատրաստ էիր արարքներու, տառապանքներու եւ զոհողութիւններու համար, ապա, աստիճանաբար, գիտակցեցար, թէ աշխարհը քեզմէ արարքներ կամ զոհողութիւններ չէր պահանջեր, եւ կեանքը ո՛չ թէ հերոսութեան բանաստեղծութիւն մըն էր, ստանձնուելիք հերոսական դերերով, հալլին, այլ՝ հանգստաւէտ սենեակ մը, ուր մարդիկ բաւարարուած են ուտելով եւ խմելով, սուրճ առնելով եւ մանկելով, թղթախաղով եւ ձայնասփռուած երաժշտութեամբ: Եւ ոեւէ մէկը, որ աւելին կը պահանջէ եւ աւելին ունի իր մէջ — գեղեցիկէն ու հերոսականէն, մեծ բանաստեղծներու կամ սուրբերու հանդէպ ակնածանքէն — խենթ մը կամ Տոն Գիւրգ մըն է: Կեանքը ճիշդ նոյնն էր ինձի համար, բարեկամս: Շնորհալի ազնիւ մըն էի: Եւ պատրաստ էի ազդելու բարձր մակարդակով, շատ բան ակնկալելու ինքզինքէս եւ մեծ բաներ իրագործելու: Եւ կրնայի մեծ դեր մը խաղալ: Եւ կրնայի թագաւորի մը կիներ ըլլալ, յեղափոխականի մը սիրուհին, հանճարի մը քոյրը կամ նահատակի մը մայրը: Իսկ կեանքը արտօնած է միմիայն այս ընել, ըլլալ բաւական լաւ ճաշակ ունէր պերճադիմ մը, եւ նոյնիսկ այս մէկը բաւական դժուար եղած է: Իրերու զասուարուծը այս ձեւով եղած է ինձի հետ: Երկար ատեն անսփոփ էի եւ երկար ատեն ինքզինքս կ'ամբաստանէի ասոր համար: Կեանքը, կը մտածէի, վերջին հաշուով իրաւունք ունի եւ եթէ կ'արժամարձկը իմ գեղեցիկ երազներս, ուրեմն, կը փաստարկէի, երազներս յիմար էին եւ սխալ ուղղութիւններով զարգացած: Սակայն այս եւս ո՛չ մէկ ձեւով օգտակար եղաւ: Եւ քանի որ ես քիչ մը հետաքրքրի էի, լաւ աչքեր ու լաւ ունկեր ունէի նաեւ, լաւ աչք մը նեւեղի այսպէս կոչուած կեանքին, դրացիներէս ու ծանօթներէս ժողովուրդին բախտին նայեցայ եւ ապա քեզ տեսայ: Եւ դիտեցայ, որ ինչպէս քու պարագայիդ, երազներս հազար անգամ աւելի իրաւացի էին կեանքի եւ իրականութեան ճշմարտութեան: Որքա՞ն արդար էր, որ ինձի պէս կիս մը ուրիշ ընտրութիւն չուենար, եթէ ոչ՝ աղքատութեան մէջ անիմաստօրէն տապալակել, զրամ-չինոզներու միջնարումով՝ զրամեքենային առջեւ ծերանալ, կամ նման մարդոց հետ ամուսնանալ՝ իրենց դրամին համար, եւ կամ՝ ստրուկի մը վերածուիլ: Իսկ քեզ պէս մէկը ստիպողաբար քուէր իր աւանանութեան եւ յուսախաբութեան ծոցը՝ վերադառնալու կամ դիմելու համար անելիին: Գուցէ ինձի համար դժուարութիւնը աւելի առարկայական ու բարոյական էր, իսկ քեզ համար՝ ոգեկան, սակայն նոյն ճամբան էր երկուքիս ալ համար: Կը կարծե՞ս թէ չեմ հասկընար քու սարսափը Փոփոքադ պարէն, ահա՞նքութիւնդ՝ խմիլքարաններէն ու պարահարթակներէն, եւ դժկամութիւնդ՝ ճաղ երաժշտութիւնէն եւ մնացեալէն: Եւ միմիայն պէտք եղածէն աւելի կը հասկնամ զանոնք, ինչպէս եւ արհաճութեան քու ապրումդ՝ քաղաքականութիւնէն, վհատութիւնդ՝ հասարակութիւնը ու մամուլի շտապհրատութիւններէն ու անպատասխանատու անթիքներէն, յուսախաբութիւնդ՝ պատերազմէն, այն մէկէն, որ անցած է, եւ այն միւսէն՝ որ պիտի դայ: Այսինքն՝ այն բոլորէն, որոնց մասին մարդիկ այս

օրերուն կը մտածեն, կը կարգան ու կը կառուցեն, երաժշտութեան՝ զոր կը նուազեն, հանդիսութիւններուն՝ զորս կը սարքեն, դաստիարակութեան՝ զոր կը շարունակեն կիրարկել: Իրաւացի եւ, Սթեփընվույժի, հաղա՛ր անգամ իրաւացի եւ, սահայն եւ այնպէս՝ պէտք է կորսուի: Դուն շատ աւելի խիստ ու անօթի եւ այս պարզ, դիւրին ընթացող եւ դիւրին բաւարարող ներկայ աշխարհին համար: Դուն պէտք եղածէն աւելի տարողութիւններ ունիս: Ու եւէ մէկը, որ ներկայիս կ'ուզէ ասորիլ ու ըմբռնել իր կեանքը, պէտք չէ քեզի եւ ինծի պէս ըլլայ: Ու եւէ մէկը, որ երաժշտութիւն կ'ուզէ՝ ազմուկի փոխարէն, ուրախութիւն՝ հաճոյքի փոխարէն, ողի՛ սակի տեղ, ստեղծագործական աշխատանք՝ առեւտուրի տեղ, կիրք՝ խենթութեան տեղ, իրեն յարմար տեղ չի գտներ ոչ-հիմնական մեր աշխարհին մէջ:

Վար նայեցաւ ու խորհրդածութիւններու մէջ ինկու:

— Հերմին, — գոչեցի զգուշօրէն, — քո՛յր, դուն որքա՛ն յստակ կը տեսնես: Այնուամենայնիւ, ինծի սորվեցողիք Փոքթթրոզը: Բայց ի՞նչ ըսել կ'ուզես, որ մեզի պէս մէկէն աւելի տարողութիւններով մարդիկ հոս չեն կրնար ասորիլ: Ինչպէ՞ս կու գայ այս մէկը: Այսպէս է միայն հիմա՞, թէ միշտ այսպէս եղած է:

— Զեմ գիտեր: Մեր աշխարհին արժանապատուութիւնը պահելու համար կ'ուզեմ հաւատալ, թէ միայն մեր ժամանակներուն այսպէս եղած է — մանրէ մը, ժամանակաւոր զօքսիտութիւն մը: Մեր ղեկավարները կը լարեն իւրաքանչիւր մկան, եւ յաջող կերպով, որպէսզի յաջորդ պատերազմը ըլլայ եւ շարունակուի, մինչ մնացեալներս Փոքթթրոզ կը պարենք, դրամ կը շահինք, շաքարապատ պիտակեղէններ կ'ուտենք — այսպիսի ժամանակաշրջաններու՝ աշխարհի իսկապէս որ տխուր պատկեր մը կը ներկայացնէ: Իցիւ թէ տարբեր ժամանակաշրջաններ աւելի լաւ եղած ըլլային եւ մաղթենք, որ աւելի լաւ, խորունկ ու աւելի լայն սահմաններով ըլլայ սպազայ ժամանակը: Սահայն այդ մէկը մեզի օգտակար չի կրնար ըլլալ հիմա: Եւ զուցէ միշտ այսպէս եղած է:

— Միշտ այսօրուս՞յ պէս: Միշտ ցողաքաղտներու, օգուտողներու, սպասարկողներու եւ հաճոյսէրներու՞ երկրագունտ մը եղած է աշխարհ, եւ երբեք շունչ չէ՞ եղած մարդոց համար:

— Ամէն պարագայի, չեմ գիտեր: Ոչ ոք գիտէ եւ միեւնոյնն է: Սահայն հիմա կը պատկերացնեմ քու նախընտրած անձնուորութիւնը, որուն մասին այդքան խօսած եւ եւ իր նամակները կարդացած եւ ինծի, այսինքն՝ Մոցարդի մասին: Ինչպէ՞ս էր իրեն հետ, ի՛ր օրերուն: Իր ժամանակաշրջանին ո՞վ կ'իշխէր իրերու ընթացքին վրայ — ո՞վ կը հակադէմ թառերը, կու տար կշռոյթը եւ կը հաշուէր... բանի մը համար: Այդ մէկը Մոցարդին էր, թէ առեւտրականը: Մոցարդը, թէ միջին մարդը: Եւ ի՞նչ ձեւով ան հասաւ մահուան եւ թաղուեցաւ: Ըսել կ'ուզեմ՝ զուցէ միշտ նոյն ձեւով եղած է եւ պիտի ըլլայ. եւ ինչ որ պատմութիւն կոչուած է դպրոցներու մէջ եւ ինչ որ պիտի ըլլայ. եւ ինչ որ պատմութիւն կոչուած է հարսանիք, հանճարներու, մեծ արարքներու եւ ազհոն զոց կը սորվինք հերոսներու, հանճարներու, մեծ արարքներու նպատակներով ուսուցիչներու կողմէ՛ նորուած կեդիք մը՝ որոշ տարիներ տաակներով ուսուցիչներու կողմէ՛ նորուած կեդիք մը՝ որոշ տարիներ տաակներով ըլլայ: Ժամանակն ու աշխարհը, դրամն ու ուժը կը պատկանին փոքր պիտի ըլլայ: Ժամանակն ու աշխարհը, դրամն ու ուժը կը պատկանին փոքր ու ծանծոզ մարդոց: Մնացեալներուն՝ իսկական մարդոց համար, ոչինչ կը մնայ: Ոչինչ՝ մահէն դատ:

— Ուրիշ ոչինչ:

— Այո՛, յաւերժութիւնը :

— Ըսել կ'ուզես անուն եւ Համբա՞ւ մը ապագայ սերունդներուն մօտ :

— Ո՛չ, Համբաւ չէ, Սթեփընսօ՛ւլֆ : Որեւէ արժէք ունի՞ աստիկա : Եւ կը կարծե՞ս թէ բոլոր իսկական մարդիկը Համբաւաւոր եղած են ու ճանչցըւած ապագային :

— Անշուշտ ոչ :

— Ուրեմն հիմնականը Համբաւը չէ : Համբաւը գոյութիւն ունի միայն դաստիարակչական իմաստով . անիկա հարց մըն է ուսուցիչներուն Համար : Ո՛չ, Համբաւը չէ : Ատիկա այն մէկն է, զոր յաւերժութիւն կը կոչեմ : Հաւատացեալները զայն կը կոչեն Աստուծոյ Թագաւորութիւնը : Ինքն իրենս կ'ըսեմ, բոլորս, որ շատ կը պահանջենք եւ տարբեր կարողութիւններ ունինք, երբեք ապրելու դազափարին հետ պիտի չկարենայինք հաշտուիլ, եթէ ուրիշ միջնորդութիւն մը չըլլար մեր շնչած աշխարհի օդէն դուրս, էթէ յաւերժութիւնը չըլլար ժամանակին ետին : Եւ ասիկա ճշմարտութեան Թագաւորութիւնն է : Մոցարդի երաժշտութիւնը ասոր կը պատկանի, ինչպէս եւ բանաստեղծութիւնը՝ ձեր մեծ բանաստեղծներուն : Սուրբերը եւս, որոնք հրաշքներ իրագործած են եւ մարտիրոսութեամբ տառապած ու մեծ օրինակներ տուած են մարդոց՝ կը պատկանին այդ վայրին : Սակայն իսկական արարքի իւրաքանչիւր պատկեր, իսկական ապրումի իւրաքանչիւր ուժգնութիւն նոյնքան յաւերժութեան կը պատկանի, հակառակ անոր, որ ոչ ոք գիտէ, ոչ ոք կը տեսնէ եւ կ'արձանագրէ զայն ապագայ սերունդներուն հաշտին : Յաւերժութեան մէջ ապագայ չկայ :

— Իրաւունք ունիս :

— Հաւատացեալները, — շարունակեց ըսել Հերմին խորհրդածելոյ, — ամէն պարագայի, շատ բան զիտեն այս մասին, ասոր Համար է, որ կը շարեն սուրբերը եւ, ինչպէս կ'ըսեն, կը հաղորդուին անոնց հետ : Սուրբերը, այսինքն՝ իրաւ մարդիկը, փոքր եղբայրները Փրկչին : Մեր կեանքի ամբողջ ընթացքին մենք իրենց ճամբուն վրայ ենք իւրաքանչիւր լաւ արարքով, իւրաքանչիւր քաջ մտածումով եւ սիրով : Աւելի վաղ ժամանակաշրջաններուն, Հաղորդութիւնը սուրբերու հետ ոսկիէ դրախտով մը չըջապատուած պատկերացուած էր նկարիչներու կողմէ — զեղեցիկ ու հանդարտութեամբ լեցուն — եւ ուրիշ բան ըսել չէի ուզեր, երբ բոլոր մը առաջ զայն յաւերժութիւն կը կոչէի : Ատիկա երեւոյթներէն ու ժամանակէն դուրս Թագաւորութիւնն է : Ա՛յդ վայրին է, որ մենք կը պատկանինք : Հո՛ն է մեր տունը : Անո՛ր է, որ մեր սիրտը կը ձգտի : Եւ այդ պատճառաւ է, Սթեփընսօ՛ւլֆ, որ կ'ըզմանք մահը : Հո՛ն է, որ զուն կրկին կէօթէն, նովալիսն ու Մոցարդը պիտի գտնես, իսկ ես սուրբերս՝ Քրիստոֆօրը, Ֆիլիփ ասֆ Նէրին եւ Բոլորը : Հո՛ն են սուրբերս, որոնք սկիզբը մեղաւորներ էին : Մինչեւ իսկ մեզքը կրնայ սրբութեան միջոց մը ըլլալ — մեզքն ու մուսթիւնը : Վրաս պիտի խնդաս, սակայն յաճախ կը մտածեմ, որ նոյնիսկ բարեկամս՝ Փապլոն, կրնայ ծպտուած սուրբ մը ըլլալ : Օ՛, Հերի, որքան կեղտի ու կեղծիքի պիտի հանդիպինք՝ մինչեւ տուն հասնինք : Եւ ո՛չ ոք ունինք, որ առաջնորդէ մեզ : Մեր միակ առաջնորդը մեր տան կարօտախանն է :

Վերջին բառերով ձայնը վերստին հանդիպեալ եւ հիմա անշարժութիւն մը եւ իտաղազութիւն մը կար սենեակին մէջ : Արեւը մար կը մտնէր . անիկա կը շողացնէր ոսկեզարդ դիւրերը զիւրքերու վրայ : Հերմինի գլուխը առի ձեռքերու մէջ, համբուրեցի ճակատը, այտերս դրի այտերուն, ա՛յնպէս՝ որ կարծես ան քոյրս ըլլար, եւ այսպէս մնացինք վայրկեան մը : Եւ այսպէս

պիտի նախընտրելի մնալ եւ այլեւս դուք չզաւ ալդ օր: Սակայն Մարիան խոստացած էր ինծի այս գիշեր հետս ըլլալ — վերջինը՝ մեծ պարահանդէսէն առաջ:

Սակայն Մարիային հանդիպելու համբուս վրայ, մտածեցի ո՛չ թէ իր, այլ՝ Հերմինի մասին: Մտածեցի, որ դուք անոնք իր մտածումները չէին, այլ՝ իմիններս: Ան կարդացած էր զանոնք դուշակի մը պէս, ներշնչած էր զանոնք եւ ապա արտաշնչած, ա՛յնպէս՝ որ անոնք իրենց ուրոյն ձեւերը ըստացած էին եւ ինծի նոր թուացած: Մանաւորաբար շնորհակալարտ էի իրեն, որ յաւերժութեան զաղափարը ճիշդ այս ժամանակաշրջանին արտայայտած էր: Պէտք ունէի անոր, որովհետեւ առանց այդ մէկուն ո՛չ կրնայի ասլըիլ եւ ոչ ալ մեռնիլ: Սո՛ւրբ զգայնութիւնը անդենականին, անժամանակին, աշխարհի՛ մը, որ յաւերժական արժէք ունէր եւ որուն բովանդակութիւնը երկնային էր եւ այսօր ինծի վերադարձուած, այս բարեկամութիւն միջոցաւ, որ ինծի պարել սորվեցուցած էր:

Մտիպուած էի յիշելու Կիօթէի մասին երազը եւ այն երեւումը ծեր Քմաստուկին, որ ա՛յդքան անմարդկայնօրէն խնայց եւ անմահներու ձեռով իր խաղը խաղաց: Աւալին անգամ ըլլալով հասկցայ Կիօթէի խնդուքը: Խընդուք մը, որ աստարկայ չունէր: Ան պարզասլէս լոյս ու պայծառութիւն էր: Ատիկա է, որ կը մնայ, երբ իրաւ մարդ մը անցած է ըտլր տառադանքներէն, մուրեթիւններէն, սխալներէն, կիրքերէն եւ մարդոց թիւրմտացութիւններէն, եւ որոնց ընդմէջէն անցած է գէպի յաւերժութիւն ու աշխարհը տաւրածութեան: Եւ յաւերժութիւնը ուրիշ բան չէր, եթէ ոչ վերանուածումը ժամանակին, այսպէս կոչուած՝ անոր վերադարձը անմեղութեան, եւ վերակերպարանափոխումը՝ տարածութեան:

...Ապա Մարիան եկաւ: Զուարթ ընթրիքէ մը հոք՝ ուղղուեցանք մեր փոքրիկ սենեակը: Ան երբեք այդքան գեղեցիկ, ջերմ ու անմիջական չէր եղած, որքան այդ գիշեր: Այնքան զուրկուրտ էր իր տուած սէրը, որ զայն ընկալեցի իբրեւ ամէնէն ամբողջական անձնատուութիւնը, զոր մարդ կրնայ ունենալ:

— Մարիա, — ըսի, — դուն զիցուհի մը նման չուայ եւ այսօր: Մի սպաններ մեզ երկուքս, քանի որ վաղը դիմակահանդէսն է: Ո՛վ ընտրած ես քեզի ընկերակից: Շատ կը վախնամ, որ ան կախարդ իշխանը ըլլայ, որ քեզ պիտի խլէ ինձմէ եւ այլեւս առիթ պիտի չունենանք հանդիպելու: Այս գիշերուայ սէրդ գրեթէ կը նմանի այն լաւ սիրահարներու վերջին հանդիպման, զոր կ'ունենան վերջին անգամ:


Իր շուրթները ականջիս մօտեցուց եւ շննջաց՝
— Այդպէս մի ըսեր, Հերի: Իւրաքանչիւր հանդիպում կրնայ վերջինը ըլլալ: Երբ որ Հերմին քեզ առնէ՝ այլեւս պիտի չվերադառնաս ինծի: Գուցէ վա՛ղը առնէ քեզ:

Այն օրերու յատուկ փորձառութեան ապրումը այլեւս երբեք չապրեցայ: Այսինքն՝ դիմակահանդէսը կանխող գիշերուան մէջ թրթռացող սրտայտնի մարդութիւններուն այն տարօրինակ, դառն ու քաղցր փոփոխութիւնը նայն ուժգնութեամբ երբեք այլեւս չըրտելուցաւ: Երջանկութիւնն է, զոր կ'ապուովեմ երբեք այլեւս չըրտելուցաւ: Քաղցր ու նուրբ ներքնումը բէի: Այնտեղ Մարիայի աղուորութիւնը կար: Քաղցր ու նուրբ ներքնումը կար սեռային զգայնութիւններու հաճոյքին, զոր միայն նոր օկտոբ էի ճանչկար սեռային զգայնութիւններու հաճոյքին, զոր միայն նոր օկտոբ էի ճանչկար նա, այս յառաջացած տարիքիս: Միացող աւտոմատ մը նման ողորուած էի նալ, այս յառաջացած տարիքիս:

քաղցր հաճոյքով: Եւ ասիկա դեռ արտաքին պատեանն էր միայն: Եւրոպէն՝ ամէն ինչ յատուկ նշանակութիւն ունէր եւ եյեկարականացած էր ճակատագիրով: Եւ մինչ, այս կորսուած եւ նրբին սիրոյ մէջ, զրադուած էի այս փոքրիկ, աղուոր եւ առնքնող սիրոյ հարցերով եւ երեւութապէս մխրճուած էի երջանկութեան դժուանքին մէջ, այդ ժամանակաշրջանի ամբողջ տեսողութեան ներքնուպէս կը պիտակցէի, թէ ճակատագիրս ինչ մահացու ու քառասամբակ արադութեամբ կ'արշաւէր, դէպի գահայիջ՝ անդունդը թուալող սարսափահար ձիու մը պէս, սոսկումէն եւ անձկութենէն խթանուած՝ դէպի մահուան կատարեղադրում: Ընչո՞ւ այնպէս՝ ինչպէս կարճ ժամանակ մը տառալ, միտով եւ ամշկոտութեամբ դիմադրած էի պարզապէս զգայական սիրոյ քաղցր թեթեւութեան եւ զրացած էի այն սոսկումը Մարիայի դեղեցկութենէն, զոր խնդալով կը տրամադրէր ինծի, նոյն ձեւով, այժմ կ'տպրէի մահուան սոսկում: Ամէն պարագայի, սոսկում մը, որ արդէն դիտակց էր վերահաս լքումին ու փրկութեան:

Եւ մինչեւ իսկ երբ կորսուած էինք լուսթեան մէջ, խոր կերպով տարուած էինք սիրոյ խաղերով եւ որեւէ ատենէ աւելի կը պատկանէինք իրարու՝ հոգիս մնաս բարով ըսաւ Մարիային եւ պարպուեցաւ այն բոլորէն, որոնք այս ազնկան դժով իմաստ ունէին ինծի համար: Վերջաւորութենէն տառալ, անգամ մը ես սորված էի Մարիայէն, մանուկի նման ինքզինքս սահմանափակել կեանքի արտաքին խաղով եւ հալածել խուզարկող հաճոյքը եւ սեռայնութեան անմեղութեան մէջ միաժամանակ ըլլալ մանուկն ու զազանը, — կացութիւն մը, զոր իմ անցեալ կեանքիս մէջ հազուադէպօրէն ճանչցած էի, այն ալ իբրեւ բացառութիւն: Զգայնութիւններու կամ սեռային հաճոյքներու աշխարհը ինծի համար գրեթէ միշտ մեղաւորութեան դառն զուգորդումը բերած էին իրենց հետ: Անոնք քաղցր, բայց սոսկալի փորձառութիւններ կը բերէին արդիւնալ պտուղին, որուն դիմաց ողեղէնի մարդը միշտ զգոյշ պիտի ըլլար: Այժմ, Մարիան եւ Հերմինը ցոյց տուած էին ինծի իր անմեղութեամբ շարժուած այս պարտէզը, եւ ես շնորհակատար հիւր մըն էի հոն: Սակայն շուտով ժամանակ պիտի դայ աւելի հետուն երթալու: Պէտք եղածէն աւելի ջերմ ու հաճելի էր այս պարտէզին մէջ: Ծակատագիրս էր որբիչ դրուած կատարել կեանքին համար, անոր անվերջանալի յանցանքին ջատկութեան համար: Դիւրին կեանք մը, դիւրին սէր մը, դիւրին մահ մը — ասոնք ինծի համար չէին:

ՀԵՐՄԱՆ ՀԻՍ



ՀԵՐՄԱՆ ՀԵՍ

«ՏԷՄԻԱՆ»ԷՆ ՄԻՆՁԵՒ «ԱՊՐԱԿԵԱՅ ԳՆԴԱԿՆԵՐՈՒՆ ԽԱՂԸ»

Միշտ ալ քիչ ժը դժուար եղած է հասկնալ 1946ի դրական Նոպէրեան մրցանակակիր Հերման Հէսի սերունդէ սերունդ նորոգուող ժողովրդականութիւնը: Ծիրազ է, որ տաղանդուոր դրողներ, մա՛նաւանդ՝ արձակագիրները ընթերցողներու պակասէն չեն տատապած եւ իրենց ստեղծագործութիւնը շարունակած է համապատասխան հետաքրքրութիւնը առթել, սակայն Հէսի պարագան կը գտարուչուի ա՛յն տարբերութեամբ, որ քսանական թուականներու գերման երիտասարդութեան խանդավառութիւնը ամբողջութեամբ կը տարբերէր Երկրորդ աշխարհամարտը կանխող եւ անոր յաջորդող սերունդին հետաքրքրութենէն: Եթէ տաղիները գերմանական վիպապաշտութեան եւ նիցչէին հետ խառնուած արդի հոգեբանութիւնը կը տեսնէին «ՏԷՄԻԱՆ»ի մէջ, ինչպէս եւ անորոշ պալիթին եւ փոփոխութեան զգացողութիւնը, իրենց յաջորդող սերունդը կը հիանար բոնատիրութեան գէժ Հէս մարդուն եւ մտաւարականին (այս պարագային գերմանական Փաշիգմը) ցուցաբերած յանդըննութեան եւ ուժական խաղաղապաշտութեան:

1914ին՝ Հէս արդէն անցած է Պեռն, մամուլին մէջ յատկօրէն ձաղկելէ ետք գերման անոց ազդեցիկութիւնը: Կեցուածք ժը, որ որդեգրուած էր նաեւ գերմանացի միւս մեծ վիպասանին՝ Թոմաս Մաննի կողմէ:

Իսկ վաթսունական թուականներու վերջաւորութեան, Հէսի գործը ժողովրդականութեան ամբողջովին նոր ալիք ժը գտաւ Միացեալ Նահանգներու մէջ, ուր կաղձաւորուող «ցասկիտ» երիտասարդութիւնը, տարբեր կենցաղ ժը պատկերացնելու իր փորձին, ինչպէս եւ ըմբոստանալու, տունէն խոյս տալու, թմրեցուցիչներ դործածելու եւ նման վարժութիւններու իր տենդին մէջ, ամբողջովին սխալ դիրքերէ մեկնաբանելով Հէսի գործը, զայն սկսաւ իրրեւ ներշնչումի ազբիւր գործածել:

Հեղինակը յաճախ բողոքեց եւ պանդաստեցու իր վէպերուն, մա՛նաւանդ՝ «Սրբեփղնվուլֆ»ի («Տափաստաններու Գայլը») սխալ մեկնաբանութեան համար, որուն առիթով ամերիկացի հրատարակիչներ աւելի շահակցական նպատակներ կը հետապնդէին, քան գեղարուեստական: Սակայն այս հանգամանքը ունեցաւ իր դրական կողմը եւս, որովհետեւ աւելի ուշ սուս-

ջացաւ նոր սերունդ մը, որ առաւել լրջութեամբ ժամեցաւ գործին եւ ասոր
բեր մակարդակի վրայ ջննարկեց Հէսի ժառանգութիւնը:

ՔԱՆԻ ՄԸ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐ

Իր վերջին վէպին՝ «Ապակեայ զնգակներու խաղը» գործին հերոսը՝
Ժողէֆ Քնէիթ, էրր իր ժամեցման եւ յորինումի սկզբունքներուն մասին կը
ժողովէ, հնգինակը՝ երրորդ դէմքով կ'արձանագրէ հետեւեալ տողերը.

«Մուտքի քածիմին համար Քնէիթ յուզեց կեդրոնումայ խաղի մոր խոր-
հրդանիշերուն վրայ, ինչպէս ամէն քեկեածու հասմաբար պատրաստ էր
կատարելու: Ինչպէս նաեւ գապեց ինքզինք՝ խուսափելով իր հաղը կիրար-
կելէ իրրեւ խոստովանութեան միջոց մը՝ հաղի կատուցման հոգեբանական
մեթոտին մկատմամբ իր կտգուածութիւնը մտանելու, հակառակ անոր, որ
այդ մէկը աւելի մօտ պիտի ըլլար իր միտումներուն: Անոր փոխարէն, գար-
գացուց խաղ մը, որ կատոյցով եւ միւթերով բաւակեանայափ ենթակայական
ու արգիական ըլլալով հանդերձ, քափանցիկ, յստակ եւ դասական հիւս-
ւած էով ամբողջովին ենթակայ էր մերդաշնակ գարգացումի օրէնքներուն»
Յոսիկին վարպետներու հետեւողութեամբ» (էջ 117):

Ստեղծագործական խաղի մը նկատմամբ մէջբերուած այս հաստատումը
ամբողջութեամբ կը ջրլացնէ Հերման Հէսի գեղարուեստական յղացքը: Պէտք
է մտնել, որ Հէս իր կազմութեամբ գերմանական վիպասպաշտութեան դա-
ւակն է, որ ուժի պաշտամունքէն դուրս ինչ որ գոյութիւն ունի՝ իւրացու-
ցած է Նիցչէէն: Այս առումով, իր «Բողոքալստում» եւ «Փիթըր Գամկզինտում»
արդէն ծանօթ եւ ընդունուած անուն էր Առաջին պատերազմէն առաջ: 1914էն
հետք, իր անձնական ու ընտանեկան սահմաններ, Գերմանիոյ հանդէպ որդե-
գրած կեցուածքը եւ հանրութեան հակադրեցութիւնը զինք կը տանին ներ-
քին դժոխքի դուռներուն, որուն պատճառաւ Եռնկի աշակերտներէն Ժողէֆ
Պ. Լանկի կողմէ կ'ենթարկուի հոգեվերլուծական 72 դարմանումներու (1916-
17): Նոյն տարիներուն մօտէն կը ծանօթանայ Եռնկի եւ անոր գործերուն,
սակայն 1918ին, «Արուեստագէտը եւ հոգեվերլուծումը» խորագիրով յօդուա-
ծի մը մէջ կը գրէ, թէ հոգեբանները պարզապէս գիտական տուեալներով կը
հաստատեն ա՛յն՝ զոր Նիցչէ կամ Ժան-Փօլ արդէն ըսած էին կամ տեսած
(Ք. Ձիւլթուսկի, «Հերման Հէսի վէպերը», էջ 11): Սակայն հակառակ իր
հերքումին, գործերու ընթերցման կամ ջննարկման միջոցին պիտի տեսնենք,
թէ Հէս որքան ազդուած է արդի հոգեբանութենէն. մասնաւոր՝ Եռնկի հա-
ւարական անդրաակիցի հետ կապուած տեսութիւններէն: Հէս հոգեբանական
վէպին մէջ կը մխրճուի, հակասակ անոր, որ գրաւիօրէն հաւատարիմ կը մը-
նայ արանդական մտերուն:

Բայց Ծրիտման, իր «Քնարական վէպը» ուսումնասիրութեան մէջ,
Հէսի «Ընտիր երկեր»ու հաւաքածոյի ներածականէն կատարուած հետեւեալ
մէջբերումին վրայ կը կատարէ հետաքրքրական ընդհանրացում մը.

«Պատումը իբրեւ էոդալիտուած բնարագութիւն, վէպը իբրեւ փոյս
առնուած պիտակ՝ բանաստեղծական ոգիներու փորձարկումներուն համար՝
կը փոյսանդէ մարդու էութեամ եւ աշխարհի մկատմամբ հեղինակին ասպրւմ-
ները: Ասիկա զուտ գերմանական եւ վիպասպաշտ հարց մըն է. հոս ամբիջա-
պէս հասարակաց ժառանգութիւն մը եւ յանցանքի զգացում մը կ'ապրին»
(էջ 42):

Այս մօտեցումը, ըստ Ծրիտմանի, ամբողջովին ծնունդ կ'առնէ 19րդ

դարձն, ուր ներքին փորձառութեամբ կամ զգոցողութեամբ ճիշտ էր եղած է միտմունքն ու մարդն ու աշխարհը, կատարուածը շատ ենթակայական փորձառութիւն մը ըլլալով հանդերձ, միշտ ալ զեղբարեական աստիճանականութեամբ մը փորձուած է գրուիլ:

«Այս ձևով, — կ'ըսէ Յրիաթան, — չեսի բնեմիջ մտնցման եղանակները, փոքրէք կատոյցներէն մինչեւ երաժշտութիւն եւ գծագրութիւն՝ կը բնազդեմ երեւոյթայութեան յոգեք մը, որ կը միտմունքէ 19րդ դարու բնականներու հաշտեցումը 20րդ դարու հոգեբանական սոցիոլոգի իմաստին հետ: Իր լուծումը վեպին մէջ, որ վիպագրայտ տաճարութեան եղանակով կը կեդրանակայ կրօնարական երեսփ որդեգրումին մէջ, ընտրական լուծում մըն է» (էջ 57):

Ճիշդ այս պատճառով է, որ «Սքեփընվուլֆ» վէպին մէջ Մոցարդն է, որ կը փոտարանուի եւ ոչ թէ Ուակնէրը: Որովհետեւ, բոտ չէսի, Ուակնէրի ուժեղ կամ ընդհանուր ձայները կը ջնջեն հակասութիւնները, իսկ Մոցարդի փորձառային, մարդու ետին եւ արտաքին աշխարհին միջեւ եղած հակասութիւնները կը պարզարանուին՝ կարելի ճշգրտութեամբ:

Գրական ստեղծագործութիւն մը երաժշտական կատոյցի մը նէտ բազմապիսի փորձը հարկաւ բաւական վտանգաւոր աշխատանք է. դժուար է առջինը բացատրել ու վերլուծել երկրորդին օրէնքով, սակայն շատ մը գրականագէտներ շեն վարանիք նման աշխատանքի մը ձեռնարկելու, եւ վերադիւրեւել զարժը շատ յաճախ ներկայացուած է իբրեւ գրական ստեղծ մը:

Սակայն շեքսպիրեան չէսի վիպային կատոյցը շատ աւելի բարդ է՝ նման պարզարանութիւններու մէջ սահմանափակուելու համար: Օրինակ, «Ճամբորդութիւն դէպի Արեւելք» կամ «Սքեփընվուլֆ»ին մէջ ընդգրկուած կացութիւններուն քիչ մը զերիբայալատ մտնցումը կամ տրամաբանութիւնը զժուար է գետնի վրայի տարազներու մէջ:

Եթէ չէսի մտնցման եղանակներէն առաջինին բանալին դասնք «Ապակեայ գնդակներու խաղը» գործին մէկ հատուածին մէջ, երկրորդը հաստատար պէտք է փնտռել «Սքեփընվուլֆ»ի հետեւեալ մէջբերումին մէջ, որ առնուած է Վեպ մը Սքեփընվուլֆի մասին» անունով գտնուած պրակէն եւ ուր կը պարզարանուին չէսի որոշ գաղափարները:

«Ցարդ արտադրուած գրականութեան ձևերուն մէջ՝ քանակագրութիւնը ամէնէն աւելի զնախատուած սեռն է գրողներու եւ քննադատներու կողմէ: Եւ արդարօրէն: Որովհետեւ ամիկա կը տրամադրէ (կամ կրնայ տրամադրել) առաւելագոյն կարելիութիւնները՝ մարդկային եւր ներկայացնելու համար իր բազմերես ամրագրութեան մէջ» (էջ 72):

Շատ իրեն, ախպարներու աշխատանքները արտաքին խաբուանք է եւ, օրինակ, «Փառուտ»ին մէջ Մեֆիստոֆելիսը, Ուակնէրը եւ Փառուտը պէտք է գիտել իբրեւ զերանհատականութեան մը տարբեր գրանորոմները, որով միայն կարելի կ'ըլլայ աւելի խորունկ գաղափար մը կազմել մարդկային էութեան եւ իրականութեան մասին: Նոյն ձևով, միշտ ըստ չէսի, «Չնդկալական դիցարանութեան հերասները անհատականութիւններ չեն, այլ՝ անհատականութիւններու ամրագր շրջանակներ՝ վերամարմնաւորումներու շարքի մը մէջ յայտնուող» (էջ 72-73):

Չոսկէ է, որ կրնանք անցնիլ ուրիշ հանգրուանի մը՝ անձնանուններու խաղին, որ բացայայտօրէն երեւան կու գայ քննարկելի գործերէն առաջինին՝ «Տեմիսոն»ին մէջ:

«ՏԷՄԻԱՆ» ԵՒ ՀԱՒԱՔԱԿԱՆ ԱՆԳԻՏԱԿԻՑԸ

Անձնանուններու խաղը առաջին անգամ ուժգնորէն կարելի է զգալ «ՏԷ-միան»ին մէջ: Գիրքը ունի խորագիր մը եւ ենթախորագիր մը. կը կոչուի «ՏԷմիան», որուն տակ կ'աւելնայ Հետեւեալ ենթախորագիրը. «Էմիլ Սին-լէրի երիտասարդաւթեան պատմութիւնը»: Երկուութեան-միութեան նոյն բե-ւեաներուն մէջ կը տարուբերի ամբողջ վիպակը: Գործը Տէմիանի՞ մասին է ո՞ր թէ էմիլ Սինլէրի: Վերջ է վերջոյ, դրութիւնը կը հետեւի Սինլէրի փորձա-ռութիւններուն զարգացման, սակայն իր հերոսը կամ նախատիպարը կը մնայ Տէմիանը:

Ամէն պարագայի, Երկուքին անուններն ալ ուղղակիորէն կամ անուղ-ղակիորէն թելադրական են: Demian կ'առնչուի Demonին, այսինքն՝ սա-տանային: Տէմիան դրական տիպար է, սակայն ընկերային ու բարոյական նոր արժէքներու գործնական սահմանումին մէջ իր կենցաղը բոլորովին կը տարբերի սովորականէն, կեցուածք մը, որ աւանդական ու քաղքենի հաւա-քականութեան մը համար կրնայ զժոխային նկատուիլ: Սինլէրի անունը (Sinclair) աւելի հետաքրքրական է, տն անուղղակիորէն կը կրէ մեղքի (sin) եւ պայծառատեսութեան (Clair — clear) զաղափարները: Աւելի՛ն. «ՏԷմիան» լոյս կը տեսնէ էմիլ Սինլէրի գրչանունին տակ... Գրչանունին գործածութիւ-նը կրնար միայն Հէսի գրական նոր յղացքին հետ առնչուիլ, քանի որ այս գործով յստակ շրջապարձ մը կը կատարուէր Հէսի գրականութեան մէջ, եթէ վիպակին ենթախորագիրը էմիլ Սինլէրի երիտասարդութեան պատմութիւնը չըլլար: Հերոսին անունն եւ գրչանունին նոյնութիւնը կը շեշտեն գործին ենթակայական-ինքնակենսագրական նկարագիրը: Այսինքն՝ ունինք ինքնա-կենսագրութիւն մը, տարբեր անունի մը տակ պատմուած: Այս ձևով, Տէ-միան կը դառնայ Հէսի ներքին սատանան եւ կ'արձագանգէ հեղինակի ձգ-տումներուն եւ մեծ փոփոխութիւններու ակնկալութեան:

Այս հարցը եւս կ'ուզենք քննարկել յարակցարար Զիլլըրովսկիի ա՛յն վարկածին, թէ Հէսի հերոսները ենթակայ են երեք շարժումներու: Առաջին հերթին անոնք նաեւ անմեղութեան մը մէջ կը դանուին, Երկրորդին՝ արդէն կատարած են հաւաքականութենէն բաժնուելու փորձ մը, անցած են մեղքի փորձառութենէն եւ կը յայտնաբերեն պայծառատեսութեան կարճ պահեր, որոնք, սակայն, պատճառ կը դառնան, որ միշտ վերադառնան իրենց թըշ-ւառ առօրեային եւ աւելի տառապին, իսկ երկրորդին՝ աւելի բարձր մակաւր-դակի վրայ կը փորձեն ամբողջին հետ իրականացնել միութիւն մը, հասնիլ յստակ լիցքաւորումի մը եւ պայծառատեսութեան: Այս մէկը, Հէսի հերոս-ներուն պարագային, միշտ ալ կ'իրականանայ երկար տառապանքներէ եւ փորձառութենէ ետք, ինչ որ քիչ մը նիցչէ եւ քիչ մըն ալ քրիստոնէու-թիւն կը յիշեցնէ:

Ասիկա զգայի կը դառնայ գիրքին սկիզբը, երբ դասարանին մէջ Տէ-միան կ'ըմբոստանայ Փրիլիչին եւ անոր կապուած Երկու աւազակներուն պատ-մութեան մեկնարանութեան դէմ (էջ 51-52) եւ իր ձօնեցումը հետեւեալ ձե-ւով կը բացատրէ Սինլէրի. —

Ըստ իրեն, չզղջացող աւազակը աւելի հարազատ է իր խառնուածքին ու համոզումներուն, քան այն միւսը, որ կը ժխտէ իր անհատականու-թիւնն ու ներքին ձգտումները: Երբ Աստուծոյ կը վերադրենք բոլոր պայ-ծառ, լուսաւոր եւ հայրական յատկանիշները, մութ աշխարհ մը կը մնայ, սրուն մասին կը խուսափինք դրոհւորուիլ. կ'անտեսենք: Հարցին տրուած բոլոր մեկնարանութիւններէն անկախ (անկարկութիւնը յստակօրէն կ'երթայ

արդի հոգեբանութեան մէջ շեշտուած անգիտակիցի կարեւորութեան : Մարդ էակին մէջ եւս մութ բաժին մը կայ) անգիտակիցի կալուածը, որուն տաժած մղումները յաճախ շատ աւելի էական կարեւորութիւն ունին մեր ընդհանուր վարուելակերպին մէջ, քան անոնք, որոնք արդէն իսկ հասկնալի են մեզի համար :

Այս բոլորը կը գրուին կամ տեղի կ'ունենան դեռ այս գարու երկրորդ տասնամեակին, ուր Ֆրէյտտի մը կամ Ետսկի մը գործերը շատ աւելի խորհրդաւոր եւ մինչեւ իսկ առաքելական պատմուհան մը ունէին եւ շատ աւելի մեծ ակնկալութիւններ կապուած էին անոնց... : Դեռ ուժեղ շարժում մը կար, որ կը փորձէր կրօններն ու առասպելական խորհրդանշանները բացատրել հոգեբանութեան լոյսին տակ : Ժիշո ա'յս շրջագիծին մէջ է, որ կը վերամէկնարտնուի երկու աւագակներու վերոյիշեալ աստուածաշնչական պատմութիւնը : Դեռ աւելի անդին կ'երթայ Հէս եւ, կը կարծենք, թէ իր վէպին հերոսները պէտք ունին նոր աստուծոյ մը, որ պարփակէ մութն ու լոյսը, գիտակիցն ու անգիտակիցը, ամբողջ մարդկային էութիւնն ու դրութիւնը :

Այդ նոր աստուածը կը նկատեն Ապրաքսարը : Այս գծով կատարած իր փնտռութիւններու ճանապարհին՝ Սինքլէր տեղ մը հետեւեալ տեղեկութիւնները կը գտնէ եւ կը յայտնէ : Նախ՝ յունական կախարդութեան կապուած ակնարկութեանց մէջ կը հանգիստնայ Ապրաքսար անունին, որ յետոյ որոշ ցեղախումբերու հաւատալիքներուն մէջ կը ճամբորդէ : Այս տուեաններուն հիմամբ՝ դայն կրնանք դաւանել իբրեւ աստուած մը, զորուն խորհրդանշական պարտականութիւնը աստուածային ու աստուածայական տարբերուն միաձուլումն է» (էջ 78) :

Սակայն ինչո՞ւ այս ծառայումը : Անկախ Հէսի հոգեվերլուծական դարձումումէն եւ անգիտակիցի կարեւոր դերին ծանօթութենէն, պէտք չէ մոռնալ, որ ան մեծցած է միսիոնարական ընտանիքի մը մէջ, որուն դաւանած իրիստ կրօնական ու բարոյական արժէքները, չլոյսալ կամ ընդունելի կալուածներուն մէջ մնալու արժեքափերը, ինչպէս և նման բնական պահանջներու կամ մղումներու գէժ սահմանած արգելքները՝ վտահարէն մեծ դժբ ունեցած են աւելի խոր ու համապարփակ արժէքներու փնտռութիւն մէջ :

Ստիպուած ենք քիչ մը աւելի խորանալ, շեշտը դնելու համար տակաւին նիցչէական ազդեցութեան վրայ :

«Տէմիաթի, «Նարսիս եւ Կոլտուստոսի եւ Հէսի միւս գործերուն մէջ ընդհանրապէս զգալի է նիցչէի «Ողբերգութեան ծնունդը» գործին շեշտը, ու կը մշակուի ա'յն վարկածը, թէ յունական դիցաբանութեան մէջ մեր երկու հիմնական մղումները կը բաժնուին երկու աստուածային տիպարներու՝ Ապոլոնի եւ Տոյոնիսիտի միջեւ, ուր առաջինը կը ներկայացնէ փլուսքի՛ արուեստներն ու հաւասարակշռուած մարդը, իսկ երկրորդը՝ խենթութիւնը, գիտութիւնը, անգիտակից աշխարհը, եւայլն :

Կարծէք այս երկուքին միաձուլումը կ'իրագործուի Ապրաքսարի մէջ, որուն վրայ, աւելի ուշ, պիտի աւելնան նաեւ այլ յատկանիշներ :

Ժիշո այս հարցադրումները կատարող կամ փնտռութիւնները իրականացնող մարդն է, որ առաջ կու գայ Սինքլէրի մէջ : Իսկ այս իրագործումը իր ուղեցոյցը կը ստանայ միշտ Տէմիանէն : Հետաքրքրական է Սինքլէրի կրած տպաւորութիւնը Տէմիանի երեւոյթէն, իրենց առաջին հանդիպումին, երբ պատանի են տակաւին :

«Անիկա սղու մը դէմքը չէր, այլ՝ մարդու մը : Նայնպէս տեսայ եւ ըզ-

գացի, թէ ան ամբողջութեամբ տղամարդու մը դէմքը չէր, այլ՝ որոշ իգականութիւն մը եւս կար այնտեղ: Սակայն վայրկեանի մը համար, այդ դէմքը զիս ո՛չ իգականի, ո՛չ արականի, ո՛չ մանկականի, ո՛չ տարեցի եւ ոչ ալ երիտասարդի դէմք տպաւորեց... Կարծե՛ք հազար տարուայ ըլլար անիկա, ժամանակէն զուրա, մեզի ծանօթ պատմութեանէն բոլորովին տարբեր պատմութեան մը հետեւեալով: Անասունները, ծառերը եւ կամ արքանեակները կրնան համակրիլ նման դէմքի մը...» (էջ 43):

Իրենց զասպասներէն մէկուն ընթացքին, Տէմիան ուրիշ շահեկան երեւոյթ մը մտնանաւ ի Սինքլէրի, որ, խորքին մէջ, կը դառնայ իրենց յարբերութեանց մեկնակտը: Տէմիան կը յայտնէ, որ Կայէնի պատմութիւնը ամբողջովին տարբեր դիտանկիւնէ կարելի է տեսնել: Այսինքն՝ ան հաւանաբար սկիզբէն իր ճակատին վրայ ունէր զինք զատորոշող նշանը, ինչ որ որոշ վախ ու անհանձնաբէ պէտք է առթած ըլլար իր շրջապատին վրայ: Հասանաբար մարդիկ կ'անհանգստանային Կայէնի եւ իր զասպաներուն համարձակ, տարբեր ու ինքնավստահ շարժումներէն: Այս տարբեր, սովորականէն դուրս ըլլալու պարագան է, որ պէտք է անհանգիստ ըրած ըլլայ մարդերը, պատճառ դառնալով, որ ժխտական առասպել մը հիւսուի Կայէնի որդիներուն մասին (էջ 24-25):

Չարցականները դրուած են եւ երկուքին հանդիպումներն ու բաժանումները (որոնց ընթացքին Սինքլէր կ'անցնի այլազան փորձառութիւններէ) զինք կը տանին իր լիցքաւորութիւն:

Եունկէ հաւաքական անդիտակիցին հետ կապուած զանազան խորհրդարանշական պատկերներն ու անուններ կան, որոնցմէ զէթ մէկուն, Տէմիանի մօր՝ Էվա Փրատի վրայ պէտք է կեդրոնանալ: Անունը արդէն թելադրական է եւ կը վերաբերի առաջին կնոջ՝ Եւայի:

Սիրահարութեան միջոցէպէ մը ետք, Սինքլէր կը սկսի գծել ազնիւ մը (Պէտրիսը), որ սակայն աստիճանաբար տարբեր կերպարանք կը ստանայ եւ զործին գրեթէ վերջաւորութեան միայն պիտի յատկանայ իրեն համար, թէ ան կը ներկայացնէ Էվա Փրատուն... Մինչ այդ, Սինքլէր պատկերին դիմաց կը կատարէ հետեւեալ խորհրդածութիւնը.

«... Եւ աստիճանաբար սկսայ զգալ, թէ աստիկա ո՛չ Պէտրիսն էր եւ ոչ ալ Տէմիանը, այլ՝ եւ էի: Ո՛չ թէ պատկերը ինծի կը նմանէր — ամերթա՛մեշտ չէի գտար, որ նմանէր — այլ կ'ուրուագծէի ա՛յն՝ որ իմ կեանքս կը սահմանէր. ներքին ես էր, ցակատագիրս կամ սատանաս: Ճիշդ այսպէս պիտի պատկերանար ընկերս, եթէ գտնէի զինք: Ճիշդ այսպէս՝ սիրած կինս, եթէ վերստին սիրէի մէկը: Ճիշդ այսպէս՝ կեանքս ու մահս, ա՛յս էր կշռոյթը ցակատագիրիս» (էջ 70):

Այս ժամանակաշրջանին Սինքլէր այլ պատկեր մը եւս կը գծէ, Տէմիանէն հասած երկտողէ մը մեկնած: Թռչուն մը, որ կը կտրէ հակեթք՝ բարձրանալով վեր: Երկտողը յոտակ է.

«Թռչունը իր պայտարը կը մզէ՝ հակիթէն զուրս գալու: Ո՛վ որ պէտք է ծնի, հա՛րկ է որ աշխարհ մը քանդէ: Թռչունը գէպի Աստուած կը թռչի: Այդ Աստուծոյ անունը Ապրաքսս է» (էջ 76):

Սինքլէր նկարը կը զրկէ Տէմիանի:

Էվա Փրատի հետ առաջին անգամ կը հանդիպին վերոյիշեալ նկարին տակ: Փրատի դէմքը եւս կը ստեղծէ արական-իգականի շփոթը եւ կը պարզէ ժամանակէն դուրս այն յատկութիւնը, զոր տեսած էր պատանի Տէմիանին կամ իր գծած պատկերին մէջ, որ Էվա Փրատուն էր...: Էվա յանրժառանգական կրնի ու մայրն է, որ կ'ապրի թեր հաւաքական անդիտակիցին մէջ, ուր

ձուլուած են ապրոնեան եւ տայոնիղեան ձգտումները, երկրորդը աւելի շեշտակի կերպով: Գծագրութեան մէջ, Սինքլէր յաջողած է դուրս բերել դայն իր անգիտակիցին եւ հիմա կը գտնէ Ճրատի մէջ մարմնաւորուած:

Երեւոյթը կարելի է միայն բացատրել Եւսեփի հետ կապակցաբար, ըստ որուն տեսութեան՝ որոշ պատկերներ սերունդէ սերունդ կը փոխանցուին մեզի եւ աւելի ամբողջական կերպար կը ստանան, ինչպէս մօր կերպարը, օձին հանդէպ մարգու վախը, Էւայն (Archetypes, Տոն Պըրն, էջ 47):

Այս գաղափարներուն վաւերականութիւնը չէ, որ կը հարցադրենք այստեղ: Պարզապէս կը նշենք անոնց ներկայութիւնն ու ազդեցութիւնը:

Ամէնքը կը գտնուին մեծ գէպքի մը նախօրեակին, որ հաւանաբար Համաշխարհային Առաջին պատերազմն է: Սինքլէր եւ Տէմիան կը դիտարարուին, Սինքլէր կը շփրաւորուի եւ հիւանդանոցին մէջ, իր կողքին, գետնատարած կը տեսնէ Տէմիանը: Տէմիան կը շնորհակալուի ըլլալով: Առտու, Սինքլէր նոյն մահահին մէջ ուրիշ գիտուոր մը կը տեսնէ պտուկած...: Մական շէս պատարասած է մեզ ասոր: Իրենց առաջին հանգիպումին Սինքլէր ա՛յն տպաւորութիւնը ունեցած է, որ անոր ձայնը իրմէ կու գայ... Տէմիան-տէմոն հերոսի տիպարը իր իրազործելիք եան է:

Յիշեալ բոլոր գաղափարներէն անկախ՝ շրջապատէն ու նոր կեանքէն եկող բաւական տուեալներ կան, որոնք «Տէմիան»ը կենդանի գործի կը վերածեն եւ թոյլ շնն տար, որ Տէմիան կամ Սինքլէր տիպիու (type) վերածուին: Անուշտ գիտելու երկրորդ ձեւ մըն ալ կայ: Չէօի գրական-վիպական տեսութիւններուն հիմամբ՝ կարելի է վերոյիշեալ երկու հերոսները նկատել իրրեւ մէկ դեր-անհատականութեան երկու տարբեր դրսեւորումները:

Հաւանաբար, բոլոր մօտեցումներն ալ ունին ամբողջացնող նկարագիր մը:

«ՍԻՏ ՀԱՐԹԱՆ»Ն ԿԱՄ ԼՆԻԿԱԿԱՆ ԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Ճիշդ է, որ «Տէմիան» հրատարակ կ'ելլէր 1917ին, անիկա աւարտած էր արդէն 1917ին: Այդ թուականէն հինգ տարի ետք լոյս կը տեսնէ «Միտհարթ»-ն, առաջին ընթերցումով ամբողջովին տարբեր տպաւորութիւն ձգելով, խորքին մէջ սական տարբեր միջավայրի մը մէջ նոյն տազնայները զարգացնելով:

«Միտհարթ»-ն ամբողջութեան եւ շարունակականութեան գաղափարը կը հետապնդէ: «Տէմիան»ի մէջ ակնարկութիւն մը կար այն ուզութեամբ-բռնուը, որ հակիթը կտրելով կը բարձրանայ վեր: Հակիթը ամբողջութեան խորհրդանիշը եղած է միշտ: Հոն, աշխարհի մը քանդումը նախապայման կը նկատուէր՝ նորի մը տեսչածման համար: Այս պարագային, Միտհարթա կը ձգէ իրեն համար նախազծուած ու ապահով աշխարհը, իր անձնական փնտռտուքով ու տառապանքով ինքզինք ու իր աշխարհը գտնելու համար: Այս դիմն է, որ կը զարգացնէ շէս՝ հասնելու համար ա՛յն եզրակացութեան, թէ կարելի չէ փոխանցել իմաստութիւնը կամ ճանաչողութիւնը, եւ թէ՛ միայն գիտութիւնն է, զոր կարելի է սորվիլ: Ճշմարտութիւնը միայն անձնական ճիշտ կարելի է նուաճել:

Միտհարթա մէկն է Պուտայի անուններէն: Ճիշդ է, որ ամէն հնդիկի կամ պրահմինի մէջ ցանկութիւնը կամ ճիշդ կայ Պուտային հասնելու, սակայն հերոսին անունը արդէն կը մասնէ ձգտումին իրազործուած ըլլալը:

Տէժիանի սէս, Սիտհարթա կ'անցնի զանազան հանգրուաններէ, հասնելու համար իր ներքին աշխարհի ճանաչման, սակայն ինք աւելի անդին կ'երթայ ու կը յաջողի իր շրջապատին, իր եւ արեւելեան յարաբերութիւնները ճշդելի, կամ՝ իրականացնել երկուքին դաշնութիւնը: Իր մտերիմ բարեկամին, Ճիվոնտայի հետ՝ Սիտհարթա կը սկսի ճամբորդութեան. կը մտնէ Սամանաներու վարդապետութենէն ներս, կը հանդիպի Կոթամային, որուն ժայիան ու շարժումները կը ցուցնեն ներքին ա'յն բիւրեղացումը, որուն տիրած է ան, սակայն այս բոլորը իր մէջ աւելի եւս կ'արմատացնեն ա'յն համոզումը, թէ ուսուցման մէջ չէ, որ պէտք է փնտոէ իմաստութիւնը, այլ ի'ր մէջ եւ իր ու շրջապատի յարաբերութիւններուն:

Ասիէ անդին, ձգելով կրօնական կենցաղը՝ Սիտհարթա կ'անցնի փորձառութիւններու աշխարհին մէջ: Կը ծանօթանայ սիրոյ խաղերուն մասնագէտ Փամալային, կը մտնէ առեւտուրի, բախտախաղի եւ ուշխարհիկ բոլոր հաճոյքներուն մէջ: Սակայն այս բոլորը իրեն համար միայն հանգրուաններ կ'ըլլան՝ իր լիցքաւորման ճանապարհին:

Փաղաքը շտաճ, որ իրեն համար անց մըն էր՝ իր կրօնական-վարդապետական կենցաղէն ու փնտոտութիւններէն եղանակէն դէպի անձնական փորձառութիւններու ուշխարհը, Սիտհարթա գետ մը կ'անցնի ու կը հանդիպի լատտա վարի մը՝ Վասուտեւային: Սիտհարթա, քողաքէն փախուստ տալով՝ վերքտին կը միանայ Վասուտեւային եւ աստիճանաբար կը փոխարինէ զայն:

Գետը անցնէ է ու համադրումը երկու աշխարհներուն: Տակաւին այն վայրն է, ուր ժամանակը իմաստ չունի: Ձուրի հեղուկութիւնն ու անկայունութիւնը իրեն հետ կը բերէ զազափարը իրերու ներթափանցման եւ, երեւուրթական ձեւերէն անկախ՝ անոնց ներքին միութեան: Գետին վրայ աշխատելով է, որ Սիտհարթա կը սորվի գետը լսել:

Հոն է, որ Սիտհարթա կը հանդիպի Փամալային ծնած իր տղուն, որուն առթած հարցերը եւ ապա հետաքուցումը իրեն կը բերեն վիշտի ու սիրոյ փորձառութիւնը: Փամալան առիթով մը ըսած է իրեն, թէ ինք սիրելի չի գիտեր: Տղուն հետաքուցման հարց միայն, Սիտհարթա տակաւ կը ճանչնայ սէրը՝ իր իսկական ու լայն առումով: Ասիէ ետք միայն ան կը սորվի ամբողջութեամբ լսել գետը: Իրեն համար կենդանի օրինակը Վասուտեւան է:

«Սիտհարթամ փորձեց աւելի լաւ լսել: Հօրը պատկերը, իր անճակամ պատկերը եւ իր գաւկից պատկերը հոսեցան իրարու մէջ: Փամալայի պատկերը նայեալու յայտնուեցաւ ու հոսեցաւ եւ ճնշիմտային ու արիշներում պատկերները խառնուեցան անոնց ու անցան: Անոնք, բոլորը, գետին մէկ բաժինը դարձան:

... Սիտհարթա կեդրոնացած կերպով լսեց գետը. այս հազար ձայներով երգը ունկնդրեց. երբ այլեւս առանձին աշարհութիւն չդարձուց ցաւիմ կամ խնդումիմ, երբ իր ոգին չկապեց յատուկ ձայնի մը՝ գայմ առնելու համար իր եսին մէջ, լսեց բոլորը, ամբողջութիւնը, միութիւնը, այլեւս հազար ձայներու երգը մէկ բառի մէջ խտացաւ՝ Օմ — գերագանցութիւն» (էջ 111):

Այս պահին ետք, Սիտհարթայի Ոգին (բառացիօրէն թարգմանուած է այս բառը եւ աւելի աղերս ունի էութեան հետ) կը խառնուի ամբողջութեան հետ: Ան կը դարձի պայքարելէ իր ճակատագրին հետ (բառը կրկին հեղինակին է), իսկ Վասուտեւա կ'երթայ միանալու բոլոր իրերուն:

Ինչպէս կը տեսնենք, գետը պարզ խորհրդանիշ մը ըլլալէ դուրս կու գայ եւ միջոց մը կը դառնայ՝ Հէսի հիմնական մտածումները թարգմանելու: Այնտեղ է, որ կը գիտուի սերունդներու յաջորդութիւնը, ժամանակէն դուրս

կամ յարաբերական ժամանակի մը մէջ, եւ ուր կու դան անկայուն եւ միաձուլուած իրականութեան մը մէջ: Սիւնարթան՝ երիտասարդ պրահմիւնը, իր հանդիպած մարդիկն ու իրերը եւ ներկայ լստաւարը միութիւն մը կը կազմեն կեանքի լայն գետին մէջ:

Հոս է, որ վերստին կը հանդիպին Սիւնարթան ու իր հին բարեկամը՝ Ճովինտան: Առաջինը ընտրած է անձնական փորձառութեան ուղին, իսկ երկրորդը փորձած է վարդապետական ուղղութիւններով կամ կարգով հասնել ճշմարտութեան: Ծիփնտա, ճիշդ այդ սահմանափակումներուն պատճառաւ՝ չէ կրցած հասնել զերադոյն ներդաշնակութեան: Հոս է, որ քանի մը նստադատութիւններու մէջ Սիւնարթա կը խտացնէ իր փորձառութիւնը՝

«Գիտութիւնը փոխանցելի է, բայց իմաստութիւնը՝ ոչ» (էջ 115):

Այսինքն՝ կարելի չէ անձնական փորձառութենէն դուրս իմաստութեան հասնել: Եւ կը շարունակէ.

«Աստուծոյ աշակերտը կը քուրս, որովհետեւ մեք կը տառապանքի ա՛յն իսրկանիւն, թէ ժամանակը իրական է: Ժամանակը իրական չէ, ձովինտա՛: Ես շարունակ անդրադարձած եմ այս իրականութեան: Եւ եթէ ժամանակը իրական չէ, իրականութիւնն ու յանրժողութիւնը, տառապանքն ու յափշտակութիւնը, եւ բարին ու վատը բաժնոց գիծը նոյնպէս իսրկանք կը դառնան» (էջ 115):

Սորքին մէջ, այս բոլորը որքա՞ն ներքին իրականութիւն մըն է, եւ որքա՞ն՝ ընդհանուր իրականութիւն: Հարկաւ, երբ ենթակայական կամ ներքին իրականութիւն միայն կը նկատենք Հէսի աշխարհահայեացքը, ձեռով մը ամբողջութեամբ սխալ մեկնարանած կամ մերժած կ'ըլլանք իր մտեցման երկանակը: Հիմնականը սակայն ներքին ու անձնական փնտրութեամբ ճշմարտութեան հասնելու արեւելումին որդեգրումն է: Աւելին՝ Հէսի աշխարհահայեացքը կը միաձուլուի պուրտաստական սկզբունքներուն եւ Պուտտայի Վարքին հետ՝ ամբողջովին նոր համադրում մը ստեղծելով: Սիւնարթա քար մը ցոյց կու տայ Ճովինտային, ըսելով, թէ ինք կրնայ քար մը սիրել, ծառ մը կամ կոճը մը: Ասոնք իրեր են եւ մարդ իրերը կրնայ սիրել, «Սակայն մարդ չի կրնար սիրել բառերը» (էջ 117):

Պէ՛տք է որոշ հակասութիւն տեսնել Սիւնարթայի բերնով արտայայտուած վերջին նախադասութեան եւ Հէս գրողին ստեղծագործական արարքին մէջ: Ակնարկութիւնը մէկ կողմէ կրնայ երթալ իրականութիւնը նրեկայացնելու բառերու անկարողութեան, իսկ միւս կողմէ՝ շատ սլարդ հակացողութեամբ, կրնայ ուղղուած ըլլալ վարդապետական ուսմունքներով ճշմարտութեան հասնելու գաղափարին դէմ: Ամէն պարագայի, Սիւնարթա կը չեչտէ, թէ չուզեր բառերու իսպիւն կամ հակասութեան մէջ իյնալ, իսկ երբ Ճովինտա, որ կը զգայ, թէ միշտ անորոշութեան մէջ խաբխափելով անցուցած է կեանքը, կը խնդրէ բառ մը կամ բան մը փոխանցել իրեն, Սիւնարթա կ'ըսէ. «Մտեցիր ու ճակատա համարէ՛»: Հոն է, որ Ճովինտա կը տեսնէ, ինչ որ ամբողջ տարիներ խուսափած էր իրմէ .

«Ան, այլեւս իր քարեկամին՝ Սիտհարթայի դէմքը շտեմա հոն: Անոր տեղ ուրիշ, բազմաթիւ դէմքեր կային. երկար շարք մը, շարունակական հոսանք մը դէմքերու — հարիւրներ, հազարներ, որոնք յայտնուեցան ու անհետացան, սակայն ա՛յն տպաւորութիւնը ձգեցին, թէ միշտ հոն էին... եւ բոլորը Սիտհարթան էին: Տեսաւ դէմքը ձուկի մը, շատ մեծ, սարափնիթով բացուած բերնով ցարփ մը, ապա մարած աչքերով մեռնող ձուկ մը: Եւր ծնած մանուկի մը դէմքը տեսաւ՝ կարմիր ու կնճիռներով լեցուն,

միշտ պատրաստ լալալ: Ոճրագործի մը դէմքը տեսաւ... Մեռիկ մարմինները տեսաւ մարդոց ու կիներու՝ տարուած դիրքերու մէջ կրճատ խօսյալքու: Դուրս տարուած դիակներ տեսաւ՝ քարացած, սառած, պարապ... Փրփշնան ու Ակնին տեսաւ: Այս բոլոր ձեւերն ու դէմքերն տեսաւ, իրօքն միջեւ կամրջուող հագարուօր յարաբերութիւններով, բաշտը սիրող գիրար, ատող եւ քանդող գիրար, եւ վերստին ծնող: Անոնցմէ իւրաքանչիւրը մահկանացու, կրճատ եւ ցաւալի օրինակներ էին, ա՛յն բոլորին, որ անցողակի էին: Սակայն, անոնցմէ ո՛չ մէկը կը մեռնէր: Պարգապէս կը փոխուէին, միշտ վերստին կը ծնէին, շարունակաբար նոր դէմքեր կ'առնէին: Պարգապէս ժամանակը կը կենար մէկ դէմքով միւսին միջեւ: Եւ այս բոլոր ձեւերն ու դէմքերը կը մնային, կը հոսէին, կը ծնանէին, կը լողային դէպի ետ ու կը խառնուէին իրարու, եւ այդ բոլորին վրայ շարունակ բարակ բան մը կար, անիրական, սակայն միշտ առկայ, քաշուած անոնց միջեւ. բարակ ապակիի կամ սառցաշերտի մը նման, բարակ մաշկի պէս, պատճառի պէս, ձեւը կամ դիմակը ջուրին — եւ այս դիմակը Սաստարթայի ժպտացող դէմքն էր, որուն այդ վայրկեանին ձովինտա հպեցաւ իր շրթներով: Եւ ձովինտա տեսաւ այդ դիմակնման ժպիտը, հոսող ձեւերուն վրայ գտնուող միութեան այն ժպիտը, հագարուօր կեանքերու ու մահերու վրայ ստեղծուած՝ այս ժպիտը գուգահեռակամութեամբ — այս ժպիտը Միտհարթայի, որ նոյն հանդարտ, նուրբ, անքափանցիկ, գուցէ շնորհալի, գուցէ ծաղրահան, խելացի, հագարածայէ ժպիտն իր կտրամայի, Պաւտայի, գոր ահնածանգով տեսած էր հարիւր անգամ» (էջ 121-122):

Մարդկային դէմքը իբրեւ միջոց գործածելու կշռակը, ինչպէս տեսանք, գործածուած էր Հէտի կողմէ «Տէմիան»ի մէջ, սակայն ո՛չ ոյս տարողութեամբ: Երեւութական աշխարհէն անդին, ներքին միութիւնը, շարունակականութիւնն ու զուգահեռականութիւնը մարդոց ու իրերուն այսքան բացայայտօրէն երբեք չեն գրծուորուած:

Ինչպէս այս բաժինին սկիզբը նշած էինք, «Տէմիան»ի եւ «Միտհարթայ»ի սարբերութիւնները երեւութական են: Զիշէ է, որ հոս մեծ փոփոխութեան մը ակնկալութիւններն ու պատրանքները շկան ալլելու, բայց աւելի եւս շեշտուած կերպով գոյութիւն ունի Հերոսին ու ժաբուին ներքին էութեան ճանաչումը, անոր ամբողջական իրագործումը: Եթէ քրիստոնէութեան նախադրեալներն ու բարոյականութիւնը հարցադրուող խնդիրներ էին նախորդ գործին մէջ, հնդկական շրջապատը ընտրելով՝ Հէս խուսափած էր այդ հարցէն եւ առիթը ունեցած՝ Հերոսին վրայ աւելի կեդրոնանալու: Այս եւս կուզայ ներշնչէն, թէ ո՛չ միայն բարեկէն ու մատեն աւելի անդին երթալու ձգտումը գոյութիւն ունի, այլեւ՝ անհասկանութեան քունդումով միութիւն միութեան մը իրագործումը (ներշնչէ, էջ 957): Սակայն այս Միութիւնը միշտ ալ անհասկանութեան կազմութենէն ետք ու անդին տեղի կ'ունենայ: Այս միութեան ձգտումը ունէր Տէմիան, իսկ անոր իրականացումը կը վկայէր Միտհարթայ: Այս բոլորը շատ աւելի ամբողջական ու կենդանի ձեւով պիտի երևին «Տափաստաններու Պարը» գործին մէջ:

(Մնացեալը յաջորդով) ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ԴԵՄ ԱՌ ԴԵՄ Մ. ԻՇԽԱՆԻ ՀԵՏ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ,
ԼԵԶՈՒԻ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ
ՀԱՐՑԵՐՈՒ ՄԱՍԻՆ



Բ.

- Իմ գիտակից եւ հեթազիտակից նրծաներուն վրայ եթէ որոշ տիրակալութիւն մը կայ, անկա Օշականինն է:
- Քերթուածը կեանքին յարեթական գոյներուն անդրադարձումն ու ցալացումն է բանաստեղծին հագեկան աշխարհին մէջ:
- Գեղեցիկը սահման չունի: Աւելի կը զգացուի, քան թէ կը հասկցուի: Աւելի յուզում է, քան ըմբռնութիւն:
- Լեզուն միայն արտայայտութեան գործիք չէ, որովհետեւ հոգին եւ մտքին հարազատ պատկերն է լեզուն:
- Հայրենասիրութիւնը պառպալ չ'ըլլար, տագնապով կ'ըլլայ, ապրումով կ'ըլլայ եւ արուեստի բիրեղացումով կը դրսեւորուի:

• Բանաստեղծութեան, գեղանկարչութեան, փիլիսոփայութեան, քատրոնի կամ արեւէ աշլ արուեստի մասին վերջնական բնութագրում մը կարելի չէ կատարել: Որովհետեւ ո՛րքան ալ մանրամասնենք, ո՛րքան ալ հաստատ եւ օրէնքի վերածուած տեսակէտներով հիմնադրենք մեր խօսքը, յետագայ արագ ակնարկ մը նետելէ ետք պիտի նկատենք, որ ընդամենը քանի մը խօսքեր ըսած ենք՝ ծովածաւալ եւ անհուն այն տիեզերքին շուրջ, որուն համար գրագրարանի մը հատորներն

անգամ սերապար կու գան:

Այնուամենայնիւ, իրաքանչիւր բանաստեղծ արուեստին կու տայ ի՛ր ստեղծումը, գոյն կը բանաձուէ համաձայն իր համագումներուն:

Արդ, հարց կու տանք. «Ի՞նչ է բանաստեղծութիւնը շուրջ յիմնամեայ փորձառութիւն մը ապրած Մ. Իշխան բանաստեղծին համար»:

— Ինչպէս ըսինք, բանաստեղծութեան կամ արուեստներու ծառին տրուած պատասխաններն ու սահմանումները այ-

լազան են, նախած թէ ո՛ր անկիւնէն կը դիտուի Հարցը: Այլազան են, որովհետեւ բանաստեղծութիւնը ապրող մարդոց կեցածքը կեանքին հանդէպ այլազան է: Եւ այն դրողը, որ զբանաստեղծութիւնը յաւիտեակամ կեանքին աւելցնուի Եւ ըսած է, սխալ դատում մը չէ կատարած: Բայց աւելի յատկացնելով՝ ես պիտի բռնեմ, որ քերթուածը կեանքին յաւերժական գոյներուն անդրադարձումն ու ցոլացումն է բանաստեղծին հոգեկան աշխարհին մէջ:

Որովհետեւ կեանքը՝ իր այլազան երեսներով ու երեւոյթներով, երբ կ'անցնի մեր ջիղերէն, հակադրեցութիւն մը կ'առաջացնէ, կ'արձագանգէ, կը զարնուի մեր հոգիին քարայներուն, եւ այդ բախումէն ծնունդ կ'առնէ բանաստեղծութիւնը, այդ արձագանգին ձայնը:

Կան բանաստեղծներ, որոնց հոգին աւելի կ'արձագանգէ յեզափոխական եւ բնկերային հարցերու ազդուկին, քան ուրիշն մը, որ իր աշխարհին մէջ փակուած, թերեւս սոսանց համոզումով կ'ունենայ շատ նեղ սպրումներ, ներանձնական արձագանգներու ցոլացումներ եւ կը փորձէ բանաստեղծութեամբ արտաքինացնել զանոնք: Այս ալ խառնուածքի հետ կապուած հարց մըն է, որոչ չափով նաեւ կախում ունի միջավայրէն եւ միջավայրէն բխող սպրումներէն:

Սակայն, իմ կարծիքով, բուն բանաստեղծութիւնը վերջին հաշուով ուզուածն է, արձագանգն է, որքան ալ զայն լրացնելու զան օժանդակ յատկանիշներ, աշխինքն՝ որոչ փիլիսոփայութիւն մը, որոչ մտածում մը, բառերու ճարտար դասաւորումով ստացուած խորհրդաւոր կամ երած շտական սպաւորութիւններ, հակադրութիւններ, համեմատութիւններ, եւ այլն: Ըս կը հաւատամ, որ ասոնք բանաստեղծութիւնը բանաստեղծութիւն դարձնելու արուեստին օժանդակներն են, իսկ հիմնական կենսանիւթը այն սպրումն է, այն յուզումն է, որ կեանքը կու տայ քեզի: Ասանց յուզումի ես բանաստեղծութիւն չեմ կրնար ըմբռնել, հակառակ այն իրողութեան, որ Փրանսացի եւ այլ ժողովուրդներու պատկանող

կարգ մը բանաստեղծներ կը յայտարարեն, թէ զգացումը կը մեռցնէ բանաստեղծութիւնը (Փօլ Վալերի):

Իմ խոր համոզումով, յուզումէ մը կամ զգացումէ մը պիտի բխի բանաստեղծութեան ժայթքը: Հետագային պիտի զայ զայն արտաքինացնելու արուեստը, որուն մէջ բառերն ալ իրենց դերը ունին, պատկերներու գիւտն ալ իր դերը ունի, երած շտակունն ալ, կառոյցն ալ, թելադրականութիւնն ալ, եւ այլն: Բայց յուզումը պէտք է ըլլայ կորիզը բանաստեղծութեան:

Եթէ վարակիչ դեր մը ունի՝ բանաստեղծութիւնը, էթէ կը գրես նախ անշուշտ քեզի համար, պարպուելու համար, նաեւ պէտք չէ մտածել, որ այս վարակիչ դերը ընկերային բերնոյթ ունի եւ բանաստեղծութեան ընկերային դերը այն է, որ անիկա փոխանցուի ուրիշին՝ ընթերցումի կամ ունկընդրութեան միջոցաւ: Թէ արուեստի ո՞ր ձեւով կամ ո՞ր ճամբով կը փոխանցես՝ ատիկա այլ հարց է եւ անոր համար «զպրոցներ» ստեղծուած են: Վերջապէս, բոլորն ալ զգացում մը փոխանցելու ճամբաներ են, էթէ նոյնիսկ յստակ մտածում մը չփոխանցեն:

Յետոյ, թերեւս դարձեալ կ'անդրադառնամ Օշակունին, երբ բառերէն կը վտանամ: Եթէ կարենամ նուազագոյն բառերով արտայայտել արուեստագոյն յուզումը՝ հոգեպէս զոհացած պիտի ըլլամ, որովհետեւ բառերը ինծի համար նպատակ չեն, թէեւ բանաստեղծութեան մէջ նպատակի վերածողներ ալ կան, որոնց համար բառերն են հիմնականը եւ բառերու դասաւորումն է, որ բանաստեղծութիւնը կը չիւնէ:

● Այսինքն՝ չէք բաժնեւ տեսակէտը այն բանաստեղծներուն, որոնց համար բերքուածը նաեւ լեզուն է՝ յուզում, մտածում եւ հոգեվիճակ ըլլալով համդերձ: Անշուշտ, լեզուին տրուած այս նախապատուութիւնը չի հասկացողութեանն անդին անցնող համարում մըն է, որ մեր մէջ եւս սկստ հոգ շահի վաթ-

սունակամ թուականներու ատարտիմ, երբ թե՛ Հայաստանի եւ թե՛ Սփիւռքի մէջ նրապարակ իջան փորձառական գրական-նախնամ աներաժեշտութիւնը պաշտպանող երիտասարդ բանաստեղծներ:

Այս տեսակէտը պաշտպանողները կ'անւնջնեն, որ կարելի չէ բանաստեղծութիւնը պայմանաւորել ծանօթ լեզուով մը, այսինքն՝ ասուցողական ազդակներու հետեւեւեւով օրէնքի վերածուած յանգու հաստածով եւ ոչ այլ այլ կադապրներով: Որովհետեւ նոր փորձառութեմէ մը կամ հոգեվիճակէ մը թիւած էրթուածը իրեն հետ կը թեր ի՛ր լեզուն, իր կըըռոյթը:

— Ընդէջ է, համաձայն եմ բոլորովին, որովհետեւ արուեստը կարելի չէ բաժնել նիւթէն: Ասիկա ընդունուած ճըըմարտութիւն մըն է: Եւ բանաստեղծութիւն մը բացատրելու կամ վերլուծելու պահուն եթէ մենք կ'ըսենք՝ «խորքը այս է, ձևը այս է», ասիկա պարզապէս մեր մտածումները հասկնալի դարձնող ուսուցողական միջոց մըն է: Որովհետեւ ձեւն ու խորքը իրականին մէջ կը նոյնանան, իսկ եթէ ձեւը քիչ մը փոխեա՛ խորքն ալ կը փոխուի:

Արձան մը առ, օրինակի համար, Արձանը ձեւ է, բայց նաեւ իմաստ մըն է, իսկ արձանին ձեւը եթէ քիչ մը փոխենք, իմաստն ալ կը փոխուի: Որով՝ բարձր, որ արտաքին իմաստ կու տայ ներքին ապրումին, կը միաձուլուի յուզումին հետ: Սակայն իմ բաժաւ ա՛յն է, որ լեզուն, զոր ապրումը իրեն հետ ոյիտի բերէ, կարենայ արտայայտել, արտաքնացնել ապրումը՝ առանց բառերու պաշտամունքի եւ շոտլլութեան վերածուելու: Ասիկա թեւեւ իմ խառնուածքիս բերումով:

— Կարգ մը ժամանակակից լեզուաբաններ կը պաշտպանեն այն տեսակէտը, թէ իր կատայր փոփոխութեան ենթարկելի խոստափող լեզուն իր մեծ մասամբ անցեալ կը նշանակէ, մինչդեռ օրեւէ ապրող լեզուի կարելիութիւնները եւ ստանդական նմարաւորութիւնները նկատի ա-

ռած՝ անիկա ապագայ է, ներկայ և անցեալ ըլլալէ առաջ:

Իբրեւ բանաստեղծ, անկախած, զուգապարս է՛ք այս փորձառութիւնը: Արդ, կրնամք հարց տալ. «Բանաստեղծ Մ. Իշխանը ինչպէ՞ս յազբանարեց «Լեզուի պատմէշ»ը շրջանցելու այս համգրուանը եւ այդ գծով գլխաւոր ի՞նչ դժուարութիւններ ունեցա՞ք»:

— Լեզուն քարացած իրողութիւն մը չէ, այլ՝ կենդանի երեւոյթ մը, աշխարհի բոլոր ազդերուն ժառ: Որովհետեւ բոլոր լեզուներն ալ կ'ունենան իրենց զարգացման ընթացքը՝ դարերու ընդմէջէն, եւ իբրեւ սարող երեւոյթ՝ անդադար կը նորոգուին:

Պէտք չէ կարծիլ, որ լեզուն երբ մեղի ժառանգ կու զայ անցեալէն, կը ներկայանայ վերջնական ու քարացած կազմապարհերով: Ընդհակառակն, ժամանակին հետ, նոր սերունդներու փորձառութեամբ՝ անիկա կ'ունենայ իր զարգացումն ու ուժանցումը: Լեզուն կը մեռնի նաեւ, ինչպէս ապրող ամէն երեւոյթ, որ կը ծնի, կը զարգանայ եւ կը մեռնի, ինչպէս մեր գրարարը մեռաւ, ինչպէս լատիներէնը, հին լուսարէնը, հին պահլաւերէնը եւ բաղմաթիւ այլ լեզուներ:

Բայց կարեւորը ա՛յն է, որ մտահացած լեզուն ժառանգորդ կը ձգէ, ինչպէս է պարագան մեր աշխարհարարին՝ իր արեւմտահայ եւ արեւելահայ ճիւղերով: Սակայն լեզուն ապրող երեւոյթ մը ըլլալով հանդերձ, յար եւ նման մարդ էակին՝ ունի իր նկարագիրը, արտայայտութեան կերպերը, որոնք նման չեն ուրիշ ժողովուրդներու արտայայտութեան նկարագրերուն: Կարելի է լեզուի մը կատայր ուսումնասիրել եւ երեւան բերել անոր առանձնայատկութիւնները. արդէն ա՛յդ է, որ կը կոչուի հայերէն մտածողութիւն, անգլերէն մտածողութիւն կամ ճափոներէն մտածողութիւն:

Լեզուն եւ միտքը անբաժանելի միութիւն մը կը կազմեն, իսկ մենք կը մտածենք լեզուով: Հիմա, պահ մը նստէ եւ լուս կերպով մտածէ: Իրականութեան մէջ դուս նախադասութիւններ կը կար-

մեա մտքիդ մէջ, իսկ մտածումը չի բիրեղանար, ձեռ ու կերպարանք չի ստանար, մինչեւ որ չմտնէ լեզուին կաղապարին մէջ: Եւ ա՛յն անձը, որ գժուարութեամբ կ'արտայայտուի, ո՛չ թէ որովհետեւ լեզուն աղքատ է, այլ գլխաւորաբար որովհետեւ իր մտածումները տակաւին չեն յտակացած:

Վերջապէս, ամէն մէկ բառ, նոյնիսկ ասանց նախադասութեան մը կառոյցին մէջ մտնելու՝ մշակոյթ մը կը բերէ եւ կ'արթնցնէ յատուկ զգայութիւններ, նայած թէ ինչո՞րոյ ատարկայ բառին մէջ ինչ բովանդակութիւն դրած են քու հայրենիք եւ անկէ ինչ ժառանգ անցած է քեզի:

Այնպէս որ, ես ո՛չ միայն չեմ հաւատար «պէտք է քանդել լեզուն, պէտք է նոր կառոյց մը առանցնել կամ լեզուն վայր է» ըսողներուն, այլի՛ն՝ արուեստական կը դառնեմ: Տակաւին, լեզուն միայն արտայայտութեան գործիք չէ, թէեւ պարզ ձևին մէջ եւ իբրեւ քաջատրութիւն այսպէս կ'ըսենք, բայց ասիկա շատ մակերեսային եւ տնեխիղ սահմանում մըն է, որովհետեւ հոգիին եւ մտքին հարգաստ պատկերն է լեզուն:

Այնպէս որ, ժողովուրդի մը մեծագոյն ստեղծագործութիւնը իր լեզուն է, իսկ եթէ ժողովուրդ մը տիրացած է բարձր մակարդակի հասած լեզուի մը, որուն միջոցաւ կրնայ արտայայտել բանաստեղծութիւն, փիլիսոփայութիւն եւ գիտութիւն, կը նշանակէ, թէ այդ ժողովուրդը յաջողած է ձեւաւորել իր մշակութեային բարձրագոյն ստեղծագործութիւնը: Ու պարապ տեղ չէ ըսուած, որ մենք ա՛ղջ դարձանք, երբ ռուսերուն, գիրի միջոցաւ, մեր գրարար լեզուն հասաւ իր հասունութեան ու կատարելագործութեան զազաթնակէտին:

● Իսկ կարգ մը լեզուաբաններու քաջատրութեամբ՝ «լեզուի պատնէ՞շ»ը դուք ինչպէ՞ս յազթահարեցի՞ք քարերու խոլվոյթիմ գուզանեա քարձրացած այս

արգելիքը, ի՞նչ դժուարութիւններու քալեցա՞ք:

● Սկզբնական շրջանին, ամէն գրող կ'ունենայ խարխալութեան, բայց լեզուէն աւելի՛ ասիկա ոճի, արտայայտութեան ձևի փնտռումն է, եթէ լեզուն անցած է իր արեան մէջ: Կան գրողներ, որոնք մինչեւ իրենց մահը կ'ունենան բարդ լեզու մը եւ չեն հասնիր արտայայտութեան պարզագոյն վիճակներուն: Այս ալ խառնուածքի հարց է, եւ պարապ տեղ չեն ըսած, թէ «ոճը մա՛րդն է»:

Օրինակ, Օշականի լեզուն, որ բերեղացած, մաքրագրուած ոճ մը չէ, բարդ է, որովհետեւ իր մտածելու կերպը այդպէս է, հակառակ անոր, որ մեր լեզուին բոլոր գանձերուն տիրացած արտակարգ երեւոյթ մը կը պարզէ անիկա, բառապաշարն ալ անհունօրէն հարուստ է, բայց երբ նախադասութիւն կը կազմէ, բիրեղացած ձևով չի շիներ, որովհետեւ իր մտածման կերպը գալարուող, տառապազին բարդոյթներու հասնող սխառմ մը ունի:

● Հիշդ է: Բարդ ու գայարունոյ լեզուով մը արտահայտուած հաստատմաններուն, ճիշդ կը հանդիպինք «Համարակերպ»ներուն, ճիշդ պտուկ»ին, «Մնացորդաց»ին եւ իր գրական կեանքի վերջին տասնամեակներու ստեղծագործութիւններուն եւ քննադատական քննադատներուն մէջ, բայց, մեր կարծիքով, նոյնիսկ այդ էջերուն, Օշականի լեզուն քարոյ ու գայարունոյ պատկեր միշտ չի պարզեր: Ուղիակառակն, նոյնիմէն այս գործերուն մէջ, մեծատաղանթ գրագէտին լեզուն կը հասնի այնպիսի պայծառութեամբ մը, բանաստեղծական այնպիսի գրաչափեամբ մը, լեզուական այնպիսի շքեղութեամբ մը, որուն անշարժ տառած էր հայ ըմբօրցողին՝ իր երիտասարդական շրջանի ստեղծագործութիւններու տարածքին, այսինքն՝ «Երբ պատանի եմ» քնարաչափն հատարի, «Պոնտիկներ»ն եւ «Պոնտիկներու մեհանք» գործին ծով խորհուրդներուն գուզանեա:

— Ամբողջովին համաձայն եմ: Բայց

նաեւ պէտք չէ մտահան ընել, որ բարդազոյն մտածելակերպերու եւ ամենախորհրդակեցիկութեան արտայայտման և Սշական մեր գրականութեան մէջ՝ իր ստեղծարարութիւններուն ջախջախիչ տոկոսով:

Վերադառնալով հարցին, ես միշտ պայծառութեան ու յստակութեան հակում ունիմ: Ոմանք ասելիս չեն պնասատեր՝ «պարզութիւնը աղքատութեան եւ ստփականութեան» նշան է» ըսելով: Մ'չ միշտ: Որովհետեւ երբեմն այդ պարզութեան հասնելու համար, գրագէտին աւելի երկար աշխատանք կը պահանջուի, քան բարդ ձեւով զրելու պարագային: Առնօք հազար անգամ կրկնուած ճշմարտութիւններ են. այնպէս որ, վերջին հաշուով, նորէն նոյն տեղը կու գամ, — իւրաքանչիւր գրող, թէ՛ նիւթի, թէ՛ արտայայտութեան եւ թէ՛ լեզուի ու ոճի տեսակէն՝ ինքն իրեն հետ պէտք է հարազատ ըլլայ, իր խառնուածքին, իր ներքին մային պէտք չէ դաւանանէ:

● Անկասկած: Իրաքանչիւր գրող կամ սերունդ պէտք է անսայ իր ներքին ձայնին: Այլապէս, ան կը դառնայ անհոգի խամահիկ մը:

Այս կապակցութեամբ, չէ՞ք կարծեր, որ արանդական բանաստեղծութեան ցուրտականացումը մերժող շարժումը, որ կը փորձուի Հայաստանի թէ՛ Սփիւռքի մէջ, անլի օգտակար է հայ բանաստեղծութեան, քան զասական վարպետներու հետեւերով քննարկող արանդապաշտ Բերքազներուն պահպանողական կեցումը:

— Այո, մեզմէ ետք եւ մինչեւ մեր սերունդը սկսան գրել այնպիսի բանաստեղծութիւններ, որոնք ընդհանուր բանով մը ներկայիս «նորարարութիւն» կ'անուանուին: Այս բանաստեղծներուն հիմնական առաջին յատկանիւրը ա՛յն է, որ յանգն ու չափը մէկ կողմ նետուած են, երկրորդ՝ պատկերներուն ճոխութիւնն է, որ երբեմն տրամաբանութենէն անդին դացող գերբարպաշտ եւ այլ հասկացողութիւններու դիմելով հանդերձ, զըմբարացուցին յուզումին փոխանցումը:

Հիմա, ասոնք բոլորն ալ անշուշտ ըմբռնումի եւ ժամանակի հարցեր են: Մեր օրերուն, նորարարական ձեւով գրող բանաստեղծը Զարեանն էր, բայց ըմբռնելի եւ հաղորդական:

● Որովհետեւ Զարեանը իրրեւ ենթախող ունէր արեւելահայ քնարերգութիւնը, եւ այս՝ հակառակ նորարարական ուստաններու մշակութային ու գրական նորարարին շարժումներուն հետ ունեցած իր սերտ շփումին:

Անշուշտ Զարեանի քերթաւաններուն մէջ կան կացութիւններուն խորքը թափանցող բացարկի բանաստեղծութիւններ, ինչպէս կոմիտասի նուիրուած մանչեյի քերթուածը եւ «Օրերի պսակը» հատորին ասացուածներուն շարքը: Սակայն բանաստեղծական կացութիւնը խտացնող ուղղակայեաց քնարերգութեան փոխարէն՝ Զարեան տահասարակ կը դիմէ նկարագրական-պատմական քերթուածին, մինչդեռ այսօր գայտաբիւն ունի բանաստեղծական հակացողութիւն մը, որ կը յարգէ բանաստեղծութեան անկախ գայտաբիւն մը ըլլալու իրաւունքը:

Հետաքրքրական պիտի ըլլար այս կարգին մտեմալ ձեր դիտանկիւնէն, որովհետեւ շուրջ յիսուն տարուայ փարձառութիւններով կը ներկայանաք մեզի:

— Հիմա, այս հարցը այժմէական է աշխարհի շորս ծագերուն: Կը յիշեմ, որ քանի մը տարի առաջ, նորարարութեան շուրջ բնագործակ բանավէճ մը տեղի ունեցաւ նաեւ Հայաստանի մէջ իր երէց ու երիտասարդ գրողները թեր ու դէժ բաւական բաներ ըսին:

Անձնատէս, ես այս նորութիւններէն չեմ խրտչած եւ չեմ ալ խրտչիր. կը փորձեմ հասկնալ, ո՛չ միայն հասկնալ, այլեւ՝ ըմբռնել, եթէ անշուշտ կարեւոր: Որովհետեւ յիսուն տարին կէս դար է արդէն եւ, բնական է, որ գիտական ու քաղաքական կեանքին հոլովոյթներուն պէտ փոփոխութեան ենթարկուին նաեւ արուեստի ըմբռնումները: Շատ սպասելի է, որ յի-

սուն տարի ետք մարդիկ չզրկեն այնպէս՝ ինչպէս Գանիէլ Վարուժանը կամ Վահէ-Վահեանը կը գրէին: Ատիկա անխուսա- փելի երեսօթիներէն մէկն է կեանքին:

Սակայն կան ճշմարտութիւններ եւ սկզբունքներ ալ, որոնք չեն հինար, եթէ նոյնիսկ յիսուն, հինգ հարիւր կամ հազար տարի անցնի: Օրինակ, մենք այս- սօր ալ կը կարգանք Քրիստոսի շրջանին կամ անկէ առաջ գրուած գրութիւններ ե զեղեցիկ կը գտնենք: Փոխուողը ի՞նչն է: Փոխուողը մարդկային հոգին ու հոգին պահանջները չեն, այլ՝ մտածելու ձևը, պատկերներու կառուցման եղանակը, ար- տայալստութեանց թեքիւթը:

Արդ, իմ կարծիքով՝ այդ թեքիւթը, այդ փոփոխութիւնը այնպիսի ձևով պէտք է իրագործուի, որ հինի եւ նորի իրամատ պէտք չէ ստեղծուի ընթերցումի ճամբով, այսինքն՝ կարգացողը, ո՛ր տա- րիքին ալ պատկանի, ըսէ. «Փեղեցիկ է, տպաւորիչ է, ստիկա դիւս է»: Այլ խօս- ջով՝ կարգացած աստեղ հոգ չէ թէ վայր- կեան մը խրատչիմ, բայց վայրկեան մըն ալ հիանա՞մ, նուաճուի՞մ: Կարեւորը ա՛յս է, ձեւը երկրորդական է:

Անկեղծ ըլլալու համար ըսեմ, որ բաւականին առատ այդ գրուածքներուն մէջ, որոնց մէկ կարեւոր մասն ալ «Խա- գին»ի մէջ կը տպուի ժամանակէ մը ի վէր, դժբախտաբար պահանջուած հիւ- ցումին առջեւ ոչնող մագնիսն է պակտողը: Բառե՛ր, բառե՛ր, բառե՛ր, յոճախ ա- ռանց իսկ պատկերի եւ երբեմն այնպիսի խրթնաբանութիւններ, որ ընթերցումը տաժանելի կը դարձնեն:

Երբեմն ես ինքզինքս կը մեղադրեմ՝ րսելով. «Դու՞ն մտքով տկարացած ես, հիւանդ ես, սկսած ես չըլմանալ պա- հանջուած ճիգին»: Կրնայ ըլլալ: Իայց բանաստեղծութիւնը այնքան մը տաժա- նակիւր աշխատանք պիտի չըլլայ, որ իմ բերելիք մասնակցութիւնս, ինչպէս զիչ առաջ կ'ըսէիք, խոնջէնքի վերածուի:

Արդ, պատահածը ի՞նչ է. իմ տպա- ւորութեամբ՝ բանաստեղծութիւնը ըս- կըսած է նորոյթի վերածուիլ, ճիշդ

այնպէս՝ ինչպէս նորածեւութիւն գո- յութիւն ունի տարագնեցող մարդէն ներս: Եւ իր խառնուածքին բերու- մով, եթէ մէկը նոյնիսկ հակուած ունենայ քնարական, քնքոյշ ու վճիտ բանաստեղ- ծութիւններու, կը վախնայ, որ իրեն ը- սեն. «Դու՞ն հինցած ես, գրածդ տեմառէ բան մըն է...»:

Իմ խորունկ համոզումս այն է, որ արուեստի յաջողութիւնը կախում ունի, առաջին հերթին, հաւատարմութենէն: Իւրաքանչիւր բանաստեղծ կամ գրող նախ իր խառնուածքին հաւատարմի ըլլալ է ոչ թէ ըսէ. «Ես ալ այդպէս ընեմ»: Եթէ իր խառնուածքին հաւատարմի մնաց է իր հոգիէն պայծառ կտորներ կրցաւ դուրս բերել, ի՞նչ ձեւով կ'ուզէ թող բերէ, ա- տիկա երկրորդական հարց է, բայց ան- պայման գեղեցկութիւն մը թող փոխան- ցէ ինծի, յուզում մը թող ստեղծէ հո- փիւս մէջ:

● Կը թօսիք դասական ոճով մը եւ նոր բանաստեղծութիւնը կ'ուզէք դասով գեղագիտական այն չափանիւթերով, ս- յունք շրջանցուած են արդէ քննադատու- քեան կողմէ: Արիստոտելիան այն հաս- կացողութիւնը, որուն համաձայն՝ օգ- տակար խօսքը պէտք է բան մը ըսէ գո- յութիւն ունեցող բանի մը մասին, այսօր մերժելով կը մերժուի երեսպական արդէ քննադատութեան կողմէ, որ շեշտը կը դնէ գրութեան անկախութեան վրայ:

Պարզ խօսքով՝ արդի քննադատութիւ- նը կ'ընդգծէ, որ արդէ թեքութեւ միայն ինքզինքը կ'ըսէ, այսինքն՝ անիկա ան- կախ է գոյութիւն ունեցող բոլոր ազգակ- ներէն ու էակներէն, եւ դեռ՝ մոյնիսկ այդ գրութեան ծնունդ տուած գրողէն, ճիշդ այնպէս՝ ինչպէս բնութեան պարագան է, որ ինք իրավի կը ստեղծէ իր ընդ- հանուր ծիրը, գոյները, ձայները, կըշ- տոյքները, եւայլն: Ուրեմն, զգրութիւնը ինքն իր մէջ գոյութիւն ունեցող յղացք մըն է՝ անկախ արտաքին ամէն տեսակի անդրադարձներէ: Հետեւաբար, գայն լուծելու կամ գէթ ընկալելու համար, պէտք է դիմել խնդրոյ արտապայ բնագի-

ին տուեալներում եւ ոչ թէ արտաքին յակներու :

— Այս բոլոր մտածումները կու գան երկրապաշտութենէն, որ 1920ական թրականներուն սկսաւ եւ այսօր վերջացած արդէն : Գերիբապաշտութեան ձեւական տրուութիւնները մէկ կողմ դնելով՝ ի՞նչ իր ըսածը, եթէ ոչ՝ վեր բարձրանալ իրապաշտութենէն, այսինքն՝ ազատազրուի մեր գիտակից կեանքին եւ հասնիլ հնթագիտակից կեանքին, որ գոյութիւն ունի մեր մէջ : Գերիբապաշտները կ'ուզէին ենթագիտակիցը պարզել Փրէօյտեան մօտեցումով :

Եւստի լաւ : Բայց կարելի չէ, որ ամբողջ սերունդ մը միայն իր ենթագիտակիցը պարզէ եւ անտեսէ իր գիտակից կեանքը : Անհատատալի է, որ գրագէտ մը ամբողջ կեանք մը կարուի իր գոյութեան ենթահողը հանդիսացող իրականութենէն, մեղի ներկայացնէ թանձր ու մթին տարակներ եւ ըսէ . «Թափանցէ՛ իմ ենթագիտակիցիս խաւարին մէջ իրարու բախող աչք երազային այրիներուն խորը եւ բան մը առ» : Ընթերցողը քիչ պարզաներուն միայն թան մը կ'առնէ, իսկ առհասարակ բան մըն ալ չ'առնէր :

Արդ, ինչպէս երաժշտութեան պարագային, բանաստեղծութեան ընկալման պիտի օգնեն ներդաշնակութիւնը, կատարողը, զարգացման եղանակը եւ այն բոլոր ազդակները, որոնք քեզ վերացումի կամ հիացումի տանելով՝ պիտի օրօրեն : Որովհետեւ ա՛յն երաժշտութիւնը, որ մենք չենք հասկնար, բայց կ'ունկնդրենք՝ գոնէ կը հմայէ մեզ :

Այդ հմայիչ գեղեցկութեան հասնող բանաստեղծութիւն պէտք է եւ ո՛չ թէ գոթով (վալստ կ'ըսեն Փրանսացիները), պարտադիր ձեւով խօսքը անհասկնալի դարձնող մանուածապաշտութիւնը, որուն դէմ է, որ կը բողոքեմ, այսինքն՝ բունարուեստին դէմ եւ ո՛չ թէ ինքնեկ բըխումին : Հազա՛ր բարի, եթէ ինքնեկ բըխումով կը գրուին առկէր, որոնք թերեւս պայծառութիւնը շունին պէտք կ'զատին : Իսկ եթէ իր յուզումները, իր ապրում-

ներն ու կեանքը գիտակիցին մէջ կը թաւալին՝ նախ ասոնք թող արտայայտէ, ենթագիտակիցին հասնել առաջ : Վերջապէս, իր ութսուն առ հարիւր համեմատութեամբ՝ մարդկային կեանքը գիտակիցին արդիւնքն է :

● Կը կարծենք, որ չափազանցութիւն մը ըլլի՛ք, երբ երկտասարդ բաճառեղծները դատապարտեցի՛ք միայն ենթագիտակիցը արտայայտելու միզով : Մինչդեռ, իրականութիւնը այն է, որ այս տարուղին քերթուածներուն մեծամասնութիւնը կը բնորոշուի խոնկան գոցակաւուրքամբ, իսկ ենթագիտակիցին բացուող բաճառեղծութիւնները սակաւաթիւ են :

Պատճառը խոնկանութեան շեշտուած մերկայութեան՝ մեր կեանքը, որ մեզի չի ներկայանար ա՛յն նախնականութեամբ ու պայծառ ենթահատութեամբ, ինչ որ էր յիսուս, հարիւր կամ քանի մը հարիւր տարի առաջ : Ճարտարարուեստական յեղափոխութենէն ետք, երկրագունտի տարածութիւնը ինքն իր վրայ սեղմուեցաւ, որովհետեւ հազարակցութեամբ արագ միջոցները սերտ կապեր ըստեղծեցին ժողովուրդներու միջեւ և, միւս կողմէ՝ բոլոր ազգերուն եամար ալ բնրին ճոր մտահոգութիւններ :

Եւ միթէ՛ եղա՞ծ է գրականութիւն մը՝ գրականութեան կամ արուեստի հագարամնայ պատմութեան մէջ, որ չկրէ տիեզերական տագնապներուն ռեզոնանս կամ անուզողակի անդրադարձները :

— Նախ վիճելի հարց է, թէ մարդկային հոգիի շրջանակին ընդարձակումով կամ բարդացումով՝ անոր ապրումները եւ թանձրացեալ մթնոթիւններ կը ստանան : Մարդկային հոգիին տուայտանքը, նոյնիսկ գիւղական պարզ շրջաններու ընթացքին, բոլոր դարերուն ալ, եղած է սիրոյ, նախանձի, ատելութեան, տենչանքներու եւ յոյսերու ապրումը :

Հիմա, հիւլէական ուժերը ստեղծուեցաւ եւ յեղաշրջեց ամբողջ քաղաքա-

կըթուփին մը, նաեւ վտանգի ահաւոր սարսափ մը կախկեց մեր բոլորին գլուխներուն վրայ: Համաձայն եմ, բայց ստիկա ցնցումի նոր առիթ մը կրնայ ստեղծել միայն՝ յա՛տկապէս արուեստագէտ մարդուն համար: Մարդկային հոգին՝ իր տարողութեամբ, անկախ այս բոլորէն, ունեցած իր ներքին արեւոմասերով, իր սարսափներով եւ սպասումներով նո՛յնն է, ունի իր նո՛յն ստճմանը ու միեւնոյն ապրումները: Այսինքն՝ այսօրուան օրօրային ապրումները հազար տարի առաջուան ուրբերգութիւններն են: Այս ըսելով՝ ես չեմ ուզեր ընդգծել, որ քաղաքակրթական փոփոխութիւնները շունչին իրենց ազդեցութիւնները. ընդհակառակն, արուեստին վրայ ալ կ'ազդեն, ինչպէս՝ քաղաքականութեան, սոստեմութեան եւ փոփոխութեան, բայց ներաշխարհը կը մնայ նոյնը:

Ահա թէ ինչու, կը բանաստեղծութիւն կը գրուի՝ ներաշխարհէն կը բխի եւ ներաշխարհին կ'ուղղուի: Հոս, դարձեալ կու գամ հին սահմանումիս, — կեանքին արձագանգը սխտի արտաքինայ բանաստեղծութեան մէջ եւ, կը կարծեմ, թէ մեր վէճերն ու անհասկացողութիւնները այս րոնին համար է, որ տեղի կ'ունենան:

Երբ մագմիկ Գաւառեան մը կ'ընէ, թէ ձայներ կան, որոնք եղէկներու մէջ կը մնան՝ զեղեցիկ է, ես կ'ըմբռնեմ անիկա, իմ զգայարանքս կը զգայ. կամ երբ կը յայտնէ, թէ տակուին կան ձայներ պահուած ծովու խիռնջներուն մէջ՝ ասիկա իսկական զիւտ է, կամ դուն երբ տեղ մը կ'ըսես, թէ կան քարեր, որ կ'ուզեն ամպանալ, երազը ունին աննիթանալու՝ շատ զեղեցիկ է ասիկա, վերացնող դեղեկութիւն մըն է, զոր ես կ'ըմբռնեմ ու կ'ըմբռնեմ իմ հոգիիս զգայարանքով: Բայց ընդունեցէք, որ դուք երբեմն փոխուտ կու տաք այս զեղեցկութիւններէն՝ «աւանդական է» ըսելով: Ո՛չ, աւանդական բան զոյութիւն չունի, կայ մարդկային հոգին եւ մարդկային հոգին չի փոխուիր:

● Կը կարծեմք, որ ճիշդի, խորքի, կամ ընդունում ճշմարտութիւններէ աւելի՝ բանաստեղծութեան ըմբռնողութեան տարբերութիւնն է գոյութիւն ունեցողը: Այլ խօսքով՝ աւագ ու նոր սերունդներուն միջեւ գոյութիւն ունեցող տարբերութիւնը բանաստեղծութեան շուրջ, գեղագիտական ըմբռնողութեան արդիւնք է, ինչ որ, անկասկած, դրական երեւոյթ մըն է:

Թե՛ նրէց, թե՛ միջին եւ թե՛ նրիտասարդ բանաստեղծներուն ֆերքուամները «ներաշխարհէն կը բխին եւ ներաշխարհին կ'ուղղուին»: Բայց իւրայատուկ ներաշխարհներէ եւ ոչ թէ նոյնանման աշխարհներէ, ինչ որ կը ստեղծէ բազմաձայնութիւն եւ հարստութիւն: Մեր գրայցի ըմբացքին, այդ բազմաբանց տեսակետներուն մեծամասնութիւնը բաւական յըստակացաւ: Բայց մենք կը կարծեմք, որ հարցը ամբողջականօրէն պիտի պայծառանայ, եթէ բնութագրէք մեր գեղագիտական ըմբռնողութեան փիլիսոփայական ենթահարը: Օրինակ, քաղցր ցարձածեցիք «զեղեցիկ է» քացատրութիւնը: Կը հանդի՞ք ներկայացնել «զեղեցիկ» մեր սահմանումը:

— «Գեղեցիկը» սահմանում չունի: Գեղեցկագիտութեան (էսթետիք) դասագրքերու մէջ դորձած են սահմանել զայն, բայց իմ կարծիքով՝ չեն յաջողած: Սահման զեղեցիկի ըմբռնումը կը սիրեն նոյն նայնել համաշխարհեան եւ ներդաշխարհեան հետ, սակայն նման քացատրութիւն մը անբաւարար է զեղեցիկը սահմանելու համար: Գեղեցիկը ասեյի կը զգացուի, քան թէ կը հասկցուի: Աւելի յուզում է, քան բժրենողութիւն: Այդ պատճառով ալ արուեստները եւ բնութիւնը մեզի կը պատճառեն զեղագիտական յուզումներ (emotion esthetique): Գիշերէք Փան-Փառ Ռուսոն, որ Աստուծոյ զոյութեան ու տիեզերքի անհուն զեղեցկութիւններուն վեհութիւնը հազորդելու համար քացատրութիւններ շտուաւ հմելին, այլ զայն հանեց բուրբի մը վերայ, մայրամուտի խորհրդաւոր պահումը եւ ձգեց, որ պատանին իր զգայա-

բանքներով անձնապէս Հաղորդութի բնութեան գեղեցկութիւններուն եւ դտնէ այդ բոլորին ստեղծիչը: Բանաստեղծութիւնն ալ, միւս արուեստներուն պէս, իր մտաւորութեամբ, մեր առջեւ կը բանայ գեղեցկութիւններ, որոնք յաճախ սահմանում չունին: Մեր հողիին փակ փեղկերը կը բանայ ստեղծագործութեան վսեմ դանձերուն առջեւ: (Քիչ մը շատ բանաստեղծական եղաւ արդեօք ըսածս):

Մէկ խօսքով՝ այն ամէնը, որ մեզ կը յուզէ եւ յուզելով կ'երջանկացնէ, յուզելով կը հարատացնէ, յուզելով կը բարձրացնէ՝ գեղեցիկ է: Գեղեցկութիւնը կը ծնի հիացում եւ սէր: Իսկ հիացումը ուրիշ բան չէ, եթէ ոչ յուզում: Գեղեցկութիւնը կարելի չէ տարբարակել: Երբ գեղեցիկին դիմաց գտնուինք, մեր շրթներուն վրայ կու գայ ինքնարեւար նոյն բացազանութիւնը: «Ի՛նչ գեղեցիկ է»՝ այդքան: Եթէ հարց տանք՝ «Ինչո՞ւ գեղեցիկ է, ինչպէ՞ս գեղեցիկ է», ամէն բան կը քայքայուի: Արուեստին էությունը յուզումն է: Իսկ նպատակը՝ գեղեցկութեան նուաճումը:

● «Տառապանք» անուն բանաստեղծական ձեռքը հասարակ ետք, ճանի մը բանաստեղծութիւններ միայն ստարգրեցիք մտաւորի էջերուն, շոտաւարար ուժ տալով արձակին: Ի՞նչ զրգապատնասներու պէտք է վերագրել այդ հանգամանքները:

— «Տառապանք»էն ետք միայն գրեցի Հատ ու կտոր բանաստեղծութիւններ: Երեւի տարիք մը կայ, որուն կը սկսի յաջորդել բանաստեղծութեան բոցին աստիճանական նուազումը եւ ենթակտն կը սկսի գործածել «խեղցի մարդոց լեզու», ինչպէս կ'ըսէր Օլախան՝ արձակը խելացիներուն լեզուն համարելով եւ անդադար հարց տալով: «Ինչո՞ւ չէք գրեր խելացի մարդոց լեզուով», եւ յետոյ՝ արձակը, իր կարգին, ներքին մղում մըն է, աւելի երկարաշունչ աշխատանք տանելու պահանջն է արդիւնքը: Յետոյ, եթէ քանակիւնք-երեսուն տարիքի շուրջ մեռնէի, ինչպէս դժբախտաբար մեռաւ մեր բանաստեղծներուն մէկ կարեւոր մասը՝

Գուրեմնէն մինչեւ Գանիէլ Վարուժան, Մխաբ Մեծարեանցէն մինչեւ Մխամանթօ, ես ալ իբրեւ բանաստեղծ կանգ պիտի առնէի: Բայց կեանքը պատեհութիւնը որքա՞ն աւելի ապրելու եւ աւելի ապրած ատենդ ալ, երբ ժամանակ ունենաս, բնականաբար պիտի ուզես գրել աւելի երկարաշունչ գործեր:

Ձեռ գրանք... կը կարծեմ, որ բնական ձևով մը բոլոր բանաստեղծներն ալ արձակին կ'երթան: Միակ բացառութիւնը թերեւ թէքէեանն է մեր պարագային, որովհետեւ մինչեւ իր վերջին շունչը բանաստեղծութիւն գրեց, թէեւ ան ալ մխրճուեցաւ հրապարակագրութեան մէջ եւ փորձեց մտաք գործել վէպի կալուածէն ներս:

● Փռնի կը գտնուինք արձակի կարճա՞ն մէջ, քոյլ տուէք, որ ձեզի հարցնել բաւական արձակ և յանդուգն հարցում մը: «Սեռակախութեան եւ գրականութեան միջև կապ մը կը գտնուէ՞ք»:

— Օլախանը շատ մեծ կապ կը գրեմնէր եւ իր գրականութեան գլխաւոր ներթերէն մէկն ալ արդէն սեռային հարցն էր:

● Այդ չէ կարցնել ուզածս, ըսել կ'ուզեմ՝ սեռային յարաբերութեան եւ գրելու արարէին միջեւ որեւէ կապ կը գտնուէ՞ք...

— Թերեւս այն կապը, որ երկուքին մէջ ալ լեցուիլ մը եւ պարզուիլ մը կայ: Այլ խօսքով՝ պահանջ մը կայ, պոռթկումի պահանջը, որ շարունակ կ'անի, երբ սեռային պարբերին բաւարար չափով կը լեցուի: Երկուքն ալ տիրամիջ ուժեր են, որոնք, ստեղծագործութեան ճամբով իրենց յագեցումը պէտք է դտնեն: Միայն ուշագրութիւն ըրէք, իրարու նմանելով հանդերձ, այս երկու արարքները նաեւ իրարու թշնամիներ են, որովհետեւ եթէ սեռաբար սեռականութեամբ սպասեալ ինքզինքդ՝ ոգեղինացումը, որ արուեստի կամ գրականութեան ճամբով պիտի ձեւաւորուի, կրնայ տեղի չունենալ, կամ ալ՝ կրնայ ծնունդ տալ այլանդակ անդրադարձի մը: Ճիշտ այն անդրադարձն է

այս փափուկ հարցին եւ շատ իրաւունք ունի, երբ յստակօրէն կ'ըսէ. «Արուեստը սեռականութեան ոգեղինացումն (sublimation) է»:

● Գաճ հոգեբաններ եւ մտաւորականներ, որոնք կ'ըսեն, թէ երկու պարագաներում ալ մարդ կ'ստորի յայտնագործումի պահը: Օրինակ, Պարթի համագումով՝ սեռականութիւնն ալ ունի ոգեկան մակարդակ մը, որուն կը հասնինք, երբ պահ մը մեզի ծանօթ անծանօթին մէջ կը գրտնենք մեր «մութ մասը», կամ՝ մեզի պակասը այն «անծանօթ մասը», որուն ձեռքբերումն կը ձգտինք: Այլ խօսքով՝ սեռային իսկողանքներն ինքնաճանաչման եւ դիմացինը իր բալոր գիծերով եւ կողմերով ճանչնալու ազգակ մըն է նաեւ:

— Եստ շխտունեք այս բաները, որովհետեւ տեսնական բաժինն ալ շատ զորաւոր է այս հարցին մէջ: Կենդանիներն ալ ունին նոյն պահանջը եւ միեւնոյն ուժղնութեամբ: Գաղտնի մաս, մութ մաս, եւ այլն չկայ. կայ միայն սերեղագործութեան, յաւերժացման համար բնութեան դրած զորաւոր պահանջը, բնագոյր:

Ասանկ բաներ բացատրած ատեն, դուք միշտ բնութեան նայեցէք, որովհետեւ կենդանիները ամէնէն պարզագոյն օրինակներն են: Կենդանիները ուղղակի կը կատողին. որովհետեւ բնութիւնը դրած է այդ պահանջը, որպէսզի սերունդը շարունակուի, որպէսզի լեցուէ՛ կտք պարպուինք ու պարպուելով՝ դարձեալ լեցուինք: Անիկա կը նմանի միւս բոլոր պահանջներուն, ինչպէս՝ ուտելու պահանջը, քնանալու պահանջը, շնչելու պահանջը, աշխարհի վրայ ապրելու կամ դրելու պահանջը:

Ես սեռականութիւնը կը նմանցնեմ հետեւեալին. — առ ծառ մը, որուն արմատները Հողին մէջ են, յայտնաբերած արմատներէն եկող սեռականութեան աւիշը ծաղիկներ կը բանայ ծառին ճիւղերուն վրայ: Եւ կարելորդ սեռականութեան որդեղինացումն է, այսինքն՝ այս Հրաշագործ ծաղիկը, որ միւս ծաղիկներուն նրմանելով հանդերձ, ունի իր իւրայատուկ երանգները, իր կենարար բոյրը, իր ինքնորոյն դիմադիծն ու նկարագիրը: Եւ կարելորդ այս անկէղ ծաղիկն է՝ թէ՛ կեանքի մէջ եւ թէ՛ դրականութեան:

Զրոյցը վարեց՝

(Շար. 2 եւ վերջ)

Մ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Մ. Իշխանի հետ Մ. Կիրակոսեանի ունեցած գրոյցը ունի երբորդ բաժին մը, որ կ'անդրադառնայ սփիւռքի մեր ճակատագրին, կարգ մը գազաւթներուն կրած հարուածներուն եւ միւսներուն կարեւորութիւններուն: Ոչ գրական, աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ մերձ գրական այդ մասը պիտի ներկայացնենք մեր յաջորդ տարուան մէկ թիւով:

«ՌԱՆՉՊԱՐՆԵՐ»ՈՒ ԾՆՆԴՈՑԸ...

ՂԱՍՔՄ ԲԵԿԸ ԵՒ ԻՐ ԿԻՆԸ

Ղասքմ բեկը, կառավարութեան դըրժումով՝ քիւրտ աշխրհներուն մէջ թշնամիներ ունէր, որոնց զխաւորն էր Հասնանցի աշխրհը: Հասնանցիներուն վրայ գերակշռութիւն ունենալու համար, ան պէտք էր իր հետ ունեւար հայ Ֆետայիները, եւ կամ դոնէ անոնց համակրութիւնը, որովհետեւ Ֆետայիին անունը եւ, մա'նաւանդ՝ անոր մասնակցութիւնը կռիւներուն, սարսափ ձգէր էր հակառակորդին վրայ:

Բ. հատար, էջ 242

Թէեւ Օհանը շատ անգամ պատմած էր Ղասքմ բեկի կեող իմաստութեան եւ լաւութիւններուն մասին, բայց չէի խորհեր բնաւ, որ ան առանց կանխապատրաստելու, պիտի ուզէր այդ տեսակցութիւնը սարքել: Խանըմը կը խօսէր, Օհանն այ կը թարգմանէր: — Վանի սուրհանգակ Մարտիրոսն ըլլաւ, կամ թէ ուրիշ մը, բարով ես եկեր, վըր մեր այսպ եւ գլխուն: Երկնքի դուշեր մենք շատ կը սիրենք, եւ բախտ ենք սուած Ֆետայիներին:

Մի հասարակ զաչախ սուրհանդակի համար արժէ՞՞ր, որ խանըմը նեղութիւն քաշէր եւ այցելութեան գար: «Եւս ամաչեցի այցելութեան զայլ քեզի եւ բեկին», ըսի:

Քրտական գեղեցիկ երգէ մը օրինակ բերելով՝ ըսաւ խանըմը.

— Իմ ի՞նչ պէտք է, որ այսօր դու քեզ հասարակ զաչախ սուրհանգակ կ'անուանես. ես լաւ գիտեմ, որ տունիան մի անիւ է, մենք անոր մատները. մի օր վերելը կ'ելլենք իրբեւ բեկ, միւս օրը՝ տակն ենք իրբեւ զաչախ: Բայց ամէնից թանկն է անուր սոնակը:

— Խանըմ, ով էլ որ լինեմ, այսօր եւ հասարակ գինուոր մըն եմ. տիւանխամայի մէջ (ընդունելութեան սրահ) տեղ չունեմ: Ասածիդ նման, երկընթէ հաւք ենք, բայց ես մի հաւք եմ վերէն վար գլորած: Էլ ինչո՞ւ կ'աւղես, որ այդ իմ ցուի մէջ ես պամ եւ մեր շեմքին կանգնեմ խեղճ ու կրակ, եւ փոր մը հացի ու կեանքի համար ոքնա (խնդրանք) անեմ:

Խանըմը կարծես յուզուեցաւ, եւ խօսքը փոխելով աւելի մեղմ կերպով պատմեց իր ծանօթութիւնները Գէորգի հետ: Պատմեց երկար, թէ ինչպէ՞ս Գալէի վերաւոր ստոր գարմանած էր ամիսներ շարունակ: Գալէն ազատուելու համար խուզարկութիւններէ, եկած էր իրենց տունը եւ հոն ապրած՝ ապահով կերպով, երկար ժամանակ: Եւ իրօք, ճիշդ էին պատմածները: Ան պահած եւ կերակրած էր մեր ընկերներէն շատերը:

Երբ խանըմը ինծի նուիրեց, իրբեւ յիշատակ, արծաթեայ կոնակներով նսկէք մը, զոր հագնելով պիտի յիշէի միշտ իմ «քրօջը», եւ ընդունեցի զայն շնորհակալութեամբ եւ ըսի.

— Ների՛ր, խանր՛մ, որ պահելով այս յիշատակն իմ վրայ մինչեւ անոր զբերուելը, պիտի չկարողանամ ձեր տունը մտնել, մինչեւ մի լաւ ճակ մը քեզի եւ բեկին բերեմ, եւ իրաւունքով անկէ յետոյ ձեր կողքին նստեմ:

Բ. հատար, էջ 248-250

Ղաօրմ բեկ Բուրդ աշխրէֆների մէջ թշնամիներ ունէր, որոնց գլխաւորը Հասնանցի աշխրէֆն էր: Մերձենալով եւ համակիր դառնալով հայ ֆեդայիներին, նա ուզում էր ոչ միայն գորացնել հայ եւ Բուրդ ժողովուրդներին ըարեկամութիւնը, այլեւ ֆեդայիների սնունով սարսափի մէջ պահել հակառակորդ Հասնանցի Բուրդներին:

Ինձ շատ էին պատմել Ղաօրմ բեկի կնոջ՝ ձեմիլէի գեղեցկութեան եւ խելքի մասին: Եւ սա աւստոստի փոխարեւ մեզ դիմաւորելու եկաւ նրա գեղանի տիկինը:

— Քարով, տիկին, — ասացի, — ես Գէորգ Չաւուշի սուրհանդակն եմ, եւ որանք իմ խմբի մարդիկ են: Հաւատարիմ Հասնանցի մեզ յաջող բերեց այստեղ, — ասելացրի ես, — մի նայիր մեզ այդպէս գարմացած, թէ եւ մեր տեսքը շատ սոսկալի է, անակնկալ էիր ենք, սակայն ցանկալի:

— Այդ խօսքն ստուգ ո՞վ է:

— Մի հասարակ զաչախ, Բարափներն ընկած անտիրական մի թռչուն: Եւ արժէ՞ր միթէ, որ զու այդպէս գուգուած-գարգարուած ընդառաջ ելնէ՞ր մի կարած հաւի:

— Ով էլ լինես զու, քարով ես եկել մեր էտօ՞քը, — ասաց ձեմիլէն՝ ձիւ գլուխը բռնելով եւ ուռած կարծքը դէմ տալով իմ յոգնած երկվարին: Մենք սիրում ենք երկնքի դշերին եւ մեր բախտը ֆեդայաւ ձեռքին է: — Նա մի պահ լռեց, մի քայլ ետ գնաց եւ ապա շարունակեց, — Ինչո՞ւ ես դու էեզ զաչախ անուանում կամ կորած հաւ: Ես լու գիտեմ, որ *զուեհրան* մի անիւ է եւ մենք՝ նրա մատները: Մի օր վեր ենք ելնում իբրեւ բեկ, միւս օրը տակն ենք իջնում իբրեւ զաչախ: Բայց ամենից թանկը անիւի սահակն է, որի շուրջը վեր ու վար է անում անիւն իբ ճաղերով:

— Խանութ, — ասացի հիացած նրա խելացի պատմութեանով, — ճիշդ է, որ մենք նման ենք երկնքի հաւերին, բայց ես մի դժբախտ հաւ եմ՝ վերելից վար գլորուած:

— Դու մի քայլ ֆեդայի ես եւ ինձ ծանօթ է կեանքիդ պատմութիւնը: Այս տան մէջ ես շարաքներով բուծել եմ Սպազանաց Գալէի թիւր եւ խնամել ու պահել եմ շատ ֆեդայիների: Իսկ Գէորգ Չաւուշը այս տան մշտական այցելուն է:

— Ես էլ այդ բարեկամութեան համար եմ այստեղ եկել, խանութ, — անմիջապէս վրայ բերեցի ես:

Այդ խօսքի վրայ տիկինը մտնեցաւ ինձ եւ նուիրեց արծաթեայ կոճակներով մի ելակ:

— Ան այս նուէրը ձեմիլէի կողմից, — ասաց նա, — որ նրա ձեռքով է կարուած, իսկ այժմ վայր իջիր ձեռք, — եւ հրամայեց զուամներին, որ ձիւ սանձը եւ ասպանակները պահեն:

— Ներիր, խանութ, — ասացի, — որ պահելով այս թանկագին յիշատակը ինձ վրայ, պիտի չկարողանամ, սակայն, ձեր ասպարանքը մտնել, մինչեւ որ համապատասխան փոխհատուցում չընտրեմ ձեզ եւ միայն այն ժամանակ իրաւունք ունենամ բազմել ձեր կողմին:

«Մանչպարներ», էջ 158-160

Գ Է Ո Ր Գ Ի Ա Մ Ո Ւ Մ Ն Ո Ռ Ք Ի Ի Ն Ը

Երբ 1904 եւ 1905 թուականներուն՝ Գէորգ մինակ պատասխանատու խմբագրութեամբ մնացեր էր Գուրան-Բարձրականգի շրջանին մէջ, եւ պաշտպանը՝ Փետրական խտտարարոյ աւանդութեանց, վրայ կը հասնի Աւագարինը գիւղի գէպը: Ըսի, որ այդ գէպը փչրեր էր ու քայքայեր գայն՝ Հողեպէտ տղարացեր էր անոր կամքը, եւ թուրացեր անոր կապը ընկերներու հետ: Կարծես կ'ուզէր մոռնալ ինքզինք: Յաճախ ինքզինքը կու տար խմելու, գէյ-Փի:

Այդ հոգեկան վիճակի մէջ Եղսոն կ'ընկնայ Հեղինի կողմերէն: Փախչելով իր ամուսինին տունէն, եկեր էր Մշոյ դաշտը, իր քեռիին՝ Ս. Յովհաննու վանքի վանահայր Մկրտիչ վարդապետի մօտ: Եղսոն կը յայտնէ իր քեռիին, որ խիստ վարդապետ մըն էր, թէ թողած էր Գճուկը եւ վախած՝ անկէ, թէ ինք կը սիրէր Գէորգ Զաւուչը, եւ կը փափաքէր մէկ քանի խօսք փորձանակել անոր հետ եւ հանդիստ որտով մեռնիլ: Ի զուգ վարդապետը կը սպաննայ, որ իր ծածկերը կը կտրէ, եւ արար աշխարհի առջեւ խայտառակ կ'ընէ ու շանատակ՝ իրրեւ կերակուր լուներու եւ աղոսաներու: Յուսահատ՝ նամակ կը գրէ, այդ խայտառակութիւնը յայտնելով Գէորգ Զաւուչին եւ խորհուրդ կը հարցնէ: Գէորգը իր օրտին վիշտը թաքցնցած՝ կը պատասխանէ. «Արեք ինչ կ'ուզէք, ինձի ինչո՞ւ կը հարցնէք, ես պտկուած եմ հրացանի հետ»:

Յետոյ, չկրնալով այլեւս պահել ինքզինք ստոնատիրտ Ֆետայի նման՝ կը քաշուի ծառերուն տակ, եւ Մտեփան վարդապետի ու իր մտերիմ Գալէի երկպալութեան՝ կու լայ երեխայի նման: «Ան թող մեռնի Ս. Յովհաննու վանքի մէջ, իր քեռիին ձեռքով. զիս ալ թաղեցէք Ս. Կարապետի մէջ՝ ձեր ձեռքով»: Գալէն, որքան ալ սառն ու աւանդապահ, ոչ մէկ խօսք չարտասաներ, ձի կը նստի Փեթարի Մանուկի հետ եւ ուղիղ կը քէչ Ս. Յովհաննու վանքը:

Արդէն նամակը հասեր էր դաժան Մկրտիչ վարդապետին. ան կը տատանէր եւ ինչ ընկիւթը չէր գիտեր: Երբ երկու ֆետայի տեսաւ վանքին մէջ, կարծես Եղսոյի հոգեւորները տեսած ըլլար: Վարդապետը արտասուքը աչքերուն մէջ՝ անոնց կը յանձնէ զժրախտ Եղսոն, որ միայն մէկ ինչորանք ունէր անխօս Գալէին եւ լուս Մանուկէն, — սպաննուելէ առաջ տեսնել Գէորգը: Մանուկը կը շնչէ Եղսոյի ականջին. «Ես քու սիրէրն եմ, ինձմէ մի վախնար»: Եւ ձին քաշելով վանքին գոմէն՝ կը նստեցնէ Եղսոն անոր վրայ, ե զուրթ կը տանի, միարձանութեան մէջ այն կարծիքը թողելով, որ Եղսոն կը տանէին սպաննելու համար, իրրեւ ճանապարհ» կ'ըն:

Ձիաւորներն արդէն երկրորդ գիշերը հասեր են Ս. Կարապետի անտառը: Հոն, Գէորգ Զաւուչը կը բերնն Եղսոյի մօտը: Գալէի լեզուն երկու օրուան մէջ առաջին անգամ կը բացուի: Կարծես թէ ան Գէորգի մեծաւորն եղած ըլլայ: Այլալուստ եւ շնորհ զոյգին դատնալով՝ հրաման կու տայ, «Ան մեղ արեւին մէջ մի մտնէք, դուք այսօր եւեթ պիտի պտակուիք. ես պատասխանատու եմ ազգին առջեւ»: Գէս գիշերուան մթութեան մէջ, լուսնի թողտ փայլին տակ, Ս. Կարապետի անտառին մէջ, գիւրքը ձեռքն պտակման ծէքը բերանացի կը կատարէ Մտեփան վարդապետ: Փոքրիկ խաչ մըն ալ անոնց զլխուն վրայ բռնած էր Գալէն, իրրեւ քաւոր. իսկ համեստ Մանուկը իրրեւ հարանդատը՝ կանգնած էր Եղսոյի կողքին:

Գ. ԽԱՆԱՐ, էջ 353-355

Անվարինջի կուռից յետոյ Գեորգը դարձաւ լաւ ու մտածկոտ: Գալէն եւ Փեթրայ Մանուկը հայդուկապետի վիշտը փարատելու համար նրան տարան Ս. Կորապետի անտառները:

Ինչպէս բուր փեղայիններին, այնպէս էլ Գեորգ Չաւուշին արգիւում էր ամուսնանալ: Ասկայն Գեորգին տարիներ առաջ սիրահարուած էր Եզսօ (Հեղինէ) անունով սասունցի մի ազնիւ, որին ընդ ամուսնացել էին Պնակ անունով մի երիտասարդի հետ:

Եւ ահա այն օրերին, երբ Գեորգը Ս. Կորապետի անտառում էր, Հեղինէն, Սասունից փախչելով, եկել էր Ս. Յովհաննու վանքը՝ իր ճեռի Մկրտիչ վարդապետի մօտ:

— Դուքս վանքից, — յստեց յանկարծ Մկրտիչ վարդապետի գայլալից ձայնը: Եւ մե՞նք տեսնե՞ք, թէ ինչպէս վարդապետը այդ կնոջը դուրս էր երում վանքից:

— Քեռի, ես Ս. Յովհաննու վանքն եմ եկել, որ դու ինձ արժանի դարձնես Գեորգի սիրուն եւ ոչ թէ վնտես վանքից, — ասաց Հեղինէն՝ յալահառաջ չոքելով շեմքին, Մկրտիչ վարդապետի առաջ:

— Ես քո մագերէ կը կտրեմ, անամօք:

— Ես Գեորգին եմ սիրում, ճեռի: Մեր ուխտը վաղուց է կապուած:

— Իսկ Պնակը. չէ՞ որ դու ամուսնացած ես:

— Իմ սէրը Գեորգն է:

— Գեորգի հարսնացուն իր երացանքն է:

Այնքան քախանագին էր խնդրում Հեղինէն, որ վանահայրը հետեւեալ երկուսը գրեց Գեորգ Չաւուշին. «Եզսոն խայտառակեց քո անունը: Ընկել է վանքի ուտը եւ քո սէրն է թնկրում: Ինչպէ՞ս վարուե՞ք այս անպատկառի հետք»:

Նամակը տարաւ Գամբրի Սարգիսը եւ նոյն օրը բերեց Գեորգի պատասխանը. «Վարուե՛ք ինչպէս կ'ուզե՛ք. ես պսակուած եմ երացանքս հետք»:

Բանքերը հազիւ էր համակը վարդապետին յանձնել, երբ երկու բըրտնած ձիաւոր կանգ առան վանքի առաջ:

Մէկը Գալէն էր, միւսը՝ Փեթրայ Մանուկը:

— Հայր սուրբ, — թամբերից վայր թռնելով ասացին նրանք, — Գեորգը քիչ առաջ մեզ ծառերի տակ քաշելով, Ստեփանոս վարդապետի ներկայութեամբ ասաց. «Եզսոն թող մեռնի Ս. Յովհաննու վանքի մէջ իր ճեռու ձեռքով, իսկ ինձ թաղեցէ՛ք Ս. Կորապետի մէջ ձեր ձեռքով»:

— Տարե՛ք, ձեզ եմ յանձնում զժբախտ Եզսոյին, — ասաց Մկրտիչ վարդապետը, հաստատապէս համոզուած, որ այդ երկուսը եկել էին Հեղինէին սպաննելու:

Ու չոքեց Հեղինէն Գալէի ու Փեթրայ Մանուկի առաջ.

— Դիտեմ, դուք իմ հոգեւորն էք ու եկել էք ինձ սպաննելու. քայց ըստաննելուց առաջ իմ միակ փափաքն է տեսնել Գեորգին:

— Ես քո անբերն եմ եւ քո փափաքը կը կատարուի, — ասաց Փեթրայ Մանուկը եւ Հեղինէին իր երիվարին նստեցնելով՝ Գալէի հետ շտապեց դէպի Ս. Կորապետի կողմերը:

...Ս. Կորապետի անտառն հասնելով, եւ սկսանաւ եղայ հետեւեալ տեսարանին. գիշերուայ մթութեան մէջ, լուսնի ազօտ լոյսի տակ, գլուխ գլխի կանգնած էին Գեորգ Չաւուշը եւ Հեղինէն: Հեղինէի հասակը մի քիչ կարճ էր եւ ուտի տակ մի կոճղ էր դրուած: Նրանց առաջ կանգնած էր Ստեփանոս վարդապետը՝ գիրքը ձեռքին: Ստեփանոսը քարճարացած էր մի փոքրիկ

խաչ, իսկ վերելից՝ մի մերկացած սուր : Խաչը բոճողը Գալիճ էր, իսկ սուր պահուզը՝ Փեքարայ Մանուկը : Մէկը կնճահայր էր, իսկ միւսը՝ հարսնեղբայր :

— Անուզ արեամ մէջ չմտնեճք, դու սրանց պտակիր, հայր սուրբ, ես պատասխանատու եմ ազգի առաջ, — ինչեց Գալիճի ձայնը :

«Ռանչպարներ», էջ 162-166

ՍՊԱՂԱՆԱՅ ՄԱԿԱՐԻ ԶԻՆԱԹԱՓՈՒՄԸ

Ահա այս ինքնատիպ լեւնականն էր, որ կարող էր բռնել Սերորի տեղը : Բայց իր տարօրինակ յատկութեանց պատճառով անկարող եղաւ համաձայն իր շուրջը բոլոր ֆետայիները : Ինչ ալ ըլլար սակայն, ժողովուրդը կը սիրէր Մակարը, որ իրեն հետ ունէր ֆետայիներու վտերաթիւ եւ ընտիր խումբ մը : Այդ խումբին մէջն էին Քաջ Գալիճն, Ակէն, Յակոն, Զոյուն, Մաթուկը, Ղազարը, Յարոն եւ շարք մը ուրիշներ :

Գ. հատոր, էջ 207

...Մակարի կողմնակից Շէնիկի Ղազարը, Շէնիկի Մանուկը, Զոյուն ու Գալիճն, որոնք Գէորգի հին ընկերներն էին եւ ֆետայիներու ամէնէն քաջները, ոչ թէ Գէորգի հրամանը կը կատարէին, այլ ժողովրդեան առջեւ հրամանը կ'անտեսէին : Այս երեւոյթը կարող էր անխնայութիւն առաջացնել եւ քայքայել զործը :

Ահա այս ինքնատիպն էին, որ դրուած էին առաջ, զորս պէտք էր լուծէի նախ եւ առաջ, որմէ յետոյ հնար պիտի ըլլար դինուորական ժողով դուժարել եւ ընթացք տալ յեղափոխական զործին :

Գանի որ բոլոր ֆետայիներու մէջ ամէնէն ամուր տւանդականը Մակարն էր, որուն մէջ ամէնէն ուժեղը կը խոսէր կարգ ու կանոնի պահպանման անհրաժեշտութիւնը, ես բռնեցի այդ ըզնն եւ ապացուցի, թէ Մակար եւ իր ընկերները իրատուք չունին ժողովրդեան մէջ հակամարտութիւն տալով բերելու իրենց զլխաւորին հանդէպ, եթէ նոյնիսկ Գէորգ ախարներ զործէր : Գէորգ թէ՛ դրսէն՝ Բիրոյի կողմէն եւ թէ՛ ներսէն՝ բոլորի կողմէն ճանչցուած էր իբրեւ ղեկավար : Ձերք դուք բոլորը կը տեսնէք, թէ այս երկպառակութեան կը վնասուի ֆետայական կեանքը, որմէ կը տուժէ միութիւնը եւ ժողովրդի հաւատը զէպի ֆետային, թէ ֆետայիներու զտղանիքը սեփականութիւն է զարմէր ժողովրդեան ու կառավարութեան, ապա այս բոլորի պատճառաւ Սպաղանաց Մակարը պիտի պատժուի դինուորական կարգով, իբր ըմբոստ իր ղեկավարին հանդէպ :

Բոլորը լուռ էին եւ զլուրիները կախ մտիկ կու տային : Ոչ ոք չէր սպասեր, թէ նորից մարդ մը կը համարձակի Մակարի դիմուն վճիռ կարգալ : Ետտեբը անարգար, շատերը անթաքթ ու շատերն ալ վտանգաւոր կը նկատէին իմ ըրածս : Ինձ համար ետ նահանջելու որեւէ ճանապարհ չէի թողուցած, ուստի ընդհանուր լուրթեան մէջ ստեքի ելլայ եւ գառնալով Մակարին, կէս շոյանքով, կէս սպառնական, ըսի. «Թէ որ դուն Մակարն ես Սպաղանաց, որ 20 տարիէ ունի ղէնք է լալկած, թէ որ դու ես ֆետայի գառնիկն ու կարգապահութեան նախանձանդիւր, ապա իբր օրինակ՝ դու իսկ քու ձեռքովդ պիտի պատժուիս, ուստի քանզի՛ր ղէնքերդ ու ինձ յանձնի՛ր » :

Սպաղանաց Մակար ոտքի է կանգնած, տնոր հոյակապ հասակը ու

կէցուածքը պատկեր մըն է շքեղ՝ անտառի լուսթեան մէջ: Ան թիկնեղ է հաստարուն շինարի նման, պլուխը խոշոր է եւ սպիտակով պատուած. անոր աչքքերը մեծ-մեծ ու արիւնով լեցուած, վիշտ ու կատաղութիւն մրցման են ելած, շրթունքները գեղնած կը դողան:

Բայց լուս է Մակար: Անձայն՝ ձեռքերը կը տանի կողքին եւ կը քակէ իր ասորճանակը, սպիտակ խենչալը, մոտին հրացանը՝ Գորդէնի յիշատակ, իր փամփուշտակայնիքը՝ տասնեակ տարիներ պատուով պահպանած. կը համբուրէ գանձնէ մէկիկ-մէկիկ և յանդիմանական նայուածքով կը բերէ կը թափէ առջև: Սպաղանաց Մակար գինաթափ է եղած: Ով որ Փետայի է եղած, կը հասկնայ, թէ ինչ կը նշանակէ գինաթափ ըլլալ. սա ամենաբարձր ու դաժան պատիժն է, աւելի ծանր, քան մահը:

Բոլորս ալ, Գէորդ Չառուշը եւս, խորապէս յուզուած ենք: Փետայիները կարեկցութեամբ կը նային իրենց ընկերոջ ու դժգոհութեամբ համակուած են: Բայց սկսուած գործը կէս ձգել աւելի վնասակար է. ուստի դառնալով դէպի Մակարը եւ անոր միւս կողմնակից ընկերները, ըսի. «Քանի որ, Մակար, դու բարձր պահեցիր Փետայու պատիւը եւ կատարեցիր յեղափոխութեան ու ազդի հրամանը, այժմ ալ նոյն պատիժը պէտք է լինի միւս զինուորների վերաբերմամբ՝ յանուն ազգութեան»:

Շէնիկի Ղազար եւ Լաճկանցի Արթին իրենք իրենց գինաթափ կղան: Իսկ Շէնիկի Մանուկ, որպէս կատաղած վազը, ամուր բռնած իր հրացանը, հեծկտող ձայնով կ'աղերսէ. «Ձէնքս շըմ ի տայ. զնշակ մը տուր էսա ճակատիս. դու իմ պատուի հետ հորի՞ կը խաղաս»: Սպաղանաց Մակար աչքերը կը շոյ Մանուկի վրայ. յանկարծ հրացան մը կը վերցնէ մօտի ընկերէն և կը մօտենայ հպարտ Մանուկին, զնուտղով հարուած մը կ'իջեցնէ թիկունքին եւ, հրացանը խլելով՝ կը բերէ կը դնէ առաջ: Այնուհետեւ քաշուելով ծառերու տակ, վերաւոր ատիւծի նման, հոնգուր-հոնգուր արտասուք կը թափէ, իր գինուորներու դուխնեղը իր կրծքին քաշած:

Տեսարանը խիստ յուզիչ է: Կարտասուէ նաեւ Գէորդ Չառուշ, որ այլեւս չզիմանալով՝ կը մօտենայ Մակարին եւ անոր վզին փաթթուելով միասին կու լան: Ես կը մնամ միայնակ. սիրտս աստիկ լեցուած է եւ կ'ուզեմ լալ, բայց վճռած եմ գինուորական օրէնքը գործադրել անշեղ: Չապելով ըզզացումներս, կը նստիմ կր գրեմ Շէնիկի գիւղը, որ այնտեղ գինաթափ ընեն կիսամուտ ինկած հիւանդ Չոյուն:

Այս դէպքը բոլոր Փետայիները միացուց, մէկ հոգի դարձուց: Բոլորն ալ դուրդուրանքով իրարու փարեցան: Իմ ուզածս ալ այդ էր արդէն, եւ կը սպասէի, որ վճիռը բեկանելու խնդիրք տային: Մէկ ժամ յետոյ Գէորդն է, որ կը պահանջէ. «Եղածը եղած է, պատիժը բաւ է, զննքերը դարձուր»: Բոլոր Փետայիներն ալ կը ցանկան այս եւ զոհ պիտի մնան, եթէ խնդիրը փակուի այդքանով: Վճռուեցաւ, որ Մակար երկու օր առանց խենչալի անցընէ, միւսները՝ երկու շաբաթ, իսկ Մանուկ ամբողջ մէկ ամիս Ծպտեալ պիտի մնայ:

Բ. հատոր, էջ 290-302

Մասնայ տունիկ իշխանը կամեցում էր իր ձեռքը վերցնել փեղայիներին զնկավարութիւնը եւ ինքը իշխել նրանց վրայ: Եւ նա ունէր կողմնակիցներ քէ՛ ժողովրդի եւ քէ՛ փեղայիների մէջ: Մասնայ բոլոր ազդեցիկ իշխանները նրա կողմն էին: Նրան համակիր փեղայիները քէնէ փոքրաթիւ էին, բայց բոլորն էլ ընտիր էին: Այդ խմբի մէջ էին Գալեմ, Փեթարայ Մանուկը, Փե-

Քարայ Ախոն, Լանկանցի Արթինը, Չալսն, Մորուք Կարապետը եւ Շէնիկցի Մանուկը :

Այդ փեղայինները Մակարի գլխաւորաբեամբ այլեւ չէին ենթարկուում Չաւուշի երամաններին :

.

Եւ սեա մի օր, երբ բոլորս հաւաքուած էինք անտառում՝ երեսաց «Քարայր» (Հրայրը)՝ ամբողջապէս կերպարանափոխուած : Ո՛չ տիկ կար շալակին, ոչ էլ ազգատիկ գերվիշի երեւոյթ ունէր :

Հագած էր փեղայական գորշագոյն զգեստ եւ ձեռքին զէնք կար :

Արարոյի հին գիւնուորներից մէկի՝ հայդուկապետ Գեորգ Չաւուշի գէւ խոսովութիւն էր կազմակերպուած : Նա եկել էր պատժելու պառակտիչներին եւ վերահանգնելու խախտուած միութիւնը :

Իսկ ո՞վ էր պառակտիչների գլխաւորը՝ Սպարապետ իշխանը : Բոլոր փեղայինները գլուխները կախ, լուռ կանգնած էին կազմիների տակ : Միայն Չալսն էր բացակայ : Ու բոլորիս համար անհասկանալի էր, թէ կը գտնուի մէկը, որ կը համարձակուի Մակարի գէւ վճիռ արձակելու :

Եւ «Քարայր»ը որոշեց զինաթափ անել Սպարապետ իշխանին :

— Թէ դու Մակարն ես Սպարապետ, որ քան տարուց աւելի զէնք է շալակել, եթէ դու նախանձախնդիր ես փեղայու պատուին աւ կարգապահութեանը, ապա, իբրեւ օրինակ, քո իսկ ձեռքով պիտի պատժուես. ուստի, քանզի զէնքերդ եւ նետիք ցած, — ասաց «Քարայր»ը՝ սպառնական դիմելով Սաւանյ իշխանին :

Մակարը ապառաժի պէտ կանգնած էր Գալէի կողքին, այեհար խոբոր գլխով, աչքերը արիւն լցուած, շրթունքները զեղնած, բեզերը խոտնուած իրար :

Նա լուռ էր, շփոթուած :

— Գու, Սպարապետ տէր, — շարունակեց «Քարայր»ը, — վտանգաւոր հայդուկ ես այժմ մեզ համար : Գո թիկունքիմ կանգնած եմ սալաքիկցի մի քանի իշխաններ, իսկ Գեորգ Չաւուշի կողքին՝ ամբողջ Տարօնը եւ բովանդակ Հայաստանը :

Մակարը անձայն ձեռքերը տարաւ գէպի կողքը, քանզի իր արքանակը, սպիտակաբաւ խոնջալը, մտիմ երացանը, խաչկապ վամիշտակալները, որ տասնեակ տարիներ պատուով կրել էր իր վրայ եւ յանդիմանական խոժոռ նայուածէով անջատուելով խմբից՝ համբուրեց ու թափեց Գեորգ Չաւուշի եւ «Քարայր»ի առաջ :

Ձիւնաթափուելը ամենամանր պատիժն է փեղայու համար : Եւ մեք գրպուած կարեկցութեամբ նայեցինք մեր աւագագոյն ընկերոջը, որ մերկացած էր զէնքերից : Նայում էինք լայն ուսերով եւ խոշոր բեզերով սպարապետի այդ քան զինուորիմ, որ գլուխը կախ եւ անզէն կանգնած էր մեր առաջ :

«Քարայր»ը երամայնեց զինաթափ անել նաև Մակարի կազմակերպներ Լանկանցի Արթինին, Գալէին եւ Շէնիկցի Մանուկին : Առային երկուսը իրենք իրենց զինաթափ եղան, իսկ Շէնիկցի Մանուկը զինազրեց՝ վագրի պէտ ամուր գրկելով երացանը. «Ձէնքս չեմ ի տայ : Գնդակ մը տար իտաւ նակտին. դու իմ պատուի հետ ետի՞» կը խաղաս, — ազերանց նա՞ զիմելով «Քարայր»ին :

Սպարապետ Մակարը լուռ նայեց Մանուկին, ծանր քայլերով մտնեցաւ

սասունցուն, իլեց նրա հրացանը, խզակոթով մի հարուած իջեցրեց ընկերոջ քիկունքին եւ բարկութեամբ շարտեց իր թափած գէնգերի վրայ :

«Քարայր»ը կարգադրեց ինձ եւ Արտոնեայ Ջնդոյին գիշերով գնալ Շէնիկ գիւղը եւ զինաթափ անել նաեւ Ջուլային, որ վիրաւոր պատկած էր այնտեղ :

Մի ռոմանայն լսուեց եւ խոշոր տրեխներով մի հսկայ տղամարդ Գեորգ Ջաւուշի մօտով անցնելով, շարժուեց դէպի անտառ : Մօտեցաւ իր պէտ մի հսկայ կազմու, կիսաթեփ յեմուեց նրան՝ ծերացած գլուխը դանդաղ իջեցնելով կրծքի վրայ :

Սպազանաց Մակարն էր : Նա հոնգուր-հոնգուր արտասուում էր՝ տառապազին տանջուելով իր մերկութեան ու մեմութեան մէջ : Ամենքս էլ յուզուած էինք եւ վշտից մեր աչքերը յառել էինք վար :

հռոված էր Գեորգ Ջաւուշի հոգին : Նա մօտեցաւ ծերունի Մակարին եւ նրա վզից կախուելով՝ չոքեց նրա առաջ :

Սասունցի էին երկուսն էլ, եւ այդպէս իրար պլուլուած՝ տղու պէտ լուռ արտասուեցին կազմու տակ :

Ուղիւ մէկ ամիս Սպազանաց Մակարը մնաց առանց գէնգի : Նա իր ընկերներով պատժուել էր փեղայակամ կարգապահութիւնը խախտելու եւ իրենց հայդուկապետի դէմ ըմբոստանայու համար :

«Մանկարներ», էջ 167-170

ՍՈՒՂՈՒՅԻ ԿՈՒԻՆԸ

Երազիւ մէջ տեսայ, որ Առաքելոց վանքն հմ. ուխտաւորներ այնքան եկած էին, որ վանքի բակը, չրջակայքը, սար ու ձոր մարդոցմով էին լեցւած : Գէորդը հազած էր եպիսկոպոսական շուրջառ, գլխուն թագ՝ մարդարատէ ակերով զարդարուած. բոլորի աչքերը սեւեռուած էին անոր, հիանալի էր : Ես ինծի նայեցայ եւ տեսայ, որ ես ալ հազած եմ եպիսկոպոսական հագուստ ու զարդարուած : Նայեցայ Գէորդին եւ տեսայ, որ անոր մարմինը կը նօսրանայ շուրջառի տակ, ձեռքերը կը մշուշանային ու թափանցիկ կը դառնային : Ի վերջոյ շուրջառը մնաց, Գէորդը աներեւոյթ էր դարձած, իսկ մենք բոլորս ալ այդ տեսարանը կը դիտէինք սարսափահար ու երկիւղած :

Գրտնած ու վախեցած արթնցայ ու երազս պատմեցի Գէորդին : Գէորդ ծիծաղեց ու ըսաւ. «Վերադ բաց է մնացել, երազ ես տեսել, ինչ տարօրինակ մարդ ես, կարծես դպրոց իսկ չես տեսել. թէ որ երազիդ վախէն պաղ զբրտինք ես մտել, զնա՛ լողացիր» : Կատակի տուինք, լողանալու խորհուրդը ինծի հաճելի թուեցաւ, դոմի մէկ ծայրին տաշտը դրին, թոնիրը տաք ջուր պատրաստեցին ու Շէնիկի Ղազարը զիւ լողցուց. դուրիս օճառուած էր, աչքերս չէի կրնար բանալ. յանկարծ Գէորդ, կուժ մը պաղ ջուր լեցուց վրտառ. սարսուռի եւ վեր թռայ, բայց գլորուեցայ ցեխի մէջ. ֆիտայիններ բոլոր սկսան քահ-քահ ծիծաղել Գէորդի շարճնիութեան վրայ. ես ալ կատաղած տաք ջուրը խլեցի ու լեցուցի Գէորդի վրայ. դարձեալ ծիծաղ ու զբքիջ. ոչ ոքի մտքէն իսկ չէր անցնէր, որ մեր այս կատակը վերջինը պիտի ըլլար :

Ահա ներս կ'իջնայ Սուլուխայ Մեծրոպը, դոյնը նետած. «Զօրքեր են գալլոս : «Շա՛ւտ են թէ քիչ», հարցուց Գէորդ : «Խօփերայ դուշտ զըմէն սեւ- digitised by A.R.A.R.@

ցած է : Գիտակը առաւ եւ դուրս ելաւ Գէորգ, տանիքի ծայրէն երկար նա-
յեցաւ եւ մտադրազ վերադարձաւ : Խորախիկները կը պաղին ափսոսի վրայ, ոչ
ոք ախորժակ ունի ուտելու, միայն Գալէն է, որ հանդիստ ու դանդաղ կ'ու-
տէ կը կշտանայ, յետոյ անվրդով շիպուխը կը վառէ՝ առանց տեղէն շար-
ժելու :

Մերոսոյ խորհուրդը կու տար գլխաւոր Փետայիններուն ձի նստիլ եւ հե-
ռանալ, իսկ միւսները թողուլ գիւղացիներու հետ միասին եւ անոնց բախ-
տակից դարձնել : Իսկ հին Փետայի Պողոսը կ'ըսէր. «Ես գիւղը պիտի մնամ,
կուր է՝ թող կուր լինի. էլ ինչո՞ւ թողնեմ գիւղն ու մաս մը ընկերներս թըլ-
նամու ձեռքին : Սէյտոն իրաւացի էր :

..Երեք գլխաւոր դիւրեւերու կը բաժնուինք, առանց հաշուելու կա-
մուրջի գլուխի դիրքը, ուր պիտի մնան Սաղոն, Յակոն, Հասանոն եւ Սու-
լուխի մեր մարտական խումբէն իմբակ մը : ..Ինծի բաժին ինկաւ եռանկ-
եան գլուխի խարտապան, հետս էին Սէյտո Պողոսը, Ալիզըռնանի Մուքոն, Սը-
ճօնքի էլոն ու Մեխիկը, սուլուիցիներէն Սամոն՝ 6-7 ընկերներով :

Տանտոցները լեցուցած կը սպասենք. կը պայթի Գէորգի տասնոցը, որ
նշան է համազարկի : ..Ոմանք մեռած ձեւանալով յանկարծ ոտքի կը կանգ-
նէին ու կը կրակէին մեր վրայ : Ասոնցմէ ոմանք օդոսկեցան ու մտան պա-
տերու տակ, իսկ մեծ մասը մնաց պռակած :

Երբ դերեզմանոցէն զօրքը կը յառաջանայ, Գէորգի կողքին՝ երկու աշ-
քերէն վերաւոր կ'իյնայ Գալէն, կը կուրանայ ու մահամբձ կը դառնայ.
Գէորգ կը պատուիրէ Գալէն իջնել տանիքէն վար տան մէջ ու ինք կը շա-
րունակէ դիմադրութիւնը, բայց երբ արագ հրացանածուրթեան պատահառով
հրացանի սուրման կ'ամբարնայ եւ Գէորգ կը ջանայ ուղղել զայն, կը վերա-
ւորուի ձախ ծունկի տակէն, դնդակը անցնելով ալ թիկունքի տակը :

..Մեզի կը մնար գիւղէն դուրս ելլել :
Գէորգի եւ Գալէի մէջտեղ նստած է Եէնիկի Ազար սգաւոր. Սէյտո
Պողոսը յենած է պատին : Երբ կը մտենամ անոր, Սէյտոն կ'ըսէ. «Գալէն
պրծնի է, Գէորգը դեռ ողջ է» : «Ելէք, պիտի երթանք», կը հրամայեմ բո-
լորին : Բոլորը կը կանգնին, բացի Գալէնն ու Գէորգէն : «Գէորգը կապէք
ձիու մէջքի վրան, իսկ Գալէին Եփրատը նետէք» : Ծանր էր այս պատգամը,
բայց անհրաժեշտ էր շտապել : Ազար բռնեց իր ամենահին ընկերով ձեռքե-
րը, լաւ մը համարեց արիւնոտ երեսը. չլացաւ. Գլորոն ալ բռնեց Գալէի
ոտքերը եւ ծանր սրտով նետեցին Եփրատի մէջ :

Գէորգը կապեցին ձիուն վրայ. ան իր ցուերէն նուազած՝ ձայներ կը
հանէ, ինչ-որ բան կ'ուզէ ըսել, բայց չի հասկցուիր. ժամանակ չկայ.
շտապելու է : Յառաջուպահ կը գտանայ Եէնիկի Ազար՝ 10 հողիով. անոր կը
հետեւիմ ես՝ 20 հողիով. իմ հետեւն է Սէյտո Պողոսը՝ վերաւոր Գէորգի հետ.
Կ'ընկերանան անոր մշեցի Ռուբէն եւ Տիգրան, իսկ ասոնց հետեւէն՝ գիւղի
ամբողջ ազգաբնակչութիւնը :

Գնդակները կ'ուղղուին մեր վրայ եւս. Գէորգի ձին կը տապալի գե-
տին. մշեցի Ռուբէն արագ կերպով կ'արձակէ Գէորգը ձիու վրայէն ու կը
շալկէ. ձին կը գլորի գետին մէջ :

Կը ժօտենամ Գէորգի վիճակը հասկնալու. մշեցի Ռուբէն կը հասկցնէ
ինծի, որ դեռ ողջ է եւ կը հասկնայ ամէն ինչ. սիրտ տալու համար ըսի Ռու-
բէնին. «Վէրքը թեթեւ է, մէկ շարաթէն պիտի լաւանայ» : Գարձայ Գէոր-

զին. «Գիտե՞ս դու, Գէորգ, ազատուած ենք»: Անընդհատ կը համբուրէի զինք: Ան գլխի ընկաւ, նուազած ձայնով կըրցաւ ըսել. «Դո՞ւ ես, լմնցած է, ջանդ կի մը համար խուճբ մի վտանդէ, անցէ՛ք-գնացէ՛ք. հիշո՞ն եւ վարդաէն քեզի ամանաթ...»: Ժամանակը թանկ էր, պէտք էր շտապել. Գէորգի կամ- քին հակառակ, շարկեցինք զինք եւ առաջ շարժեցանք:

Կը մասածէինք մեր ընելիքի մասին, բայց կրակէն ազատած՝ ծովն ենք ինկած: Մեղքագետը կը միանայ Եփրատին Ղաշղալթախի ժօտերը՝ կազմե- լով հասնելին մը. մէկ կողմը Սուլուխն է, ուր զօրքն է, միւս կողմերը այդ երկու յորհած գետերն են: ...Կ'որոշենք Գէորգը թողուլ եղէ՛զնուտաներու մէջ, պահապան դնելով Սուլուխի Մաղոն, Չըրոն եւ Մեքրոպը:

...Երկու լուրորդներ կը մտնենան, նախ կը շափեն ջուրը, յետոյ ետ կու գան, կը բռնեն Շէնիկի Ղազարի մեռեալը եւ ջուրը կը մտցնեն. կ'երթան գե- տը կ'անցնին:

Կէս զիշերը անց էր. կրակէն վառեցինք ծխախոտները եւ սկսանք վա- ղել. կ'ուղէինք լոյսը չբացուած հասնել Ղըղըլազանի լեռները. բայց ահա արշալոյս է եւ մենք դեռ Սնճնուտ փոքր գիւղի (20-25 տուն) գերեզմանոցն ենք, ուր կը բարձրանայ Հինաուրց մատուռ մը: Կը նստինք մատուռի դրա- նը, գիւղէն 100 քայլ հեռու:

Արեւ չելած՝ եկաւ ժամկոչը եւ մեզ ներսը գտնելով քարացած մնաց: Ուզեցինք համոզել, որ մեզ գիւղ տանի. ըսաւ, թէ Սուլուխի կողմերը կուի կայ, գիւղացիք կը փախնին վախէն, լու է, որ մենք մնանք մատուռին մէջ: Ժամկոչը ցոյց տուաւ խորանին մէջ քար մը, զոր բարձրացուց եւ մենք վեր կ'լանք, իրարու վրայ նստելով հազիւ տեղաւորուեցանք, յետոյ մեր թաքըս- տոցի քարը ծածկեցինք, միայն նեղ ծակ մը դուրսը կը նայէր: Ղազար հե- ոտտես էր եւ զգոյշ. ան խորհուրդ տուաւ ժամկոչն ալ մեզ հետ բանտար- կել: «Արխային քնենք. էդա ժամկոչը վախկոտ կ'երեւայ, իրա վախիցը մեր սրտ դուրս կու տայ»: Համաձայնեցայ Ղազարի խորհուրդին: Ղազար դուրս ելաւ եւ մատուռի դրան մօտ կանգնած ժամկոչը ներս բերաւ, ըսելով. «Գե- ղի պարոնը ըսելիք ունի. վեր ելի տեսնենք»: Խեղճը վեր կ'լու եւ, տեղ չգըտ- նելով, պղպեցաւ Մոսիկի գոգին մէջ: Ղազարն ալ եկաւ եւ փակեց թաքըս- տոցի քարը:

...Գէորգ յենած է եզեր խուրձ մը եղէ՛զի վրայ, մէկ բուռի մէջ պինդ բռնած հողեվարքի ատեն պոկած եղէ՛զները. երեւի տանջուելով մեռեր է:

Գ. հատոր, էջ 161-179

Ֆեզայիմերից մէկը գիշերը երազ էր տեսել եւ մեզ շուրջը հաւաքած՝ իր երազն էր պատմում: Երազում տեսել էր Գէորգ Չաւուշին եպիսկոպոսա- կան շուրջատի մէջ, մարգարտեայ քազը գլխին. Գէորգը յամկարծ աներեւու- քացել էր եւ մնացել էր միայն դատարկ շուրջատը:

— Վրազ բաց է մնացել. երազ ես տեսի, — ասաց Գէորգը ծիծաղե- լով: Շենիկցի Մանուկը եւ Ալիգոնանցի Մուսնի ջուր տափացրին, իսկ ես եւ մշեցի Տիգրանը երազատեսին գունը կանչելով՝ Յստեցրինք տաշտակի մէջ: Գէորգ Չաւուշը յամկարծ մի կուժ պաղ ջուր առնելով՝ լցրեց նրա վրայ: Ֆե- ղային վեր քաւա տաշտից եւ ամանով ջուրը իմ մեռէից փախցնելով, լցրեց Գէորգի գլխին: Սպազանաց Գալէն չէր մասնակցում այդ գուարեութեանը: Նա օգայում հանգիստ նստած՝ ծխում էր: Յամկարծ ներս մտաւ սուլուխցի

Մերսոպը՝ գոյնը թռած : Նա յայտնեց, թէ Մուշից գործ է գալիս եւ արագ մտնեցաւ պատին, որ գեմեքը կայի :

Հայդուկայեւոր հեռագիտակը վերցնելով՝ բարձրացաւ տանիք, իսկ եւ կարգադրեցի գեմեքը կայի : Միայն Գալէն էր անշարժ նստած : Զարմանալի դանդաղաշարժ էր Գալէն : Կողին թնգանօթ պայթէր, երբեք զէմքը չէր փոխի, ոչ էլ շարժուճելը :

- Այ Գալէ, վեր կաց, — ասացի :
- Հըջ կացէք, — ասաց Գալէն՝ ծխամորճի կրակը ճարգելով :

Տանիքից իջաւ Գեորգ Զաւուշը :
— Քոստ Բիմրաշին է գալիս, — ազդարարեց նա՝ ստուիկ մտազբազ, հեռագիտակը ձեռքի մէջ պահած : Կարգադրեց անմիջապէս ձի նստել եւ շտապ հեռանալ Սուլուխից, քանի որ անկարելի էր մի տասնեակ մարդով կռիւ մը-դել մի ամբողջ բանակի դէմ :

Ալուսահնչու Սէյտան վնասբար յայտարարեց, որ ինքը գիւղը չի լքի : Երան միացան նաեւ միւս Փեղաշիները եւ Բուրջ Հասանն :

Գեորգը տեսնելով, որ մեծ շրջապատուած ենք Մուրատ գետով ու գործով եւ նակարամարտն անխուսափելի է, ուսը գցեց «Արաբօ»ն՝ իր հրացանը, եւ ոտքի վրայ որսչեց դիրքերը :

Ինձ յանձնեց գիւղից դուրս մի ակերականոց... Ես ինձ հետ վերցրի Ալուսահնչու Սէյտային, Ալիզոնանցի Մուսային եւ Մշեցի Տիգրանին, նաեւ սուլուխիցի մի քանի կռուողների եւ մտայ իմ ակերակի մէջ :

Ու յանկարծ տանիքից պայթեց Գեորգ Զաւուշի «Արաբօ»ն, որին հետեւեց մեր համագորակը : ..Մի քանիսը մեռած ձեւանալով՝ յանկարծ ոտքի էին կանգնում եւ կրակում : Ասկեարներից մէկ-երկուսը մագլցեցին պատերն ի վեր՝ գեմեքը մեզ վրայ ուղղելով :

Յանկարծ նկատեցինք, որ Գեորգ Զաւուշի տանիքը լուռ էր : Գալէն չկար, իսկ կռուողներից մէկը, մէջքով դէպի մեզ չափած, ինչ-որ բան էր ուղղում տանիքին :

- Գեորգը գարկուած է, — շնչաց Սէյտան :

Ես արագ վազեցի դէպի Գեորգի դիրքը : Գալէն՝ երկու աչքերից կուրացած՝ մտեամբն պահած էր գոմի չրհորի մօտ, իսկ Գեորգ Զաւուշը վիրաւոր նստած էր կողքին : Հրացանի խնուած փողն ուղղելու միջոցին սուլի գնդակը խոցել էր հայդուկայեւորի ձախ ծունկը՝ աչքիկունքից անցնելով :

Վերջապէս մեծ ստիպուած եղանք թողնել Սուլուխը, որովհետեւ Մուշից նոր գործ էր եկել եւ թնգանօթների որսը մեզ սեղմել էր գիւղի եւ Արածանու միջեւ :

Տանիքից իջնելով՝ ես վերջին անգամ մտայ այն տունը, ուր Գեորգ Զաւուշը եւ Գալէն էին պսակած : Շէնիկցի Մանուկը սգաւոր նստած էր երկուսի մէջտեղ : Սէյտան, չախմախիմ ուսին, յենուած էր պատին : Նա ձեռքից վիրաւոր էր : Մշեցի Տիգրանը եւ Ալիզոնանցի Մուսան նստած էին ամեն մէկը մի դիրքով :

- Գալէն պրծել է, իսկ Գեորգը դեռ ողջ է, — ծանուցեց Շէնիկցի Մանուկը :

Ես հրամայեցի շտապ թողնել Սուլուխը : Բոլորը ոտքի կանգնեցին, բացի Գալէից եւ Գեորգ Զաւուշից :

— Գեորգին կայել ձիւ մէջքին, իսկ Գալէին գետը նետել, — կարգադրեցի ես :



Սուլուխցի Մեսրոպը մեզ մի ձի բերեց: Գեորգին կապեցինք ձիու մէջ-
ֆին:

Շենիկցի Մանուկը դարձաւ առաջապահ: Ետեւից եւ էի գնում՝ մի քա-
նի հայդուկներով: Իմ ետեւից գալիս էր Ալուառիեցու Սէյտան՝ վիրաւոր ձեռ-
քով ձիու սանձը բռնած: Ձիու աջ կողմով գնում էր Մշեցի Տիգրանը, ձա-
խով՝ Ալիգոնանցի Մուհոն: Սրանց ետեւից գիւղի բնակչութիւնն էր շարժ-
ւում՝ Սուլուխցի Մեսրոպի գլխաւորութեամբ:

Մուշ էր, եւ ասկեարները կարծեցին, թէ մենք իրենց գորգից ենք:
Վերջում գլխի բնկան եւ կրակեցին մեզ վրայ: Գեորգի ձիին խփուեց: Ես
Գեորգին ձիու մէջ ֆից արագութեամբ իմ շալակն առայ: Ձիւն գլորուեց Արա-
ծանու մէջ:

Ես մօտեցայ Գեորգի վիճակն իմանալու:

— Վերջը թեթեւ է, Գեորգ, — յուսադրեցի ես՝ Սէյտանի շալակից
նրան եղեգների վրայ իջեցնելով:

— Իմը վերջացած է եւ Աստուծոյ պատիժը կատարուեց, — նուազած
ձայնով շնչաց հայդուկապետը, — մի ջանգակի համար չարժէ խաւերը վը-
տանգի մատնել: Ինձ թողէք էստեղ, իսկ դուք անցէք, գնացէք: Եղստն ու
Վարդգէսը ձեզ ամանաթ:

Խաշխալտաղի մօտ Մեզրագետը կրածանուն միանալով՝ կազմում է ե-
ռանկիւմի. մի կողմը Սուլուխն է, միւս կողմը՝ երկու գետ: Որոշեցինք
Գեորգին բողմել եղեգնուտ, մօտը պահապան կարգելով Սուլուխցի Մեսրո-
պին:

Երկու լուզորդ չափեցին գետի խորութիւնը: Ջուրը խփում էր մինչեւ
թեւասակ, իսկ տեղ-տեղ՝ գլուխներից բարձր: Լուզորդները նախ անցկացը-
րին Շենիկցի Մանուկին, ապա ինձ եւ միւս հայդուկներին:

Մեր նախադարձին Սնձնուտ անունով մի գիւղ էր ընկած: Լաշոը չը-
բացուած՝ աչք գիւղի ժամկոչը մեզ գտաւ իրենց գերեզմանատան մատուռի մէջ:
Մաստիկ զարմացաւ եւ յայտնեց, որ իրենց գիւղում գորգ կայ եւ խորհուրդ
տուեց մատուռից դուրս չգալ: Ժամկոչը բարձրացրեց խորանի ալաբաստինը
եւ մենք վեր ելինք: Թափուեցինք ալաբաստին, իրար վրայ նստելով: Շենիկ-
ցի Մանուկը փորձուած մարդ էր, զգաց, որ ժամկոչը վախկոտ է եւ կարող
է վախից մեր տեղը յայտնել, ուստի, նրան ներս փաշխով՝ նստեցրեց իր
ծնկներին, սալաքար դանդաղ իջեցնելով մեզ վրայ:

Գեորգ Ջաւուշ մեռել էր Մայիս 25ի արեւածագին, թո՛ւ մէջ սեղմած
հոգեվարքի ժամին պոկած կակաչները:

«Ռանչպարնէր», էջ 170-175

ԱՐԺԵՉԱՓԱՑԻՆ ԱՆՅԵԹԵԹՈՒԹԻՒՆ - Բ.

«Ռանչպարներ»ու գաղափարական էութիւնը ձեւազեղծած Սուրէն Աղարարեանի ելույթին վերաբերող մեր նախորդ նշմարին վերջաւորութեան կ'ըսուէր, թէ՛

«Մինչեւ հոս նիւթ եղաւ Սուրէն Աղարարեանէն վերը մէջքերուամ պարբերութեան կէտը, յաջորդ կէտը եւ անոր հետեւեալ միւս զնաստատումները» ուշադրութեամ կը յանձնենք մեր յաջորդ քիւով»:

Ինչպէս նշուեցաւ, ըստ առաջին կէտին, այսինքն՝ ըստ զննադատին, Քաջիկ Դաշտենցի «Ռանչպարներ»էն ստացուած Հիմնական տպաւորութիւնը հաջողական շարժումը զդաշնակցութեան գաղափարախօսութիւնից սահմանազատելու տեղեկեցն է, — պատմականօրէն միանգամայն ճիշդ տեղեկեց»:

Երկրորդ կէտին անցնելէ առաջ անգամ մըն ալ յիշեցնենք, որ հեղ մը տպուած, ըստ այնմ կերտուած եւ սերունդներու զննութեան դիմացած պատմութիւնը տնտեսական մարդու մը կեանքին չի նմանիր, որ կամայական որոշմամբ գլուխը մարմինէն զսահմանազատելով՝ վերջացած համարուէր ամէն բան: Ըսինք, որ Քաջիկ Դաշտենց նման «դենտենց» մը չէր փայփայած, եւ բռն ուղեցինք, որ զննադատ Աղարարեանի սուրբ աղեքանդրեան յատկանիշ մը չունի, որ կարենար յաղթահարել պատմութեան դիմադրութիւնը, վերահասնոյ իր ցանկութեան համապատասխան հուն մը բանալու համար անոր:

Անւաւանիկ եւ պարբերութեան կէտին շարունակութիւնը.

«Բանն այն է, որ հայդուկներն իրենց բուն ժողովրդական արմատներով չէին կարող յեմարան լինել դաշնակցութեան նեղ «քաղձանքներին» հոսմար»:

Քաջիկ Դաշտենցի «Ռանչպարներ»ուն ընդդիմած ժամանակաշրջանը կը սկսի Արարոյի անունին առաջացուցած բուն հմայքին օրօք (1893) եւ կ'երկարի մինչեւ Ռամանեան Սահմանադրութիւն (1908), իբրեւ տարածութիւն բացառաբար ունենալով Տարօն աշխարհը: Տուեալ ժամանակին ու տարածութեան մէջ, անգամ մը յիշեցինք արդէն, ղեկավար մակարդակի վրայ Դաշնակցութիւնը յաջորդաբար անձնաւորեցին Արարոն՝ 1893ին երդում տուած, Գուրգէնը՝ նոյն օրերուն, Սեբոբ Աղբիւրը՝ 1895ին, Հրայր Դժոխքը՝ Սեբոբ Աղբիւրէն առաջ, Վահանը՝ անոնցմէ առաջ, Գէորգ Չառուչը՝ Արարոյի հետ, Ռուբէնը՝ երիտասարդութեան սեմին, եւ իրենց հետ, զիչ մը առաջ կամ զիչ մը ետք, զինակից միւս շարքերը, Սպաղանաց Մակարը, Գալէն, Գալէին նահատակակից Գակէն, եռամեծար Մանուկները, Բալարէի Կարապետը, Չուլումաթը, Առաքելը, Մուշեղը, Ափու Աւագը, Ճարտարը, Փեթարայ Իսրոն, Ախոն, Մշեցի Տիգրանը, Ծէնիկի Չոլոն, Մօրուք Կարապետը, Չընթոն ու Սէյտա Պօղոսը, եւ միւսները:

Կրնա՞յ մարդ մը առանց իր իղճին դաւանանելու ըսել, որ ղեկավարութեան մակարդակին վրայ վերը յիշուած առաջին անուններուն եւ երկրորդ խումբին մէջ եղած էր, կար կամ կրնար ըլլալ սրեւէ զսահմանազատում»:

Պատասխան չունեցող ուրիշ հարցում մը. —

«Մահմանազատման» բանդազուշանքը իբրեւ իրականութիւն ընդունելու պարագային, ինչպէ՞ս պիտի գնահատենք, օրինակ, Գուրգէնը, որ կ'անձնաւորէր Դաշնակցութիւնը եւ ամբողջական առումով ֆիտայի էր միտամա-

նակ, Հրայր Դժոխքը՝ նոյնպէս, Աերոբ Աղբիւրը՝ դարձեալ, Գէորգ Չաւուշը՝ նախորդներուն պէս: Ռուբէնը՝ իր կարգին: Դաշնակցութեան ո՞ր ղեկավարը Փետայի չէր այդ օրերուն ու այդ բարձրաւանդակին վրայ, եւ Փետայիներէն ո՞ր մէկը մինչեւ ուղնուծուծը դաշնակցական չէր, որ նահատակ այդ սուրբերը իրենք իրենց մէջ առաւելոն յորստացնէին: Երբեք չէր զործուի Հայրենիքի սրտին:

Երկին դառնանք մէջըրեռուած վերջին պարբերութեան ու դարձեալ մը տարբերէք անոր մէջ կուսակուած ժողովրդական արձատներու հարցը, յենարանային բաժինը, եւ երրորդ մը, որ կը վերաբերի «դաշնակցութեան» ներքին զարգացման:

Այսինքն.

Դաշնակցութեան Հիմնադիր ու ղեկավար տարրին եւ Դաշնակցութեան դրօշին տակ բազմապատկուած Փետայիներուն տարբեր-տարբեր արձատներ վերադարձու ժողովութիւնը նուազագոյնը չզիտութեան փաստ է, կամ բացառապէս զրպարտութիւն, որ չզիտութեանէն աւելի բախտարեր բարենիշ մը չէ: Փետայական միջոցառումներէ մէջ Դաշնակցութեան անունով գործող ղեկավար տարրերը յիշեցինք: Հայրուկներ էին ամէնքն ալ, բոլորն ալ ժողովրդական արձատներով: Արդարեւ, արձատներու առումով արձատական ի՞նչ տարբերութիւն ունէին Սպարապետ Մակարը ու Մակարի պաշտամունքը վայելող ազգային Գորգէնը, որ ղեկավար էր, եւ ուրեմն, ըստ Աղաբաբեանի, նովին բանիւ նեղ «բազմանքներ» ծառայ մը:

Բայց ի՞նչ նեղ «բազմանքներ» մասին է խօսքը, ո՞ր նեղ «բազմանքներ» համար, օրինակ, Հրայր Դժոխք կը պտտագամէր, Ռուբէն զրի Պառնէր ու Պառնէր Դաշնակցութեան կ'արտագրէր, թէ՛ «Յեղափոխականը պիտի մեռնի կամ գնդակով, կամ կ'ախաղաղուի, կամ կ'ախաղաղուի մէջ»: Իրապէ՛ս, ո՞ր նեղ «բազմանքներ» մասին է խօսքը: Զուտ անհատական, կուսակցական: Այդ պարագային կա՞յ, եղա՞ծ է աշխարհի վրայ բնութենէի տրամաբանութիւն մը, որուն Հեռ Հնարաւոր ըլլայ Հասկնալի այն անօրինակ իրականութիւնը, որ Դաշնակցութեան բազմանքները անձնաւորած ղեկավար տարրերը առաջինը իրենք ողջակիզուեցան իրենց սահմանադրած յեղափոխական «բազմանքներին», յանուն ազատութեան, սուլթանական բռնակալութեան դէմ ծառանալու նախօրէին ու ընթացքին, ուսմամբ՝ Բարդէն Միւնի, Քրիստափոր. կատարանով՝ Արամ Արամեան, Պետրոս Սերեմճեան. զնդակով՝ Աերոբ Աղբիւր, Հրայր Դժոխք ու Գէորգ Չաւուշ:

Արթուրան երազի մը է ինչպէր ինկած նահատակներու այս շարանին չափերաւոր բազմանքներ կապելու մղումը, ստիպուած ենք կրկնել, չի կրնար մաքուր խղճի մը թելադրութեամբ սեւագրուած ըլլալ:

Ինչ կը վերաբերի Աղաբաբեանի յուզած յենարանային հարցին, պիտի ըսենք, որ սուլթանական բռնակալութեան օրօք Դաշնակցութիւնը յատուկ յենարաններու պէտք չունէր, ամբողջ Հայ ժողովուրդը յենարան էր իրեն, որովհետեւ ինք միակ յենարանն էր Հայ ժողովուրդին, ներառեալ Փետայիներուն, ասոնց Փետայական սիրազորութիւնները թեւաւորող իր գաղափարականութեամբ, միջոցներ Հայթայթելու զոհարարութեամբ:

«Միւս գաղափարական էական շնչուր հայ ռանչպարներին քաղաքական կողմնորոշման, առասկան կողմնորոշման՝ դարձեալ պատմականօրէն հասարակ բացայայտումն է: Թուրքական յանութիւններին ենթակայ հայ զեղջուկները, բնականաբար, իրենց հայեացքն ուղղուած են դէպի Ռուսաստան, այդտեղից սպասելով փրկութեան լոյսը»:

Երրորդ անգամ ըլլալով կրկնենք, որ «Ռանչպարներ» վիպասը կ'ընդ-

զրկէր Օսմանեան Սահմանադրութեան նախորդող այն տասներկուամեակը, երբ սուլթանական բռնակալութիւնը հասած էր արիւնահեղութեան ծայրագոյն չափերուն: Բռնակալութիւն մըն ալ, ոչ անշուշտ նոյն չափով, չոքած էր Արեւելեան Հայաստանի վրայ: Պահր, ուրեմն, այնպիսին էր, որ հայ ժողովուրդը, առաւել եւս անոր ցաւերէն ծնած մեր յեղափոխականները կը զրտնաբերէին երկու կրակի միջեւ, ու կրակները, իրարու առհասարակ թշնամիներ ըլլալով հանդերձ, դաշնակցած էին մեզ ոչնչացնելու արիւնոտ պապականութեան մէջ: Այսպէս կ'ըսէ պատմութիւնը: Այսպէս վկայեցին հետագային նաեւ բանաստեղծները.

Սուլթանն ու ցարը
ձեռք ձեռքի սուլին
Միեւնոյն քուրթին...

Այդ պայմաններուն մէջ կա՞ր ուժ մը, որ բանչպարներուն սրտին քաղաքականապէս սնուցանէր առասական կողմնորոշումը: Նման կեցուածքի մը դժուար թէ հնարուար ըլլայ պատմական երաշխիքներ ճարել: Չկա՞ր:

Իրանչպարներուն հետապնդածը մարդկօրէն շնչելու հնարաւորութիւնն էր, աւելի մեծ բառով մը՝ Հայաստանի ազատագրումը, որուն համար Պաշտօնի Դաշտենց ցարական կայսրութեան սահմաններուն ձեռնառն որեւէ ուժ չէր տեսներ, ընդհակառակն, առ այդ պատուիրակութիւնները կը զրկէր զէպի Եւրոպա:

Մէջբերումը «Իրանչպարներ»էն է նորէն.

«— Տալտրիկի հայերը, Գեորգ Չաւաշի եւ Անդրանիկի անուամբ մի սոսիմիկ սասունցու՝ Մոսէ Իմային պատուիրակ եւ ուղարկում Եւրոպա, հայերին սուլթանի բռնակալութիւնից ազատելու համար» (էջ 76):

Երկու էջ անդին.

«— Մեմէ պատուիրակ եմէ Բիբիսի հեմանգի հայաւթեան կողմից, — ասում է Մոսէ Իման եւ սեւ արայի տակից մի քուրթ հանելով, երկարում է Անգլիայի քաղաքին, — մեմէ քիստանայ տղ իմէ, արքայ, ուզում եմէ, որ զուէ եւ Եւրոպական միւս վեց քիստանայ խառայները օգնէ մեզ տգտագրուելու սուլթանի լծից»:

Պատուիրակը, բոլոր պատուիրակներուն պէս, ձեռնուձեռն կը վերադառնայ, «սառը ջուր» կը թափէ յուսալառ սրտերուն, առիթ կը տրուի ձաղկելու եւրոպական պետութիւններուն ստան անտարբերութիւնը, բայց ենթականերէն օեւէ մէկուն մէջ չի սկօիբ ու չի զարգանար առասական որեւէ կողմնորոշում, ընդհակառակն, կ'ընդգծուի զուտ հայկական կողմնորոշումը, նոր թափ կը ստանայ յեղափոխական ըմբռնումը, աւելի հող կը շահի «Երկաթէ շերեփ»ին փիլիսոփայութիւնը. «Եւրոպայէն պարապ եւս դարձաւ մաքու մեր պատուիրակ Մոսէ Իման, որովհետեւ ձեռքին երկաթէ շերեփ չկար»:

Ուրե՞մն:

«Ուրեմն, ա՞րն է էլքը, Սասունի իշխաններ: Ձիմուե՛լ: Այժմ մեր միակ էլքը այդ է» (էջ 84):

Պաշտօնի Դաշտենց այս համոզումով, պատմութեան եւ այն օրերու հողերանութեան (գոտարներէն չկայ յոյս) հետ հաշտ այս կըսողով կ'ստաղնորդէ իր հերոսները, շարունակ թրթռացնելով անոնց արիւնը Հայաստանի ազատագրութեան երազով:

«Իրանչպարներ»ուն մէջ նոյնիսկ Ռուսաց Հայաստանի Հայերը առգորւած էին հայկական կողմնորոշումով եւ ոչ թէ առասական, ընդ որով խորհուրդը ճոյնն էր՝ Հայաստանի ազատագրումը:

«Օ՞, ի՞նչ խանգավառ օր էր, ինչ հրաշալի վայրկեան: Այդ աւագ եւ երիտասարդ գիւնուրակներին նայելով, ես նկատում էի, որ Ռուսաց Հայաստանում էլ կայ մի հերոսական սերունդ, եւ բոլորի խորհուրդը նայնմ էր՝ Հայաստանի ազատագրումը» (էջ 137):

Ռուսաստանը քանի մը տեղ եւս յիշատակուած է, բայց այդ յիշատակութիւններէն եւ ոչ մէկը հիմք կու տայ ռանչպարներուն մօտ ռուսական կողմնորոշման մը դիտար ընելու: Խաչիկ Դաշտենցի գործին ամբողջ երկայնքին այդ ուզողութեամբ ոգեւորուելու բացառաբար մէկ առիթ տրուած է միայն, «հայդուկային խմբի զազախարակամ առաջնորդ» Հրայր Դժոխքի բերնին գրուած սա պարբերութիւնը.

«Առլթանի դէմ կռուող հայդուկները, ասում էր «Քարայրը», իրենց յոյսը պէտք է դնեն իրենց եւ իրենց սեփական ժողովրդի ուժերի վրայ, կապուելով Ռուսներին կայսրութիւնը ստանալու եւ օրէցօր հզօրացող ռուսական յեղափոխական առողջ ուժերի հետ» (էջ 109):

Հարկ չկայ դարձեալ պրպտելու Հրայր Դժոխքի կենսադրականը, ընդգծելու համար, թէ իր էութեան ո՞րքան հարագատ է պարբերութեան առաջին բաժինին մէջ տրուած համոզումը, նո՞յնքան իր յոյսերուն անյարիր է միւս կէտին յայտնութիւնը:

Ռուսական առաջին (1905) յեղափոխութենէն առաջ նահապետուած (1904 Ապրիլ 13) Հրայր Դժոխքի բերնին գրուած նման բաւերը, գտահարար, Խաչիկ Դաշտենցի գրելով չեն սարքուած: Ատիկա, ամենայն հաւանականութեամբ, խմբագիրներու դործ է դարձեալ, ու խմբագիրներու մօտ նման գործը պատահական երեւոյթ չէ, արդէն բարբերու մօտ կը կազմէ, նոյնիսկ երգուած է, «խմբագիրներս են արեւ»...

Մարդ ստալինեան օրերուն կազմուած քննադատ պէտք է ըլլայ, կարեւար ոգեւորուելու համար մեռած գրագէտի մը ձեռագրին մէջ Հրայր Դժոխքի անունով սարքուած հակառոճանօթեան նման ներգրումներով: Առաւել եւս՝ քննադատ Սուրէն Աղաբաբեան, որ օանձարձակ վերաբերումներ թույլ տալու վարժութիւններ յայտնաբերած է ո՛չ միայն մեկնաբանական մարդին մէջ, այլեւ՝ չոր փաստերու առիթով, վաթսուհական թուականներէն սկսեալ:

Իր՝ Աղաբաբեանի մէկ էլոյթը քննարկելով՝ Գուրգէն Մահարի կը գրէր.

«Բայց ինչո՞ւ գարնանալ, որ բնադատը հանրայայտ մի դարձումով ռուսերէնից սխալ է թարգմանել, երբ նա տարրական վերնագրերը հայերէնից հայերէն ճիշդ չի արտագրել. այսպէս՝ նրա գրչի տակ գրակառուցելու Հրանտ Թամրազեանի «Գրական ուղիներում» գիրքը կնքուել է «Գրական գիրքերում» անունով, իսկ իմ յօդուածի «Այսպէս շարունակել չի կարելի» վերնագիրը դարձել է «Ձի կարելի այլեւս սպասել»:

Ճշգրտութեան հանդէպ այսքան անփոյթ գտնուող մարդը չի կրնար հարկու ուրիշը վստահեցնել, որ երբեքից կրնայ հաւատար ըլլալ ճշմարտութիւններ ստուգելու պարտքին մէջ:

Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարներ»ը ըստ կամս ստեղծագատող ու կողմնորոշող նոյն քննադատին առիթով ուրիշ բանաստեղծ մը, Վահագն Իսթեան, պիտի կատարէր փակագծեալ սա արտահանաչումը.

(«Մեր բնադատները ամէն բան անում են, որ չհաւատաս իրենց»):

Յաջորդիւ, «Ռանչպարներ»ը մեկնաբանող իր գրութեան վերջին մասին հետ՝ աւելի յստակ կ'ընծայուի որամբանութեան ու խզմտանք ըսուածին հաշիւ տալու պատասխանատուութենէն զուրկ Սուրէն Աղաբաբեանի քննադատական վարքին ուրուագիծը:



«ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ» (ՆԵՐՍԷՍ ՎԻՐԱՊԵԱՆ)

Ընթացիկ ստրուան կհունն (1978), Համազ-
գայինի ԷՎԱՆԷ ՄԷՔԵԱՆԵՆ ԵՎԱՆԵՆ յոյս տեսաւ
Ներսէս Վիրապեանի «Երկրորդ արաք» պատմը-
ւածքներու հատորը: Միջին ծաւալով եւ 228 է-
ջերէ կազմուած սոյն գործը կը բաղկանայ
«ՄՈՒՍԷ», «ԱՆԱՅԻՆ ԿՍՏԻՅՆ», «ԵՐԿՐՈՐԴ ԿՍՏԻ-
ՅՆ» եւ «ՎԱՐՈՒՅՈՒՅՆ» ենթախորագրերը կրող բա-
ժիններէ:

Հատորին «ՄՈՒՍԷ» կը բացուի «Սկիզբը» եւ
«Պատիկ զազգաբայ մը» խորագրուած յուշագրա-
կան էջերով, ուր Վիրապեան կ'անդրադառնայ
այն պայմաններուն, երբ նոր կը նետեր իր
սկզբնական բայերը շէպի գրական ապարկը:
Ան կը նկարագրէ մամուլի էջերէ երեւնալու իր
բուն փափաքը, իր առաջին սուղարուած գրու-
թեան ընկերացող առաջին ուրախութիւնը եւ ա-
ռաջին առաջապահը:

«Երկրորդ արաքը» տրգաթեր է երկու տար-
րեք միջավայրերու՝ Լիբանան եւ Միացեալ Նա-
տիւններ, որոնց ենթաձողին վրայ ծնունդ կ'առ-
նէ եւ կը գործեն Վիրապեանի ստեղծարարը:

Հատորին թեման առօրեայ կեանքն է, յու-
սաւոր թէ առեւտրու առեւտներով ծանօթ կեան-
քը, որմէ խայտարակտ պատասխանիք ցոյց կու
տայ Հեղինակը: Այսպէս, Նախնիներէն փոխանց-
ւած նախապարտմը, մարդու զգացական աշ-
խարհը, անոր սեռային մղումները, կարօքը հայ-
րենի հողին եւ այդ հողը կենսաւորող ազատու-
թեան, սիրային ապրումներու աշխոյժութիւնը եւ
կրօնուած առիթներու առթած ցաւը կը կազմեն
զուճարդիկ ճրճարճները յիշուի թեմային:

«Անային պատկերը» բովանդակող պատմը-
ւածքները՝ «Հարսիմ սուէք», «ԵՄԱ ամօք հղաւ»,
«Կեանքի ըմպիք», «ԵՆ ԵՆԻՆ ճննչ», «ԵՆ ԲԱՐԷ
յնձ» եւ «Այսինչին փեսան» վերջուած են Վիրապե-
անի նախկին շրջապատէն՝ Պէրուսթին, ուր ան
իրապաւտ զոյններով կը սրտակերպցնէ կարգ մը
անհիթիթ այլ ուշագրաւ ըմբռումներ:

Հանելիկի հիմնարկով մը՝ ան կը ներկայացնէ
որոշ մակարդակի կեներու ժօռ զեռ գոյատեւող
այն նախապարտմը, որ ընտանիքի մը կորուս-
եալ երջանկութեան վերահաստատումը կը պայ-
մանաւորէ հարսին մէկ ոտքը այրելու անհրա-
ժեշտ արարքով («Հարսիմ սուէք»):

Կը նկարագրէ այն հոգեւոր քորները, որոնք
յնայն իրենց մեղանշական կեանքին եւ թերու-
թիւններուն՝ ապախորտութեան կը փորձեն մզել
այն հիւանդ ներուհին, որ կը տեսայտի եղեմա-
կան կեանքը խորհրդանշող իր հայրենի կրօնա-
եալ ընդառառին կարտով, քան երկնային ա-
նեթելով իր ստատմաներով («ԵՆ ԵՆԻՆ ճննչ»):

«Երկրորդ պատկերը» բաղադրող պատմուածք-
ները՝ «Ջրոյց» օրուան քննադատ, «Week-end»,
«Girl Friend», «ԵՄԱՆ ՎԵՄԱՆ», «ՃՍԱՐ Եւ
զուտք մարդիկ», «Երկու սուրի միջու», «Փոր-
ձաւքեան յեռ», «Վերքը», «ԱՍԿԻՆԱՆՑ», «Յարու-
քեան օրը», «Սիրածիս մանչը», «Աստուծայ գո-
նը» եւ «Անային մտաբանը», իրենց շնորհրդած
թեմայով եւ ստղանակներով ծնունդն են ամերիկե-
ան միջավայրին եւ այդ միջավայրը յատկանշող
մտայնութեանց:

Արեւ-անմարտի Հոգեխառնութեամբ սուղար-
ներ են Վիրապեանի Հերոսները, որոնք կը տա-
րուներին զուարթ եւ տփուր վիճակներով բնօ-
րոշուած կեանքի զոյգ ծայրաբեւեռներու միջեւ,
ուր դրական ստեղծ կրեւոյթ մը իր ինքնութիւ-
նը կը գտնէ բացասական այլ երեւոյթի մը դի-
մաց՝ իր պայմանագրական հակադրութեամբ:

Այդ Հերոսները ընդլու աւրի միջեւ սաղ-
նապոյ անձեր են, հոգեբանական նշիչ մթնո-
շորտով մը տիրապետուած: Անոնք, իրենց վար-
քով թէ մտորումներով, սեփական ըմբռումով
թէ նախախորտութեամբ, անպիտակեց հարկադրա-
բով մը կը հակադրուին արտաքին թէ ներքին աշ-
խարհներէ եկած ամէն մէկ պարտադրանքներու:
Ճնշ մը կը զուարթեն իրենց անհատական եր-
ջանկութիւնը՝ ընտանեկան զատաբարկութեամբ
մը արմատազած կրօնա-բարոյական ըմբռումին:
Իսկ այլ տեղ, պարտադրարար կ'ողջկիզեն զա-
ցական ստեղծ ապրում մը՝ ներայնաբանային ան-
յայտ ուղիներով դիտակցուած այլ համոզումի մը
հաշտին:

Մոյն պարագան իր բնորոշ սահմանումը կը
գտնէ Վիրապեանի հետեւեալ խօսքերուն մէջ.
«Այս էր եղած կեանքը. երկու սուրի միջու մը-
նացած էի. ո՛չ այս կողմ կ'ընայի գալ, ո՛չ այդ
կողմ կ'ընայի երթալ, երկրագունդին ճամբ ձգ-
ղակումութեամբ ու բացազակաւքեան օրհնիքն էի
ենթակայ, ո՛չ Աստուծայ կրօնի մտնեալ, ո՛չ
այ ինտմայ ԱՍԿԻՆ»:

Նման հոգեվիճակ մը իր յուշագրին արտա-
յայտութիւնը կը գտնէ «Փորձութեան յեռ» պատ-
մըւածքով, ուր Վիրապեանի զգացական կարգ
հարեան սղկան՝ Քէթիին հետ ակնբարձրէն կը
բախի ընտանեկան դատախարակութեամբ մը իր
մէջ կաղապարուած անտարանական սկզբունքին:
Ամայազեց բարձունքներուն, գիշերային զրօսա-
պատյոյ մը Քէթիին հետ, զինք կը արմատաբ-
անորոշ վախի մը զգացումով: Թանկութեան հետ
կաղապարուած քրիստոնէական ըմբռումին մէկ
անդրադարձն է այդ զգացումը՝ ներքին ակնհա-
ծումով մը գրեւորուած: Այս պատճառաւ, Վի-
րապեան կը զգայ, թէ գիշերային զրօսապատյոյ
կը վերածուի խաչելութեան ճանապարհին, Քէ-
թիին՝ Սատանային, իսկ Աս Անհիլլոսի համայնա-
պատկերին բացաւող լեռնային ստաղալոյս խար-
հորդը՝ փորձութեան յերան...:

Ամերիկեան հետզհետէ վատթարացող բարե-
րուն դիմաց, հայրենիքի իրականութեան եւ ծա-
լումի վտանգին միջեւ տարուբերող աշխատանք

մըն է Օննիկ: Գործարանին մէջ, Միացեալ Նա-
ւանդներու անկախութեան աստիճանի նախոր-
եակը անոր համար ուրախաբար երևոյթ մը ըլ-
լալէ աւելի, խորհրդածութեան մտոյ ցաւասանը
աւիթ մըն է՝ կրտսած անկախութեան մը ի
հնգիր (eS)ուր եւ զուարթ մարդիկ...):

Անորջ կացութեան մը մասնուած, բախտին
զանազան եւ նախադրի աստիճանի մէկ
անորիութեան զոհերն են Վերապահի հերոսնե-
րը: Անոնք թշուառ կը սիրեն եւ կ'ըմբռնեն
կենսոյն, մինչև իսկ իրազայտ մերկութեամբ,
այսուհանդերձ, ազելունջ երջանկութեան մը
բախտորոջ մէկ հանգրուանին եղբարական նախա-
դարձանութեամբ մը կը դիմակայեն բացա-
ռական միւս հանգրուանը կենսոյն: Այսպէս, իր
հօր անդրդուելի համոզումին պատճառաւ, թէ
ժառ տաննէն աշխարհի վերջը պիտի գայ ըստ
սուրբ գրային անհերքելի նախաստութեանց՝
Լեննա կը զրկուի իր սիրտը դարձնելով՝ Վա-
թրիքի կապուելու անզուպ փափագէն (Վեր-
ջը...):

Իրենց երիտասարդական շրջանին, ամուսնա-
կան ամէն առաջիկ տեսնութեամբ մերժած եւ
ժամանակի աննշար հոլովոյթին հետ ծերութեան
սեւը թուակոխած երկու օրիորդներու հոգեկան
անամոք ցաւը կը բերէ վկայութիւնը եղբարական
այլ ճշմարտութեան մը (Վենիկամոնց):

Իր ժօր կրօնական նեղմիտ բժշկութեան
ակամայ զոհն է այն հայ սուսանդուհին, որ կը
վարէ դժնշակ կենսոյ մը, պարտադրաբար ս-
մուսնանալով իր խանութանին եւ մակարդակին
խտոր համեմատող ստաբիլի, այլ ազէտ Համ-
բարին հետ (Վաստուոյ գոնք):

Վերոյիշեալ եւ չիխտակուած այլ զոհերու
դարձան, որքան հետեւանք է կենսոյ մէկ
վճարական շրջանին տիպարի մը որդեգրած կեց-
ւածքին եւ զգացական տուեալներով հիմնադրու-
ած անօր որոյումին, նոյնքան եւ արդիւնքն է
նախադարձի մը անօրոջ թելադրականութեան:
Այս առնչութեամբ, յատկանշական է Վաստիմ
Յոտարանք խորագրուած պատմութեանը, ուր
Վերապահան սիրոյ առաջին հանդիպումով մը ի-
րազործուած ամուսնական կարճատե կենսոյ մը
կը ներկայացնէ՝ նախադարձաբար ըմբռնութի
մը մասսեանութեամբ:

Հատորի աստիճան, Վարագայրը կը փակ-
ւի Վերապահին կ'անդրադառնայ զէպի Հայաս-
տան իր կատարած ուղեւորութեան: Հայաստանի
հողին, քարին, նորոգ թէ հին նաւանումներուն
իր հնացումը յայտնելէ հաջ, հեղինակը կը հա-
ւատարմադրէ, թէ Հայաստան իր համեայ եւ
հարազատ ատենն է՝ Օլակահի մասունքներով նը-
ւերագրութեամբ...:

Հոգեանական յաջգրով մը իրազործուած
Վերապահի արարքի հերոսներէն իւրաքանչիւրը կը
ներկայացնէ առեւալ դարադայ մը, որուն զրգա-
պտեմանները կը բխին հետաւոր թէ ժօրիկ անց-
եալի մը ցուտութի մէկ կացութենէն: Վերապահ

լի ձգտիր այդ կացութիւնը իր բուն նկարագրի-
րովը ներկայացնելու առաջադրանքին, այլ պար-
զապէս դիտարկութեամբ ունի նկարագրական
բնորթով մը դրսեւորելու գոյն՝ արտաքին երե-
ւոյթներու յարաբերական նախադրեցութեամբ:
Այսպէս, եթէ զարդանայ տուեալ վիճակ մը թէ՛
համեմատական խորութեամբ եւ թէ՛ հետազայ
անդրադարձումներու լայն սեւեռումով մը, զու-
ցէ կարգ մը տիպարներ տեղ-տեղ շտապունէն
կրտարական ներկայութեան:

Այսուհանդերձ, իր տիպարներուն ընդմէջէն
Վերապահ կըցած է առլ տեսարի աչկոն նե-
րաշարհը, զոր ան կը վերադրէ սխալ մեկնա-
բանութեամբ մը սերունդէ սերունդ փոխանցուած
կրօնական դատախարակութեան: Թէ՛ պարտադիր
համոզումներով անձն եւ անձն անհատը ի վեր-
ջոյ կը դառնայ անդիտակից զոհ բարագոյթներու,
որոնք կը ըլլան իր մէջ նախամեծնութեան ա-
մէն ողի եւ զգացական ամէն մէկ երեւոյթ թու-
կան ընկալութեամբ մը դիմախալու ամէն վըճ-
նականութիւն: Այս պատճառաւ, սիրոյ առաջին
հանդիպում մը, որոջ փորձատութենէ մը հաջ,
կը փոխակերպուի ուշ կամ կանուխ աղանդա-
յին դառնութեան: Վկայ, հատորին լուսագոյն
կտորները հանդիսացող Վերագոյթան լինա՞,
Վերգոյթ եւ Վաստուոյ գոնք պատմութեանինը,
ուր Վերապահան ցաւազին չքննադատով մը կ'ը-
նէ... Վերագոյթի քի թմու Աստուոյ մասին լսած
ըլլալինմէ, մեծ մեկի հետ ըլլալինմէ միացնա:
Հիմնական այս ցաւն է, որուն շուրջ կը զանազ
հատորի թեման:

Իր ամբողջութեան մէջ Վերագոյթի արարքը
կենսանի զործ մըն է, օտուած ախտի գոյնե-
րով եւ անմիջական հազորդականութեամբ: Շը-
նարհիւ Վերապահի մաքուր եւ խնամուած լեզ-
ւին, պատմութեաններու սոյն հատորը կը փոխա-
ցէ յնթերցողին իրազայտ ապրումի մը մէկ վա-
յելքը:

Ուշադրաւ երևոյթ մըն է հեղինակին ան-
կեղծութիւնը: Ան կը դրսեւորէ իր զգացումները
անկեղծ խոստովանութեամբ, իրենց բնագրային
հարազատութեամբ եւ բնազայտ զեղումով:

Վերապահան ունի պատմելու իւրաքանչիւր
նոր եւ տուեալ մասնում մը իր հիմնական աստ-
բազելներով փոխանցելու համապատասխան ճա-
շակ: Անոր նկարագրած գործողութիւնները կը
թաւային ներդաշնակ հանդիտութեամբ, առանց
կատարելու անհարկի դեղերումներ՝ ոչ-յարակից
հարցերու եւ խորհրդածութեանց կառուածին
ներս:

Հատորին զիտուր յատկանիւններն մէկը,
եթէ ոչ էականը, հիմնուրն է անկասկած, որ կը
յատկանշուի տաղնապալի վիճակները բարեխառ-
նող բարեբար ներգործութեամբ:

Վերագոյթի արարքը երկրորդ օղակն է ներքին
Վերապահին գրական հանգրուանային նուաճու-
մանում...:

Թ. Մ.



Վերջին տասնամյակներում օտար ժողովուրդներու մէջ շատ տարածուած մշակութային ձեռնարկներն մէկը եղաւ զիրի՛ ցարգսանդէտը, որուն օրինակը մեր մէջ առաջին անգամ փորձուեցաւ 1877ի ամառամասին, Գիւլիկոյ Կաթողիկոսութեան նախաձեռնութեամբ եւ Կաթողիկոսարանի շրջափակէն ներս, իսկ երկրորդը իրազօրուեցաւ սոյն տարուան Հոկտեմբերին, Թարգմանչաց տանին տաքնիքի:

Ինչպէս առաջինին՝ նաեւ երկրորդին իրենց մասնակցութիւնը բերած էին մեր զաղաքի հայկական բոլոր հրատարակատուները՝ վերջին երկու տարիներուն լոյս ընծայուած հատորներով, եւ դրասէր ընտիր հասարակութիւն մը, որ խոր դոճունակութեամբ նետուեցաւ ձեռք բերուած իրախուսիչ արդիւնքներուն: Հանդիսատեսներուն հրճուանքը աւելի մեծ եղաւ մանաւանդ այն պահուն, երբ Գարեգին Բ. Կաթողիկոսի խօսքն իմացաւ, որ Կաթողիկոսարանի ապարանը տարեմուտն առաջ հրատարակելու հը հանէ Յակոբ Սլախանի գլխաւորակցութիւնը եւ իրախուսութեամբ շատորը, իսկ յաջորդ տարուան ընթացքին լոյս պիտի ընծայէ նոյն շարքին յաջորդ երկու հատորները՝ ութերորդ եւ իններորդ:

Հայ գիրքի երկրորդ ցուցանակներն՝ Գարեգին Բ. Կաթողիկոս գիրքի ստեղծման խորհուրդին ու մեր իրականութեան մէջ կատարած ու կատարելիք գործին մասին արտասանելու ոգիւնը իրօք մը, որմէ զտե՛ր մը հատուածներ կը յանձնենք ընթերցողին ուշադրութեան:

Գ Ի Բ Ը՝ Պ Ա Տ Ի Խ Ն Մ Ա Յ Ո Ւ Ն

Ահա ԳԻԲԸ, ԳԻԲԸԸ եւ ՄԱՄԳԸ՝ հայ մարդը:

Գիրքին ծնաւ գիրքը՝ ԱՍՏՈՒՍՄԱՇՈՒՆՁ ՄԱՏԵԱՆԸ: Գիրքով բարձրացաւ հայ մարդը: Գիրքով ծաղկազարդուեցաւ հայոց երկիրը: Եւ այդ օրէն մինչև այսօր դարերու ճամբաներով, քաղց այդ գիրքը եւ մշտնջենարուք շունչ առաւ հայ մտքին ու սրտին: Հայուն կեանքը իր բոլոր կողմերով, տաղանայաներով թէ՛ նուաճումներով, արտաձեւութեան հովիտներով թէ՛ ուրախութեան բարձունքներով, անմահութեան ուրբային մէջ ծաղկեցաւ, որովհետեւ Գիրքը Գիրքով դարձաւ շղթայ՝ անխզելի, դարերն ու աշխարհները, մարդերն ու սերունդները իրար միազանդելով:

Որհուսած մտածումը, յղացում ձգտումը, ապրուած վաղափարականը, իրադրժուած արժէքը, սիրազօրծական արարքները ժամանակի սպառող ժանդէն վե՛ր մնացին գիրքի ոսկիին փայլովը, զուրս եկան ժամանակի եւ տարածութեան կապանքներէն եւ լեցուեցան հայ ազգի (եւ՝ մարդկութեան) սերունդներու գիտակցութեան մէջ ու մնացին այնպէս իրրեւ յուշ ու պատգամ: Անոնք խառնուեցան շարունակուող եւ անոյ սերունդներու նո՛ր ապրումներուն, նո՛ր պայքարներուն հետ եւ եղան պատմութիւն, կերտեցին պատմութիւն: Գիրքով դարձան անի՛ւ քաղաքակրթական մեր գնացքին:

Հայաստանեայց Եկեղեցին շարունակեց Գիրքի իր սպասուորութիւնը Մահակ-Մեքրոպեան ոճով: Գիրքը եղբայրացաւ Պալին հետ: Գիրքը դարեր շարունակ եղաւ Աւետարան: Վանքը՝ դպրոց: Վարդապետը՝ վարժապետ: Վանականը՝ գրիչ: Վանատունը՝ մատենադարան: Գանձատունը՝ ձեռագրատուն:



Բայց չի՛ բուեր գիրքը հեղինակել եւ գիրք հրատարակել: Ձի՛ բուեր

գիրքերը գրեցի գրատուններու մէջ: Գիրքը չէ եղած շտեմարանին կամ Թանգարանին համար: Գիրքը պէտք է փոխադրել տո՛ւն, դնել սեղանի վրայ, կարգալ, վայելի, ըմբռնել եւ, մանաւանդ՝ այս դառն օրերուն, զգալ անոր քաղցրութիւնը ճառասել քան դիտորիս մեղու: Գիրքին տեղը գրատունը չէ՝ ոչ ալ մասնաւորաբար: Գիրքին բուն տեղը հայ տո՛ւնն է: Գիրքին տէրը սոսկ հեղինակը կամ հրատարակիչը չէ: Գիրքին բուն տէրը հայ մարդն է, հայ ընտանիքը, որուն համար կեանքի կը կոչուի գիրքը իբրեւ աղբիւր ապրումներու, զաղափարներու, զաղափարականներու, ձգտումներու, ծանօթութիւններու: Գիրքը աղբիւր է, այո՛, եւ մենք՝ սափօր: Գիրքէն լո՛յս կը ծագի, մենք ա՛յլ պէտք է ըլլանք՝ առնելու համար այդ լոյսը եւ մեր տուններուն մէջ զայն սերտանելու համար ընտանեկան՝ ճրագի:

Այս ճշմարտութիւնը ու դիտակցութիւնը մեր ժողովուրդին մէջ արթուն պահելու համար է կազմակերպուած այս ցուցահանդէսը: Որքան ալ դժիմ է ու նահմ ըլլան օրերն այսօր Լիբանանի մէջ՝ Հայ Գիրքին վրայ ըստե՛րն ու փոշին Թող շնտօին ու ամպ եւ խաւ չկապեն: Մեր հողեկան եւ ազգային սովորութեան ժայռանման կռուանն է եղած մշակոյթը առհասարակ եւ դրականութիւնը՝ մասնաւորապէս: Մեր պատի՛ւն է եղած Գիրքը: Բարձր պահենք այդ պատիւը, մեր անունին պէս:

Այս ցուցահանդէսէն շէք կրնար մեկնել առանց մեր մէջ խորացնելու, մեր արեւնին հետ խառնելու այս դիտակցութիւնը: Հայ գրականութեան սպասուողները հերոսական սպիտակ տէր մարդեր են: Հայ գրականութիւնը, մանաւանդ այսօր, Սփիւռքի մէջ հերոսութիւն է: Եւ այն ազգը, որ կը մոռնայ իր հերոսները, ինք կը հողանայ, մինչ իր հերոսները կ'երկնայնանան, ինք կը խաւարի, մինչ իր հերոսները, «խաւարի անդիտութեան դէմ մարտնչողները» լո՛յս կը գրկուեն Երկինքի մէջ...:

Պուարին ծախուած խաւարաճիտ մարդիկն են միայն, որ գիրքին արժէքը կրնան անտեսել: Ղազար Փարպեցի խօսելով Մովսէս Փիլիսոփային (յստ հաւանաբար՝ Պորենացիին) մասին, սքանչելի բառ մը կը գործածէ, որ կ'ուզենք որ այսօր դրոշմուի մեր մտքերուն մէջ իբրեւ պատգամաբեր բառը այս ցուցահանդէսին.—

Իր առ Վահան Մամիկոնեան ուղղած թուղթին մէջ, երբ կը նկարագրէ, թէ ինչպէս խաւարածիտները, ոսկեղարու հողին իրենց հողիններու մէջ փոխադրելու անատակ եւ ողորմելի հակառակորդները Սահակ Մեարոպեան սերունդին, կը հալածէին այդ սերունդի պայծառ դէմքերէն Մովսէս Փիլիսոփայն, չէին բաւականանար միայն անձը հալածելով, այլ անոր «ԼՈՒՍՍԻՈՐԻԶ ԵՒ ՏԳԻՏԱՀԱՆՄԱՆ» գիրքերը կ'արհամարհէին:

- Այո՛, Գիրքը կը լուստուրէ...
- Այո՛, Գիրքը անգիտութիւնը կը հալածէ...
- Մե՛նք պիտի «հալածենք» գիրքը մեր անտարբերութեամբը, թէ՛ Գիրքը իր լոյսով պիտի հալածէ մեր մէջէն անդիտութիւնը:
- Տարէք Գիրքը ձեզի հետ իբրեւ
- ԼՈՒՍՍԻՈՐԻԶ ԵՒ ՏԳԻՏԱՀԱՆՄԱՆ ուժ ու գանձ:

ԳԱՐԵԳՐԵ Բ.
ԱՌՈՌԱԿԻՑ ԿԱՌՈՂԻԿՈՍ

ՄԻԼԱՆ ՔԻՆՍԵՐԱՅԻ ՊԱՐԱԳԱՆ

Ձեռն գրող Միլան Քինսերայի իր հայրենիքի իշխանութիւններէն ստացաւ 24 Օգոստոս 1979 թուակիր հրամանագիր մը, որ կ'ընտանէր իրեն, թէ զրկուած է չեխոսյովարեան քաղաքացիութենէն: Իշխանութիւնները իրենց մեղադրանքը կը հիմնադրեն առ հարցադրոյցին վրայ, զոր զրազեալը ունեցած էր «Նուվել օպերպարտը» հանդէսին հետ, 10 Հոկտեմբեր 1978ին, եւ կ'անդադուեար զՔինսերայի շաւէրքը անուն իր գործին, որ կը յարձակէր իր երկրին վարչակարգին դէմ եւ կը բովանդակէր Խորհրդային Ռուսիոյ հետ միջազգային յարաբերութեանց շահարուն միասոյց ակնարկութիւններ: Իրականութեան մէջ, Քինսերայը տուեալ հարցադրոյցէն չէր ծագեր, այլ՝ Քինսերայի հրատարակած «Նոնալի» եւ «Մաքսուրիան» մատենաը անուն գործին մէջ հաստատուն վաղաժամական էութիւններ:

Հրամանագիրը կը մեղադրէ Քինսերայն ուրիշ հարցադրոյցի մը համար եւս, որ ըստ տեսու 19 Յունուար 1979 թուակիր «Էլ Բանտի» մէջ, որ զրազեալը արտայայտուած էր «Նայն եզանկար»-ի: Իր շնորհից հարցադրոյցին մէջ, Քինսերայ ծանուցած էր այն ժամը, որուն պատարտուած էր մշակոյթը Չեխոսլովակիոյ մէջ եւ հաստատու էր այն իրողութիւնը, որ իր հայրենիքը, իր խորունկ արձաններով՝ կը պատկանէր «Վերադարձի», եւ ոչ թէ Արեւելի:

Գրազեալը, որ անուրանալի դեր մը խաղացած էր իր երկրին մտաւարական զարթոնքին մէջ, չորս տարիներ է վեր հասցրել Ֆրանսայի մէջ, Բէնի համալսարանին մէջ աւանդելով բազմաթիւ դասընթացներ: Ան հետագային իր երկրին (որ Փրակայի Գարունն է վեր ունի կ'ընար հրատարակել) բոլորովին օրինական պայմաններու տակ, իրեն երկու տարի դուրսը ապրելու արժանութեան շնորհով իրաւունքով: Այս իրաւունքը նորոգուած էր, իսկ ասկէ առի մը առաջ, իր անցողիկ արուած էր զաղթականի կնիք մը:

1929ին ծնած Միլան Քինսերայն ունեցաւ վերիվայրուածներով հարուստ կենսադրական մը: Կնանկուածքով ետուն, խելացի եւ հանրային շահագործութիւններով օժտուած՝ ան շատ երիտասարդ տարիքին մտաւ համայնաժամար կուսակցութեան շարքերը եւ շատ կանուխ ինքնիշխան զգացածու աշխարհի մը մէջ, որ զուգահեռ անդի ունեցած էրք եւ իտալաց աստեղուած պետական կրթութի մը տակ: Բախումը շուշուրայ, հետանալով կուսակցութիւնէն արտաքուստ, 1951ին, որմէ ետք արդիւնաւոր իրեն հրատարակուելու, մինչեւ միջառնական թուականներու երկրորդ կէտը, երբ որով յարմարութիւններ տեղի ունեցան իր հայրենիքին մէջ: 1967ին, Փրակայի մէջ լոյս ընծայեց իր առաջին վեպը՝ «Ջուարնան» («Plaisanteries»), որ համարեցաւ «Փրակայի գարնան» ուժգին նախերգանքներէն մէկը: «Ջուարնան»-ը, որ 1968ի աշնան թարգման-



ւեցաւ Ֆրանսերէնի, մէկ օրին միւսը համալսարանային համբաւ մը ապահովեց Միլան Քինսերային: Անոր յառաջարակը ստորագրած Լուի Արալիս կը գրէր. «Մէկը դարաշրջանի մեծագլմ վեպիւն, որ կ'ընծայէ այն բանալի, զոր պատմութիւնը կ'անցիտանայ ու կը պարսկէ»: Իր այդ վեպով Քինսերայ կ'աղադրարէր վախճանը սերունդի մը պատրանքներուն, իր սերունդին, որ 1948 Փետրուարին անհաճման յոյսով մը յարեցաւ ընկերգրութեան:

«Ջուարնան»-ին Ֆրանսերէնի վերանուած տարին, Ֆրանսայի ամենէն աւելի ընթերցող ունեցող քննադատներէն Քլոտ Բուս, «Նուվել Օպերպարտ»-ի մէջ յորս սրնակի վրայ վերլուծել էր ետք Քինսերայի գործը, ընթերցողներուն ուղղելով խօսքը, կ'ըսէր.

«Երբ դառն շատ գիրք կը կարգաւ, բոլոր «Ջուարնան»-ը ըլլայ առաջինը: Երբ մէկ գիրք պիտի կարգաւ այս տարի, բոլոր արագա կը մազթեմ, որ անկիւս ըլլայ Միլան Քինսերայի «Ջուարնան»-ը, երբ դառն գիրք կարգաւ չէ, կ'աղաչեմ, որ անկիւս բացառութիւն մը ըլլայ մեր շատ խնդուած օրերում մէջ»:

«Բագին» ծառէն հետեւած է Քինսերայի ջայիկուն եւ իր թղթածրարին մէջ անոր մասին ունի հետաքրքրական նիւթեր, ի շարք որոնց շնորհով զրոգներու հիմնարար համազուտարին արտասուած իր խօսքը՝ «Մշակոյթ» եւ ազգային գոյնութիւն, եւ անցեալ տարի «Էլ Բանտի» շնորհով իր զրոյցը: Մեր ըմբռնումներուն ու մասնագութիւններուն հետ հասարակաց բազմաթիւ կետեր բովանդակած ըլլալուն համար՝ այս երկուքը յարմար տարի թարգմանարար պիտի ներկայացուեն ընթերցողին:



ՆՈՐԻԿԵԱՆԻ ԿՐԱՒԻՐՆԵՐԸ

Նորիկեանի կրաւիրներու հաւաքածոն: 47 կտոր:

1963էն 68է մինչև իրազործուած այս վիճակագրութիւններուն հրատարակութիւնը «Պար» հրատարակատունէն, արիթը կու տայ մասէն ծանօթանալու արուեստագէտին ներքին աշխարհին:

Իրա անկեղծութեամբ մը կը հետազոտուի անձկութիւններու մէջ ազդող եւ յաճախ կորսուած ժարգոյ աշխարհ մը, ինչպէս եւ կը բացւին նուրբ յարաբերութիւնները ժարգոյ եւ իրենց շրջապատին: Աջորհալիքը ըլլան անոնք, կիներ, մանուկներ թէ խամաճիկներ, ժամանակէն զուրս դանուող կամ ներքին ժամանակին պատկանող էակներ են այս կերպարները, որոնց ասրիթը զժուար է ճշգրիտ:

Այս է քննան կամ աշխարհը Նորիկեանի ներկայացուցած գործերուն:

Իսկ կրաւիրի նկարագրիչն բխած սեւի ու ճերմակի հակադրութիւնը, աւելի բացորոշ եւ զուսպ կը զարձակ կերպարներուն գտնու կացութիւնը:

Ժան-Լիւի Մերսիէ իր ներածականին մէջ կը փորձէ փոխանցել ճիշդ այս միջոցառումը, ինչպէս եւ ընթերցող-գիտողը ծանօթացնել Նորիկեանի ընդհանուր արուեստին:

ՄՐՅԱՆԱԿԱՅԻՆ ԲԱՐՔԵՐ

Իր յայնարեւոյտ երիտասարդ հեղինակներէն Ժերար Փիւսէի «Ներքին մարդը» անուն վեպը ներկայացնող յօդուածի մը մէջ, Ժնըպիէն Տորման, կը խօսի գրական դասակարգերու առջնադաս երեւոյթներու մասին, որոնք հետազոտողական պատկեր մը կը ներկայացնեն, չբացուած համար ոչնչացական, գրականութեան մէջ սուն սեղ եղած խորթ բարբերուն համար մասնաշաղկապ:

Ամէն ասրի, — կ'ըսէ Ժնըպիէն Տորման, — Սեպտեմբերէն սկսեալ, գրական ճնարարաններու ընկարանները կ'ողողուին գիրքերու յորձանգներով, որոնք կը խուճեն ամէն օր, երբեմն սասնակներ հաշուող կապոցներով: Ինչո՞ւ: Անոր համար, որ գրական ժրջանակներու ժամանակը կը ծանկնայ, եւ հրատարակիչները, որոնք թուղթի վաճառականներ են, կը փորձեն սառլ զրէլ հեղինակները... Ասոնք, իրենց ակունքը արած՝ ակնկառուց կը սպասեն մեծ նուէրներուն: Կը դարձան զատկազմի անգամները, կը հրօշիւրեն զանոնք, կը արքան գիծիք սեղաններ, պատշաճ կը հանեն ակադեմիաները եւ Քիմիանքի տիկիներուն կը ներշնչեն այն հաւատքը, որ իրենք՝ տիկիները, միշտ զստն սարեկան են...

Միւս կողմէ, ուսարկայական ստուճով՝ զընապաստերը շնն կըմար մարտէլ հակայ քանակը էջերուն եւ կը կարգան ու կը խօսին միայն անոնց մասին, զորս կը հանձնան, միւսները լքելով մոռացութեան ծոցը: Այս պայմաններուն տակ ընթերցողները, հրատարակութիւններու զանգուածային հոսքին մէջ իրենք եւ խեղդուած՝ կրնան անձանթի մը գիրքը կարգաւոր զարգացող ունենայ:

Ամէն ասրի, երիտասարդ վկայագիրները, որոնք անխոհեմութիւնը կ'ունենան սեպտեմբերեան այս յորձանգին խոտնուելու՝ կը դառնան նոյն յորձանգին զուկեր: Մինչև իսկ եթէ ոքանչեւ ըլլան իրենց գիրքերը՝ կը մնան անձամար: Այս պայմաններուն մէջ էր, որ ես պատահաբար յայնարեւոյտ քանակի վէպը երիտասարդ անձանթի մը՝ Ժերար Փիւսէի, խորագրերը՝ «Ներքին մարդը»:

Ժերար Փիւսէի մասին շատ բան չեմ գիտեր, գիտեմ միայն, որ երեսուն տարեկան է, ամուսնացած, եւ սեւի զուսպ մը: Իր սառլին վէպը՝ «Վիզակ Ափրիկի» մէջ, ստացաւ «Առաջին վէպ» մրցանակը, երեք հազար Քրանք: Գիշերը, հիւանդանոցի մը մէջ, ան կը պարտալի անկզ գործելով, իր կենսը շահելու եւ կարենայ գրելու համար ցերեկը:

Վստահաբար, այս ասրի ժրջանակ պիտի շատանայ: Իայց անոր զօրքը անպայման պիտի զսակուէր, եթէ զոյութիւն ունենար Մարտէլ Էմէի, Ամիէի, Պլոմպէի, Վիլյուի, Մորանի եւ Ժերարի սարուականներուն ժամանակագրութեամբ սառլացած գրատակազմ մը:

ՇՆՈՐ ՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ԱՏԱՑԱՆՔ

Ջեռնալը կ ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ, Գարեգին Բ. Կաթողիկոս,
Ամբիլիաս, 1979

ԳԻՐՔԸ՝ ՊԱՏԻՆ ՀԱՅՈՒՆ, Գարեգին Բ. Կաթողիկոս, Ամբիլիաս, 1979

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ,
Գևորգ Մեսրոպ, Ամբիլիաս, 1979

ԾԻՄԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ, Մաղաբիա Արքեպս. Օրմանեան, Ամբիլիաս, 1979

ՈՐՍՈՐԳԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ (պատմութեամբ), Հայկ Նազգաշեան, Պէյրուք,
1979

ԺԵՏՈՒԱԾ ԿԱՌՈՅՑՆԵՐ՝ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԸ ՍՓԻՒԹՈՒՄ, Կրատարակու-
քիւն Իֆոմի, Վեներիկ, 1979

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԳԱՅԼ ՎԱՀԱՆ
ՀԱՍԿՑՈՂԻՆ ԾԱՏ ԲԱՐԵՒ
(ԱՌԱԿՆԵՐ)

Կողմ էր Եկարագարդում
Տիրու ԱճէՄԵԱՆ

ՀԱՍՑԻ
KAYL VAHAN
B. P. 4176
Beirut — Lebanon

296898

REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

P A K I N E

REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

296898

2010-10-10
2010-10-10
2010-10-10